



## Ջիաց մեր հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ, ՄԱՐՏ 2018

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան  
ընթերցումներ և հոգևոր խորհրդածուծիւոններ

**ԻԸ ՏԱՐԻ**

**Ա. ԵՌԱՄՍՅԱԿ**

Մեր խորին շնորհակալուծիւոնն ենք հայտնում Radio Bible  
Class ընկերուծյանը, որի թույլտվուծյամբ Our Daily Bread  
գրքուծկից թարգմանել ենք հաջորդ էջերի  
խորհրդածուծիւոնները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցուծիւոն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցուծյան  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլիոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

## Դարձյալ սկսել

**Դ**եկտեմբերի վերջին, Ս. Ծննդյան տոնակատարությունները ավարտելուց հետո, իմ մտածումները հաճախ կենտրոնանում են Նոր տարվա վրա: Մինչ իմ գավակները դպրոցական արձակուրդում են, ու մեր առօրյա ծրագրերը դանդաղում են, ես ետ եմ նայում՝ ճշտելու, թե անցյալ տարին ինձ ուր է հասցրել, և ուր հույս ունեմ, որ կհասցնի ինձ Նոր տարին: Այդ խորհուրդները երբեմն ցավով ու զղջումի հոգով են գալիս՝ անցյալում իմ արած սխալները տեսնելով: Սակայն Նոր տարին սկսելու նոր հեռանկարը ինձ լցնում է հույսով ու ակնկալություններով: Զգում եմ, թե առիթ ունեմ դարձյալ սկսելու, հոգ չէ թե ինչ է եղել անցյալ տարվա մեջ:

Դարձյալ վերսկսելու մեր ակնկալությունը ոչինչ է՝ համեմատած Իսրայելի ժողովրդի ունեցած հույսի հետ, երբ Պարսկաստանի Կյուրոս թագավորը թույլ է տալիս, որ նրանք իրենց հայրենիքը վերադառնան՝ Բաբելոնում երկար տարիներ գերությունից հետո: Թեև նախապես Նաբուզոդոնոսոր թագավորը աքսորել էր Իսրայելի ժողովրդին, Տերը հրահանգում է Կյուրոսին, որ նրանց Երուսաղեմ ուղարկի, որպեսզի Աստծո տունը վերաշինեն (Բ Եզ. 1.2-3): Կյուրոսը նաև նրանց ետ է տալիս տաճարից գրավված բոլոր գանձերը: Որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ՝ նրանց կյանքը վերսկսվում է իրենց գործած մեղքի պատճառով երկար տարիների կրած տառապանքից հետո՝ Աստծո խոստացած երկրի մեջ: Կարևոր չէ ինչեր են եղել մեր անցյալում. երբ մեր մեղքերը խոստովանում ենք, Աստված ներում է մեզ ու դարձյալ սկսելու առիթն է տալիս:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ Քո տված շնորհքի, ներումի ու վերստին սկսելու առիթի համար: Ուզում եմ ավելի մոտիկից քայլել Քեզ հետ գալիք օրերում: Ամեն:

**Աստծո շնորհքը մեզ նոր սկիզբ է պարգևում:**

### Կարդա՛ր Բ Եզրաս 1.1-11

...ու բոլոր նրանք, ում ոգին զարթնեցրել էր Տե՛ր Աստված՝ վերադառնալու և Տե՛ր Աստծու տաճարը Երուսաղեմում կառուցելու համար: Բ Եզ. 1.5

## Հետապնդել

**Ե**րբ քայլում էի գրասենյակիս կողքով, հիացա գեղեցիկ ծաղիկով, որ դուրս էր եկել կրածույլ սալահատակի ճեղքից: Հակառակ շուրջի աննպաստ պայմաններին՝ ծաղիկը արմատ էր նետել այդ չոր ճեղքի մեջ ու աճել: Հետո նկատեցի, որ ճիշտ վերևում գետեղված ջրի գործիքը ջուր էր կաթեցնում նրա վրա ամբողջ օրը: Այդ անհարմար տեղում ծաղիկը ստացել էր իրեն պետք եղած օգնությունը վերից եկող ջրից:

Քրիստոնեական կյանքի մեջ աճելը կարող է դժվար լինել, սակայն երբ Քրիստոսի հետ հարատեենք, հնարավոր կլինի բոլոր խափանումներին հաղթել: Հանգամանքները կարող են ի նպաստ մեզ չլինել, ու վհատվենք:

Սակայն եթե մենք հետապնդենք Տիրոջ հետ մեր հարաբերությունը մշակելուն, պիտի կարողանանք աճել այդ անհույս ծաղկի նման: Սուրբ Պողոս առաքյալը նման փորձառություններ ունեցավ իր միսիոներական ծառայությունների ընթացքում: Հակառակ իր կրած տաժանքներին ու դիմազրաված մարտահրավերներին (Բ Կորնթ. 11. 23-27)՝ նա բնավ տեղի չտվեց: Նա գրեց. «...Ձգտում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչպես որ հենց Քրիստոս Հիսուսն էլ հասավ ինձ... Հետևում եմ դեպի նպատակը՝ Հիսուս Քրիստոսով Աստծու վերին կոչման մրցանակին» (Փիլ. 3.12, 14):

Պողոսը իմացավ, որ ամեն բանի ընդունակ է Նրանով, որ իրեն է զորացնում (4.13): Մենք էլ կարող ենք հետևել Նրա օգնությամբ, որ մեզ զորություն է պարգևում:

**Աղոթք** - Հայր, այս է այն օրը, որ Դու ստեղծեցիր: Շնորհակալ եմ, որ մոտս պիտի լինես, ինչ վիճակում էլ լինեմ: Ամեն:

**Աստված պարգևում է մեզ հարկավոր զորությունը՝  
հետևելու ու աճելու:**

Կարդա՛  
Փիլիպ. 3.7-14

Հետևում եմ դեպի  
նպատակը՝ Հիսուս  
Քրիստոսով Աստծու  
վերին կոչման մրցա-  
նակին: Փիլիպ. 3.14

## Սքանչելի փառք

**Ե**վրոպայի զանազան երկրներ այցելելու մեծագույն հաճույքներից է տեսնել այնտեղ գտնվող բազմաթիվ մայր տաճարները: Դրանք սքանչելի են դեպի երկինք սլացող իրենց գմբեթներով: Այս հիանալի կառույցների ճարտարապետությունը, արվեստն ու խորհրդանիշը ներկայացնում են սքանչելի հրաշագործություն ու շքեղության հմայիչ փորձառությունը: Մինչ մտածեցի այս շքեղ տաճարների մասին, խորհեցի, որ նրանք կառուցված են՝ ցույց տալու համար Աստծո փառավորությունն ու մեծությունը, և թե ինչպես հնարավոր պիտի լինի մեր սրտերի ու մտքերի մեջ Աստծո հոյակապություն ման զգացումը վերագրավել և հիշել Նրա մեծությունը:

Կարդա՛

Ա ՄՆաց. 29.11

Քոնն է, Տե՛ր, մեծությունը, զորությունը, փառքը, հաղթությունը... Ա ՄՆաց. 29.11

Այս անելու ձևերից մեկն է նայել մարդու շինած մեծ ու շքեղ կառույցներին ու խորհել Աստծո ստեղծագործության մեծության մասին: Օրինակ՝ նայիր աստղազարդ երկինք ու մտածիր Աստծո գործության մասին, երբ նա ասաց. ամբողջ տիեզերքը ստեղծվեց: Բազուկներիդ մեջ առ մի նորածնի և քո շնորհակալությունը հայտնիր կյանքի հրաշքի համար: Դիտիր Ալյասկայի ձյունապատ բարձր լեռները ու հսկա Ատլանտյան օվկիանոսը, որ պարունակում է Աստծո ստեղծած միլիոնավոր արարածներ, ու մտաբերիր այն մեծ ուժը, որ հավասարակշռում է երկիր մոլորակի գոյատևման ընթացքը: Միայլ չէ, որ մարդիկ դեպի երկինք սլացող կառույցներ ստեղծեն՝ խորհրդանշելու Աստծո գոյությունը: Սակայն մեր իսկական հիացումը պետք է միայն լինի Աստծո հանդեպ, մինչ Նրան ասում ենք. «Քոնն է, Տե՛ր, մեծությունը, զորությունը, փառքը, հաղթությունն ու հզորությունը» (Ա ՄՆաց. 29.11):

**Աղոթք** - Տե՛ր, Քո մեծությամբ մեզ հիացնում ես: Շնորհակալ ենք, որ մեզ հիշեցնում ես Քո փառավորության մասին՝ Քո Խոսքի և Քո ստեղծած երկրի մեջ: Ամեն:

**Աստված միայն ինքն է արժանի մեր փառաբանության:**

## Ի՞նչ են ասում մասնագետները

**Բ**ոստոն Գլոբի հոդվածագիր Ջեֆ Ջեյքոբսը գրում է. «Մասնագետների անխոհեմ քայլը իրականությունները խեղաթյուրելու սխալ է»: Հպանցիկ ակնարկը ներկա պատմությունը ցույց է տալիս, որ հոդվածագիրը ճիշտ է: Օրինակ՝ մեծ գյուղատարար Թոմաս Էդիսոնը հայտարարեց, թե խոսող շարժապատկերները բնավ չպիտի կարողանան համը շարժապատկերների տեղը գրավել: Եվ 1928-ին Հենրի Ֆորդը հայտարարեց. «Մարդիկ իմաստուն են դառնում՝ պատերազմ չմղելու համար»: Նման գուշակությունները մասնագետների կողմից սխալ են դուրս եկել: Իմաստությունը հասակորեն ունի իր սահմանափակումները:

Միայն մեկ անձ է ամբողջովին վստահելի և ունի ազդու ու գորեղ խոսքեր՝ ուղղված մասնագետներին: Հիսուսի օրերի կրոնական առաջնորդները հավակնեցին ասել, թե ունեն ճշմարտությունը: Այս դպրագետներն ու աստվածաբանները մտածում էին, թե ինչպիսին պիտի լինեն խոստացյալ Մեսիան, երբ գար: Հիսուսը զգուշացրեց նրանց՝ ասելով. «Քննեցեք գրքերը, որոնցով դուք ուզում եք հավիտենական կյանք ունենալ»: Ապա Նա մատնանշեց, թե ինչպես նրանք չէին գիտակցում ճշմարտության խորքը: «...Նրանք են, որ վկայում են իմ մասին: Բայց դուք չեք ցանկանում ինձ մոտ գալ, որ կյանք ունենաք»: (Հովհ. 5.39-40) Նոր տարի ենք սկսել, պիտի լսենք գուշակություններ՝ սկսած վախագրուներից մինչև լավատեսները: Այդ գուշակությունները պիտի ներկայացվեն մեծ հեղինակությամբ: Մեր վստահությունը մնում է Նրա վրա, որ կենտրոնական տեղ է գրավում Աստծո խոսքի մեջ: Նա ամուր կերպով է բռնել մեզ ու մեր ապագան:

**Աղոթք** - Հայր, երբ դժվարության մեջ լինենք ու ահաբեկվենք, օգնիր մեզ, որ Քեզ դառնանք: Այս նոր տարին ու ամեն բան Քեզ ենք հանձնում:

**Ապագան իմանալը անստույգ է, սակայն գիտենալ՝ Նրան, որը ապագան ունի Իր ձեռքերում, հաստատ երևույթ է:**

**Կարդա՛ր**  
**Հովհաննես 5.31-40**

...և նրանք են, որ վկայում են իմ մասին: Բայց դուք չեք ցանկանում ինձ մոտ գալ, որ կյանք ունենաք: Հովհ. 5.39-40

## Ծիշտ իմ հոր նման

**Ի**մ դասասենյակի հատակի հորս փոշոտ ու զարդարուն կոփարածի կոշիկները ամեն օր ինձ հիշեցնում են, թե ինչպիսին էր նա:

Զանազան բաների կողքին նա նաև մարզեց արագավազ ձիեր: Ինձ համար շատ հաճելի էր տեսնել նրան աշխատելիս ու դիտել նրա հիանալի ձիավարութունը: Մինչ հասակ էի առնում որպես պատանի, ցանկանում էի հորս նմանվել: Հիմա 80 տարիս եմ բոլորել ու տակավին չեմ կարող նրա կոշիկները լցնել:

Հայրս երկնքում է, սակայն ես ունեմ ուրիշ Հայր, որին նմանվելու նպատակ ունեմ: Ուզում եմ Նրան նմանվել՝ լցված Իր բարությամբ ու Իր անուշահոտ սիրով: Տակավին այնտեղ չեմ ու բնավ չպիտի լինեմ այս կյանքում: Նրա կոշիկները շա՛տ մեծ են ինձ համար:

Սակայն Պետրոս առաքյալն այս ասաց. «Եվ ամեն շնորհի Աստվածը, որ մեզ Քրիստոս Հիսուսով հավիտենական փառքի մեջ կանչեց, ձեզ... թող կատարյալ անի, հաստատի, զորացնի, անսասան դարձնի» (Ա. Պետ. 5.10): Նա ունի իմաստությունն ու զորությունը՝ այդ բանն անելու (Հմ. 11):

Երկնավոր Հորը նմանվելու մեր պակասը հավիտյան չպիտի մնա: Աստված մեզ կանչել է՝ Իր էության գեղեցկութունը բաժանելու: Այս կյանքում մենք ցոլացնում ենք Իրեն ազոտ կերպով, սակայն երկնքում մեր մեղքը ու ցավը պիտի վերանան, ու մենք պիտի կարողանանք Նրան լավապես ցոլացնել: Այս է Աստծո ճշմարիտ շնորհքը (Հմ. 12):

**Աղոթք** - Հայր Աստված, ուզում եմք Քեզ նմանվել: Օգնիր մեզ, որ աճենք ավելի ու ավելի Քեզ նմանվելու համար: Ամեն:

**Խաչի միջոցով հավատացյալները կատարյալ են լինում Իր տեսության մեջ:**

Կարդա՛

Ա Պետրոս 5.8-12

Քանի որ գրված է՝  
«Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»:  
Ա Պետ. 1.16

## Մոգերի ընծան

**Ե**րիտասարդ ամուսինները մեծ սեր ունեին իրար հանդեպ: Մ. Ծնունդի նախօրեին երկուսն էլ ջանացին գտնել հատուկ նվեր՝ ցույց տալու իրենց սերը: Վերջապես Մ. Ծնունդի երեկոյան Դեյլան վաճառեց մինչև ծնկները հասնող մագերը՝ պլատինից շղթա գնելու Ջիմի Հորից ու պապից ժառանգած թանկ ժամացույցի համար: Մինչ այդ Ջիմը վաճառել էր իր ժամացույցը՝ Դեյլայի համար գնելու թանկ սանրերի հավաքածու: Հեղինակ Օ'Հենրին այս զույգի պատմությունը կոչում է «Մոգերի ընծան»: Հենրին ցույց է տալիս, որ հակառակ այն իրողության, որ նրանց ընծաները անօգուտ դուրս եկան Ծննդյան առավոտյան ու նույնիսկ՝ արարքը անիմաստ, սակայն նրանց արտահայտած սերը պատճառ եղավ, որ նրանք դասվեն ընծաներ մատուցող իմաստունների շարքին: Մ. Ծնունդի պատմության մեջ նշված իմաստուն մոգերը ոմանց համար կարող են անխոհեմ համարվել, երբ Բեթղեհեմից հասնում են ընծաներով՝ ոսկի, կնդրուկ և զմուռս (Մատթ. 2.11): Նրանք հրեա չէին, այլ օտարական ու հեթանոս և բնավ էլ տեղյակ չէին, թե որքա՛ն խլրտումի պատճառ կարող էին դառնալ ու խանգարել Երուսաղեմի խաղաղությունը՝ հարց տալով՝ Նրա մասին, որ ծնվեց իբր հրեաների թագավոր (Հմ. 2):

Ջիմիի ու Դեյլայի փորձառությունն ստանալով մոգերի ծրագիրը չեղավ այնպիսին, ինչպիսին նրանք էին ակնկալում: Սակայն նրանք տվեցին այն, ինչ որ դրամը չէր կարող գնել: Նրանք ընծաներով եկան ու երկրպագեցին Նրան, որ պիտի տար սիրով եղած զոհաբերության լավագույն պարգևը մարդկանց ու մեզ:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Հայր, խնդրում ենք օգնիր մեզ այս Ծնունդի օրերին՝ իմանալու, թե ինչ է նշանակում տալ այն, ինչ որ դրամը չի կարող գնել: Ամեն:

**Աստծո շնորհքի պարգևը անգին է:**

Կարդա՛ր  
Մատթեոս 2.1-12

...մենք արևելքում  
նրա աստղը տեսանք  
ու եկանք  
նրան երկրպագելու:  
Մատթ. 2.2

## Մեկ անուն

**Կ**ենդատարան, Գալիլեոն, Շեքսպիրը, Էլվիսը և Պելեն: Այս մարդիկ այնքան լավ ծանոթ են բոլորին, որ միայն մեկ անունի կարիք ունեն ճանաչվելու համար: Նրանք պատմության մեջ մնում են երևելի՝ իրենց ով լինելու և ինչ արած լինելու համար: Սակայն կա այլ անուն, որ շատ ավելի գերազանց է մնում այստեղ կամ որևէ տեղ նշված անունից:

Մարդու Որդու ծնունդից առաջ հրեշտակը Մարիամին ու Հովսեփին ասաց Նրան Հիսուս կոչել, «որովհետև նա Իր ժողովրդին կփրկի իր մեղքերից» (Մատթ. 1.21) ու «Բարձրալի Որդի կկոչվի» (Ղուկ. 1.32): Հիսուսը չեկավ որպես համբավվոր անձ, այլ որպես ծառա՝ Իր անձը խոնարհեցրեց ու մեռավ խաչի վրա, որպեսզի ամեն ոք, որ Նրան ընդունի, ներում ստանա ու ազատ լինի մեղքի ուժից:

Պողոս առաքյալը գրեց. «Աստված շատ բարձրացրեց նրան և մի անուն շնորհեց նրան, որ ամեն անունից ավելի բարձր է: Որպեսզի Հիսուսի անունին ծավլի երկնավորների, երկրայինների և երկրի տակ եղողների ամեն ծունկ: Եվ ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոսը Տեր է Հոր Աստծու փառքի համար» (Փիլ. 2.9-11):

Մեր ուրախության ու կարիքների մեջ այն անունին, որ կառչում ենք, Հիսուս անունն է: Նա մեզ բնավ չի թողնի, ու Նրա սերը մեզ չի լքի:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, ամեն անունից վեր եղող անունը ու մեր Փրկիչն ու Տերն ես: Մեր փառաբանությունն ենք բարձրացնում քեզ, մինչ վայելում ենք Քո ներկայությունը ու գոությունը մեր կյանքերի մեջ: Ամեն:

**Հիսուս Քրիստոսը չի արժևորվի, եթե չդիտվի բոլորից գերազանց: Աբ. Օգոստինոս**

Կարդա՛ր  
Փիլիպ. 2.5-11

Որպեսզի Հիսուսի անունին ծավլի երկնավորների, երկրայինների և երկրի տակ եղողների ամեն ծունկ:

Փիլիպ. 2.10



## Պարտքը ջնջողը

**Ա**չքերս արցունքով լցվեցին, երբ քննեցի ինձ եկած բժշկական հաշվեցույցը: Նկատի առնելով մեր դիմագրաված նյութական տազնապը ամուսնուս երկարատև գործազրկության պատճառով՝ նույնիսկ ամիսների ընթացքում մասնակի վճարումով հնարավոր չպիտի լիներ փակել հաշիվը: Ուստի բժշկի գրասենյակ հեռաձայնելուց ու վճարումի ծրագիր խնդրելուց առաջ աղոթեցի: Կարճ ժամանակ լսափողի մեջ սպասելուց հետո պաշտոնյան տեղեկացրեց, որ բժիշկը մեր բոլոր հաշիվները ջնջել էր: Խորին շնորհակալություն հայտնեցի: Այս առատաձեռն ու մեծահոգի նվերը լցրեց ինձ խոր երախտագիտության զգացումով: Ընկալուչը ցած դնելով՝ Աստծուն փառք տվեցի: Սա նկատեցի ոչ թե որպես պարտքի հիշեցում, այլ հիշեցում, թե Աստված ինչ է արել: Պարտքը ջնջելու բժշկի ընտրությունը ինձ հիշեցրեց Աստծո ընտրությունը՝ իմ բոլոր մեղքերը ներելու: Աստծո Խոսքը մեզ վատահեցնում է, թե «գլխախրտ, ողորմած է Տերը» և կարեկից (Սաղմ. 102.8): Նա մեր մեղքերը հեռացնում է այնքան, «որքան հեռու է արևելքն արևմուտքից» (Հմ. 12), երբ զղջանք և ընդունենք Քրիստոսին որպես մեր Տեր ու Փրկիչ: Մի անգամ որ ներում ստանանք, մենք չենք արժևորվում ու սահմանափակվում մեր անցյալի պարտքով: Որպես պատասխան Տիրոջ տված մեծ պարգևի՝ կարող ենք նկատի ունենալ Իր բոլոր արածները: Նվիրումով եղած մեր պաշտամունքը բարձրացնելով ու մեր երախտագիտության զգացումները հայտնելով՝ մենք կարող ենք Իր համար ապրել ու Իրեն բաժանել ուրիշների հետ:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմք, որ մեր մեղքերը ամբողջովին ջնջում ես, երբ մեր կատարյալ վստահությունը Քո վրա եմք դնում: Ամեն:

**Մեղքի պատճառով մեր մեծագույն պարտքը ջնջվում է մեր Աստծո միջոցով:**

### Կարդա՛ր Սաղմոս 102. 1-12

Որքան հեռու է արևելքն արևմուտքից, այնքան հեռացրեց նա մեր անօրենությունները մեզմից:  
 Սաղմ. 102.12

## Յիշատակի քարեր

Առավոտները, երբ համացանցին եմ նայում, դիմատետրը ցույց է տալիս անցյալ տարիների կայքէջում դրած նկարներս, որոնք ժպիտ են պարզում դեմքիս վրա: Օրինակ՝ մեր հարսանեկան նկարները կամ գավականներիս շարժապատկերը մորս հետ խաղալիս: Սակայն երբեմն մեծ ազդեցություն են թողնում վրաս, երբ հիշատակությունները գրում եմ տեսնում քենակալիս այցելությունների մասին իր քիմիաբուսության ընթացքում կամ էլ նկար, որ ցույց է տալիս մորս գլխի կարերը՝ երեք տարի առաջ արված ուղեղի վիրահատությունից հետո: Տեսնելով դրանք՝ հիշում եմ Աստծո հավատարիմ ներկայությունը դժվար պարագաներում, և դրանք մղում են ինձ աղոթքի ու երախտագիտության: Բոլորս անխտիր հակամետ ենք՝ մոռանալու Աստծո արածները մեզ համար: Մենք հիշեցումների կարիքն ունենք: Երբ Հեսուսն առաջնորդեց Աստծո ժողովուրդը դեպի նրանց խոստացված երկիրը, նրանք պիտի անցնեին Հորդանան գետի միջից (Հեսուս 3:15-16): Աստված գետի ջրերը բացեց, ու նրանք ցամաքով անցան (Հմ. 17): Այս հրաշքի մասին հիշատակարան ունենալու համար Աստծո տված պատվերի համաձայն՝ տոհմերը ներկայացնող մարդիկ տասներկու քարեր վերցրին ցամաքած գետի մեջտեղից ու կանգնեցրին Հորդանան գետի մյուս կողմում (4:3), որպեսզի երբ ուրիշները հարցնեն, թե այդ քարերը ինչ նշանակություն ունեն, Աստծո ժողովուրդը կարողանա պատմել, թե Աստված ինչ արեց այդ օրը: Անցյալում եղած Աստծո հավատարմության Ֆիզիկական հիշեցումները կարող են մեզ հուշել, որ Աստծուն պետք է վստահել ներկայի ու ապագայի համար:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ իմ հանդեպ քո ունեցած հավատարմության համար: Օգնիր, որ քեզ վստահեմ ներկայի ու ապագայի համար: Ամեն:

**Ունենա՛նք Աստծո հավատարմության մասին ամենօրյա հիշեցումներ:**

Կարդա՛ր  
Հեսուս 3.14 - 4.7

Հիշեցե՛ք հրաշագործությունները նրա, սքանչելիքներն ու բերանի պատվիրանները նրա:  
Սաղմ. 104.5

## Ծառայի հոգի զարգացնել

**Ա**շխատանքի երկար օր էր, սակայն երբ տուն հասա, ժամանակն էր «մյուս» գործն սկսելու, որ լավ հայր լինելն էր: Կնոջս ու զավակներին ջերմ ողջույնը շուտով փոխվեց. «Հայրի՛կ, ի՞նչ պիտի ունենանք ընթրիքին»: «Հայրի՛կ, կարո՞ղ եմ մի քիչ ջուր խնդրել»: Ես պարզապես ցանկանում էի մի քիչ նստել: Ինձնից մի մաս իսկապես ցանկանում էր լավ հայր լինել, այդ պահին ընտանիքիս կարիքները հոգալ: Ծիշտ այդ ժամանակ տեսա երախտագիտություն Քարտ՝ եկեղեցու անդամներից մեկի կողմից ուղղված կնոջս: Նրա վրայի նկարը ներկայացնում էր մի աման ջուր, դենջակ և կեղտոտ հոդաթափեր: Նկարի ներքևում արձանագրված էին Ղուկաս 22.27-ի բառերը. «Ես ձեր մեջ ծառայողի պես եմ»: Այդ հայտարարությունը Տեր Հիսուսի առաքելության մասին՝ ծառայելու նրանց, որոնց եկել էր փնտրելու և փրկելու (Ղուկ. 19.10), ճիշտ այն բանն էր, որի կարիքն ունեի: Եթե Հիսուսը պատրաստ էր անելու ամենից կեղտոտ գործը Իր աշակերտների համար՝ լվանալ նրանց կեղտոտ ոտքերը (Հովհ. 13.1-17), ես էլ կարող էի տղայիս մի գավաթ ջուր տալ՝ առանց դանդաղելու: Այդ պահին ինձ հիշեցում եղավ, թե իմ ընտանիքի խնդրանքը՝ իրենց ծառայելու, ոչ թե պարտավորությունն էր, այլ առիթ՝ ցույցանելու Տեր Հիսուսի մեջ եղած ծառայության հոգին ու Իր ունեցած սերը: Երբ խնդրանքներ լինեն մեզ, դրանք առիթներ են ավելի Հիսուսին նմանվելու, որ ծառայեց Իր աշակերտներին՝ Իր կյանքը նրանց համար դնելով:

**Կարդա՛ր**  
**Ղուկաս 22.24-30**  
Բայց ես ձեր մեջ  
ծառայողի պես եմ:  
Ղուկ. 22.27

**Աղոթք** - Տեր, երբեմն դժվար է ուրիշներին ծառայել: Օգնիր մեզ, որ կարողանանք ավելի Քեզ նմանվել՝ փափագելով Քո սերը հայտնել մեզ տրված առիթները օգտագործելով ամեն օր: Ամեն:

**Աստօ՞ն սերը մեր հանդեպ զորացնում է մեզ՝ ուրիշներին ծառայելու:**

## Ի՞նչ կա մեջը

**Ը**նկերուհիս՝ էմիլին, ինձ հարցրեց. «Ուզո՞ւմ ես տեսնել ինչ կա մեջը», երբ դրական ակնարկ արեցի իր աղջկա գրկած հին ոճով կտավից պատրաստված տիկնիկի մասին: Անմիջապես մեծ հետաքրքրությամբ ասացի, թե ուզում եմ տեսնել: Նա տիկնիկի ետևի շղթան բացեց ու կտորով պատրաստված այդ պուլպրիկի միջից գանձ դուրս բերեց՝ երկու տասնամյակների կյանք ունեցող իր մանկուլթյան կտավից տիկնիկը: «Դրսի» տիկնիկը պարզապես կեղև էր՝ պահելու և պաշտպանելու մյուս արժեքավոր պուլպրիկը:

Պողոսը նկարագրում է Հիսուսի կյանքի, մահվան ու հարության ճշմարտությունը՝ որպես գանձ, պահված Աստծո ժողովրդի տկար մարդկայնության մեջ: Այդ գանձը մղում է նրանց, որոնք վստահում են Նրան աներևակայելի հակասությունների մեջ ու շարունակում են իրենց ծառայությունը մատուցել: Ու երբ անում են այդ բանը՝ Նրա լույսը, կյանքը շողում է պայծառորեն նրանց մարդկության տկար մարմնի ճեղքերի միջից: Պողոսը քաջալերում է մեզ բոլորիս, որ չտկարանանք, որովհետև Աստված մեզ զորացնում է Իր գործն անելու համար: Ներսում գտնվող պուլպրիկի նման մեր մեջ եղած Ավետարանի գանձը մեր կյանքերին նպատակ ու զորություն է պարգևում: Երբ Աստծո զորությունը մեր մեջ շողում է, ուրիշներին հրավիրում է հարց տալու. «Ի՞նչ կա մեջը»: Այն ժամանակ մենք կարող ենք բացել մեր սրտերը ու ցույց տալ Քրիստոսով փրկության կյանք տվող խոստումը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ ինձ փրկելու համար: Խնդրում եմ Քո լույսը ցուցնել իմ կոտրած կյանքի մեջ, որպեսզի ուրիշները տեսնեն Քեզ: Ամեն:

### Կարդա՛

**Բ Կորնթ. 4. 7-18**

Բայց այս գանձն ունենք հողե անոթներում, որպեսզի զորության գերազանցությունն Աստծունը լինի և ոչ թե մեզանից: Բ Կորնթ. 4.7

**Ճշմարտության Ավետարանը շողում է Աստծո ժողովրդի կոտրածության մեջ:**

## Համակերպվել

**Լ**ին դրամատան պարտաճանաչ աշխատակից է: Սակայն շատ հաճախ դժվար իրավիճակներում է հայտնվում, երբ փորձում է իր հավատքը պահել: Օրինակ՝ երբ անպատշաճ խոսակցություն է տեղի ունենում հանգստի սենյակում, նա ստիպված թողնում է այն ու դուրս գալիս: Մեր ունեցած Աստվածաշնչի սերտողություն ժամանակ նա ասաց. «Վախենում եմ, որ պաշտոնի բարձրացման առիթներ եմ կորցնում պարզապես այն պատճառով, որ չեմ համակերպվում»: Մաղաքիա մարգարեի ժամանակ հավատացյալները նման մարտահրավերի առջև էին: Նրանք աքսորից վերադարձել էին, ու տաճարը վերաշինվել էր, սակայն վարանոտություն կար իրենց հետ կապված Աստծո ծրագրի հանդեպ: Հրեաներից ոմանք ասում էին. «Զուր է այն ամենը, ինչ ծառայում է Աստծուն, և ի՞նչ ավելի օգուտ եղավ, որ պահեցինք նրա հրահանգները և պաղատանքով ընդառաջ գնացինք Ամենակալ Տիրոջը: Այժմ մենք երանի ենք տալիս ուրիշներին. բարեկեցիկ են բոլոր նրանք, ովքեր անօրենություն են գործում, Աստու՞ղ եմ դուրս եկան և ապրեցին» (Մաղ. 3.14-15): Ինչպե՞ս կարող ենք մենք հաստատուն լինել մշակույթի մեջ, որ ասում է, թե պիտի կորցնենք, եթե չհամակերպվենք: Մաղաքիայի ժամանակ հավատացյալները իրենց առջև եղած մարտահրավերներին պատասխանեցին՝ իրենց նման մտածելակերպ ունեցողների հետ հանդիպելով ու իրար քաջալերելով: Մաղաքիան այս կարևոր մանրամասնը բաժանում է՝ ասելով. «Տերը անսաց, լսեց...» (Հմ. 16): Աստված տեսնում է ու հոգատար լինում նրանց հանդեպ, ովքեր իրեն պատվում են ու հարգում: Նա չի կանչում մեզ աշխարհին համակերպվելու, այլ ավելի իրեն մոտենալու ամեն օր ու իրար քաջալերելու: Եկեք հավատարիմ մնանք Նրան:

**Աղոթք** - Տեր, օգնիր մեզ, որ իրար քաջալերենք ու հավատարիմ մնանք Քեզ: Ամեն:

**Մեր հավատքը կարող է քննության ենթարկվել, որպեսզի մենք կարողանանք Աստծո հավատարմությանը վստահել:**

Կարդա՛ր  
Մաղաքիա 3.13-18

Այսպես տրտնջացիմ  
Տիրոջից երկյուղ  
կրողները: Տերն  
անսաց, լսեց...  
Մաղ. 3.16-17

## Բարկացկոտ Աստված

**Ե**րբ համալսարանում հունական ու հռոմեական դիցաբանու-  
թյան նյութը սովորեցի, հետաքրքրական էր տեսնել, թե հին  
աստվածները որքան տրամագին և հեշտ բարկացող էին: Նրանց  
բարկության ենթակա ժողովուրդների կյանքերը խեղված ու  
շատ անգամ աստվածների քմայքից էին կախված:

Հեղնանքով մտածեցի, թե ինչպես կարելի է այդպիսի աստ-  
վածներին հավատալ, ապա ինքս ինձ  
հարցրեցի. «Մի՞թե իմ տեսակետը Աստ-  
ծո հանդեպ շատ տարբեր է: Ես էլ եմ  
տեսնում Նրան որպես բարկացկոտ ու  
պատժող Աստված, երբ կասկածներ եմ  
ունենում»: Այդ պատճառով զնահա-  
տում եմ Մովսեսի խնդրանքը, երբ  
ասաց. «Ցույց տուր ինձ քո փառքը»

(Ել. 33.18): Ընտրված լինելով առաջնորդելու մեծ թվով մարդ-  
կանց, որոնք հաճախ գանգատվեցին իր դեմ, Մովսեսը ուզեց վս-  
տահ լինել, թե Աստված պիտի օգներ իրեն այդ մեծ պարտակա-  
նությունը կատարելիս: Մովսեսի այս խնդրանքին որպես պա-  
տասխան՝ Աստված իր փառավորությունն ու հատկանիշները  
ներկայացրեց, երբ ասաց. «Տեր Աստված եմ, գթացող և ողոր-  
մած, համբերատար, բարեգութ ու ճշմարիտ...» (34.6): Այս հա-  
մարը ինձ հիշեցրեց, թե Աստված դյուրագրգիռ ու իր բարկու-  
թյան մեջ հարված տվող Աստված չէ, երբ ես համբերատար չլի-  
նելով՝ բարկությամբ եմ արտահայտվում նեղության ու տագնա-  
պի ժամանակ: Նաև հիշեցրեց, թե ինչպես նա շարունակ գոր-  
ծում է՝ ինձ իրեն նման դարձնելու: Մենք կարող ենք տեսնել  
Աստծուն ու իր փառքը իր համբերատարությունյան, ինչպես նաև  
բարեկամի քաջալերական խոսքի, գեղեցիկ մայրամուտի ու  
հատկապես մեր ներսում բնակվող Սուրբ Հոգու փսփսուքի մեջ:

**Աղոթք** - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ միշտ գթած,  
ողորմած, ներող ու հավատարիմ ես: Ամեն:

Կարդա՛

Ելք 33.18-19, 34.1-7

Տեր Աստված եմ,  
գթացող և ողորմած,  
համբերատար, բա-  
րեգութ ու ճշմարիտ:  
Ելք 34.6

**Թեև մենք հաճախ ենք փոխվում, սակայն Աստված  
միշտ նույնն է:**

## ԱՃԵԼ

«Տեր Հիսուսը ինձ սիրում է, այս ես գիտեմ, իմ Սուրբ Գիրքը ասում է»-ն սիրված ու հաճախ երգված մանկական ծանոթ հոգևոր երգ է: Աննա Բ. Ուորնեյի՝ 1800-ական թթ. գրած այս հիանալի երգի բառերը հաստատում են Աստծո սերը ու մեր հարաբերությունը Իր հետ: Մեկը կնոջս տվեց նկարատախտակ մեր տան համար, որ նոր իմաստ է ստանում այս երգի պարզ բառերը տարբեր ձևով դնելով: Գրությունը ասում է. «Հիսուսը ինձ գիտի, սա ես սիրում եմ»: Այս տարբերակը նոր հեռանկար է տալիս Աստծո հետ մեր ունեցած հարաբերության մասին, թե Նա մեզ լավ գիտի:

Հին օրերին Իսրայելի մեջ ոչխարներին իմանալն ու սիրելը տարբերակում էր իրական հովվին վարձկանից: Հովիվը այնքան ժամանակ է անցկացնում իր ոչխարների հետ, որ զարգացնում է մնայուն հոգատարություն նրանց համար ու լավատեղյակ լինում նրանց վիճակին: Զարմանալի չէ, որ Հիսուսն ասում է. «Ես եմ Բարի Հովիվը, և ես ճանաչում եմ իմ ոչխարներին, ու նրանք էլ ճանաչում են ինձ: Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, ու ես նրանց ճանաչում եմ, և իմ ետևից գալիս են» (Հովհ. 10.14, 27): Տեր Հիսուսը մեզ լավ գիտի ու սիրում է: Մենք կարող ենք Նրան վստահել՝ մեզ համար Իր ունեցած նպատակների ու մեզ հոգալու խոստումի համար, որովհետև Հայրը գիտի մեր կարիքները՝ դեռ մենք իրենից չխնդրած (Մատթ. 6.8): Մինչ այսօր դիմադրավում ես կյանքի վերիվայրումները, հանգիստ եղիր ու վստահ, թե բարի Հովիվը քեզ լավ է ճանաչում ու սիրում:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ Քո ցերմ սիրո ու հոգատարության համար: Օգնիր ինձ, որ Քեզ վստահեմ կյանքիս բոլոր պարագաներում: Ամեն:

**Սքանչելին այն է, որ Հիսուսը սիրում է ինձ:**

Կարդա՛  
Հովհ. 10. 7-16

Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, ու ես նրանց ճանաչում եմ, և իմ հետևից գալիս են:  
Հովհ. 10.27

## Միասնականությանը հետամուտ

**1**950-ական թթ. հասակ առնելով՝ բնավ հարցականի տակ չզրի՛վ այդ օրերի մեր կյանքերի մեջ թափանցող ազգամոլորությունն ու անջատողական սովորությունները մեր բնակված քաղաքում: Վարժարանների, ճաշարանների, հանրային վայրերի և երթևեկության ցանցերի մեջ տարբեր գույնի մարդիկ իրարից բաժանված էին:

Իմ դիրքը փոխվեց 1968-ին, երբ միացա երկրի բանակին՝ մարզավելու: Խմբի մեջ կային զանազան մշակութային խավերից երիտասարդներ: Շուտով իմացանք, թե պետք է հասկանայինք և ընդունեինք իրար, միասին աշխատեինք ու մեր առաքելությունը կատարեինք:

Երբ Պողոս առաքյալը գրեց Կողոսայի առաջին դարի եկեղեցուն, տեղյակ էր այնտեղ եղած անդամների տարբերությունների ու բաժանումների մասին: Նա հիշեցրեց նրանց. «Ո՛չ հույն կա և ո՛չ հրեա, ո՛չ թլպատություն և ո՛չ անթլպատություն, բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, բայց Քրիստոսն է ամենը և ամենի մեջ» (Կող. 3.11): Պողոսը թախանձեց նրանց՝ ասելով. «...Հագե՛ք ողորմասիրտ զթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, համբերատարություն» (Հմ. 12): Ու ավելացրեց. «Եվ այս ամենի վրա սե՛րը հագեք, որ կատարելության կապն է» (Հմ. 14):

Այս սկզբունքները գործնականի վերածելը աշխատանք է պահանջում, սակայն այս է Տեր Հիսուսի կոչը մեզ: Որպես հավատացյալներ՝ հետամուտ պիտի լինենք ստեղծելու համերաշխություն, հասկացողություն, խաղաղություն և միասնականություն՝ որպես Տեր Հիսուս Քրիստոսի մարմնի անդամներ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, մեզ իրար եւ մոտեցրել Որդուդ՝ Հիսուսի վրա մեր ունեցած հավատքով: Միացրու՛ մեր սրտերը սիրով, որպեսզի մենք էլ ուրիշներին քաջալերենք ու Քեզ պատվենք: Ամեն:

**Քրիստոսի սերը միասնականություն է ստեղծում տարբերությունների մեջ:**

### Կարդա՛ր Կողոսացիներ 3.9-17

...ո՛չ հույն կա և ո՛չ հրեա, ո՛չ թլպատություն և ո՛չ անթլպատություն, բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, բայց Քրիստոսն է ամենը և ամենի մեջ:

Կող. 3.11



## Աղոթքի զորութիւնը

**Մ**ի օր, երբ շատ մտահոգ էի մոտ բարեկամիս բարեկեցութեան համար, քաջալերվեցի Հին Կտակարանի մեջ Իսրայելի իմաստուն առաջնորդ Սամուելի պատմութիւնով: Երբ կարգացի, թե ինչպես Սամուել մարգարեն բարեխոսեց դժվարութեան մեջ եղող Աստծո ժողովրդի համար, քաջալերվեցի՝ ազոթք բարձրացնելու սիրելի բարեկամիս համար:

Իսրայելցիները փղշտացիները սպառնալիքին դիմադրեցին, որոնք նախապես հաղթել էին իրենց, երբ պատրաստ չէին Աստծուն վստահելու (Ա Թագ. 4): Իրենց մեղքերից ետ դառնալուց հետո իմացան, թե փղշտացիները իրենց վրա պիտի հարձակվեն: Սակայն այս անգամ նրանք Սամուելից խնդրեցին, որ շարունակի ազոթել իրենց համար (7,8), և Տերը հստակ կերպով պատասխանեց նրանց՝ իրենց թշնամիներին խուճապի մատնելով (Հմ. 10): Հակառակ նրան, որ փղշտացիները իսրայելցիներից ավելի զորեղ էին, Տերը շատ ավելի հզոր էր:

Երբ մեր սիրելիները դիմադրաված մարտահրավերների համար ցավենք ու վախենանք, թե պարագաները չպիտի փոխվեն, մենք կարող ենք փորձութիւն ունենալ խորհելու, թե Աստված չպիտի միջամտի: Սակայն մենք ազոթքի զորութիւնը բնավ չպետք է թերազնահատենք, որովհետև մեր սիրող Աստված լսում է մեր աղաղակները: Չգիտենք, թե ինչ ձևով Նա պիտի պատասխանի մեր աղաղակներին, սակայն գիտենք, թե Նա որպես Հայր փափագում է, որ Իր սերը ընդունենք ու Իր հավատարմութեանը վստահենք:

Կա՞ արդյոք մեկը, որի համար կարող ես ազոթել:

**Աղոթք** - Հայր Աստված, հիանում եմ, թե ինչպես ես լսում ու պատասխանում իմ աղոթքներին: Հավատքս զորացրու, որպեսզի միշտ հավատամ Քո բարութեանն ու սիրուն: Ամեն:

**Աստված լսում է մեզ, երբ աղոթում ենք:**

Կարդա՛

Ա Թագ. 7.7-14

Մի՛ դադարիր աղաղակելուց քո Տեր Աստծուն մեզ համար, որ այլազգիների ձեռքից փրկի մեզ: Ա Թագ. 7.8

## Աճող երախտագիտություն

**Ց**անկանո՞ւմ ես մշակել ավելի մեծ երախտագիտական հոգիքո մեջ: 17-րդ դարի բրիտանացի բանաստեղծ Ջորջ Հերբերտը իր «Երախտագիտություն» բանաստեղծության մեջ քաջալերում է ընթերցողներին այդ խորհրդով, երբ ասում է. «Դու, որ շատ բաներ ես տվել ինձ, մի բան էլ տուր՝ երախտապարտ հոգի»:

Հերբերտը նկատում է, թե երախտապարտ լինելու համար պետք է պարզապես Աստծո տված բարիքները գիտակցել:

Աստվածաշունչը հայտարարում է, թե Քրիստոսը բոլոր օրհնությունների աղբյուրն է. «Որովհետև նրանից, նրանով ու նրա համար է ամեն բան...» (Հռոմ. 11.36): «Ամեն բանը» պարփակում է թե՛ երկնայինը և թե՛ աշխարհայինը, ինչպես նաև մեր կյանքերի մեջ մեր վայելած ամենօրյա պարգևները: Ամեն ինչ, որ ստանում ենք մեր կյանքում, Երկնավոր Հորից է գալիս: «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում, լույսի Հորից, որի մեջ փոփոխություն կամ փոփոխման շուք բնավ չկա» (Հակ. 1.17): Նա այս բոլոր պարգևները մեզ տալիս է մեր հանդեպ իր ունեցած սիրո պատճառով:

Ընդարձակելու համար Աստծուց իմ ստացած օրհնությունների գիտակցությունը՝ սովորում եմ մշակել մի սիրտ, որ գնահատում է իմ ամենօրյա ուրախությունների աղբյուրը, սակայն մասնավորաբար այն բաները, որոնք բնական եմ գիտում: Օրինակ՝ պայծառ առավոտյան վազքը, բարեկամի հետ անցկացրած երեկոն, պատուհանից դուրս երևացող գեղեցիկ աշխարհը ու թարմ սուրճի անուշ բույրը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շատ բան ես տվել մեզ: Բա՛ց մեր աչքերը՝ տեսնելու Քո տված բոլոր օրհնությունները, և օգնիր, որ մեր ներսում երախտապարտ հոգի զարգացնենք: Ամեն:

**Երբ խորհես բոլոր բարի բաների մասին, շնորհակալ եղիր Աստծուն:**

Կարդա՛ր  
Հռոմ. 11.33-36

Որովհետև նրանից,  
նրանով ու նրա  
համար է ամեն բան:  
Հռոմ. 11.36

## Ուշացումների ժամանակ ի՞նչ անել

Համաշխարհային համակարգչային խաթարման հետևանքով անհաշիվ թռիչքներ հետաձգվեցին ու հարյուրհազարավոր ճամփորդներ անօդնական մնացին օդակայաններում: Չմոռան փոթորիկը բազմաթիվ ավտոավթարների ու ճանապարհների փակման պատճառ եղավ: Նա, որ ասել էր, թե «անմիջապես պատասխան կուղարկեմ», դեռ էլը արել: Նման ուշացումները շատ հաճախ նեղություն ու բարկություն են առաջացնում մեր մեջ, սակայն որպես Հիսուսի հետևորդներ՝ մենք առանձնաշնորհում ունենք՝ Իրեն դիմելու օգնություն համար:

Աստվածաշնչի մեջ նշված համբերության լավագույն օրինակը Հովսեփինն է, որին նախանձ եղբայրները ծախեցին վաճառականներին, և գործատիրոջ կնոջ զրպարտության պատճառով բանտարկվեց Եգիպտոսի մեջ: «Հովսեփի տերը բռնեց ու բանտ նետեց նրան... Բայց Աստված Հովսեփի հետ էր» (ԾՆՆ. 39.20-21): Տարիներ հետո, երբ Հովսեփը մեկնեց Փարավոնի երազը, թագավորի կողքին Եգիպտոսը իշխելու երկրորդ աստիճանի վրա դրվեց (ԾՆՆ. 41): Նրա համբերության ամենից նշանավոր պտուղն այն էր, երբ սովի ժամանակ իր եղբայրները հացահատիկ գնելու համար Եգիպտոս եկան: Նա ասաց. «Ես ձեր եղբայր Հովսեփն եմ, որին դուք վաճառեցիք, որ Եգիպտոս տանեն: Բայց դուք մի՛ տրտմեք, մի՛ նեղվեք, որ ինձ վաճառել եք այստեղ բերելու համար, որովհետև Աստված ձեզ փրկելու համար է ուղարկել ինձ այստեղ ձեզնից առաջ: ...Արդ, ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստված» (ԾՆՆ. 45.4-5, 8): Մեր բոլոր ուշացումների մեջ, կարճ կամ երկար ժամանակով, մենք էլ Հովսեփի նման համբերություն, հեռանկար ու խաղաղություն ունենանք՝ մեր Աստծուն վստահելով:

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, մեր ուշացումների մեջ վստահե՛նք Քո հավատարիմ ձեռքի տված առաջնորդությանը և ունենա՛նք Քո Երկայրության փորձառությունը ցանկացած պարագայում: Ամեն:

**Աստծուն վստահելը մեզ կարողություն է տալիս մեր հավատքը համբերությանը ապրելու:**

Կարդա՛ր  
ԾՆՆՂՈՅ 45.1-8

Արդ, ոչ թե դուք եք ինձ ուղարկել այստեղ, այլ՝ Աստված: ԾՆՆ. 45.8

## Հոգու զորությանը

**Ի**՞նչ կանես, երբ քո ճամփին լեռ հանդիպի: Դաշրաթ Մանջիի պատմությունը կարող է մեզ ներշնչել: Երբ Դաշրաթի կինը մահացավ, քանի որ հնարավոր չեղավ հիվանդանոց հասցնել, նա արեց այն, ինչ անկարելի էր թվում: Նա քսաներկու տարի աշխատեց, որ մեծ անցք բանա լեռան մեջ, որպեսզի ուրիշ գյուղացիներ կարողանան հասնել լեռան մյուս կողմում գտնվող տեղական հիվանդանոցը՝ ստանալու հարկ եղած բժշկական շտապ խնամքը: Իր մահից առաջ Հնդկաստանի կառավարությունը նրան պատվեց իր կատարած գործի համար:

### Կարդա՛ Ձաքարիա 4.1-7

Ո՞վ ես դու՝ մեծ լեռ, որ կանգնած ես Ձորաբաբելի առաջ:  
Ձաք. 4.7

Տաճարի վերաշինության գործը անկարելի էր թվում աքսորից վերադարձող Իսրայելի առաջնորդներից Ջորաբաբելի համար: Ժողովուրդը հուսահատ էր թշնամիներից կրած պարտությունների, ինչպես նաև իր անհրաժեշտ զենքը և մեծ բանակ չունենալու համար: Սակայն Տերը Ձաքարիա մարգարեին ուղարկեց Ջորաբաբելի մոտ՝ հիշեցնելու, թե գործը ռազմական ուժից, անձնական զորությունից ու մարդկանց հնարավորություններից ավելի զորեղ բանի է կարողում: Նա Տիրոջ Հոգու զորության կարիքն ուներ (Ձաք. 4.6): Երկնային օգնության վստահության հետ Ջորաբաբելը վստահ էր, որ Աստված կարող է հարթել ցանկացած դժվարության բարձունք, որ արգելք կարող է լինել տաճարի վերաշինության և Իսրայելի ժողովրդի վերականգնումի համար (Հմ.7): Ի՞նչ ենք անում, երբ «լեռ» է հանդիպում մեզ: Նման պարագաներում երկու հնարավորություն ունենք. մեր ուժին վստահել կամ Աստծո Հոգու զորության ապավինել: Երբ Նրա զորության ապավինենք, Նա կամ կհարթեցնի լեռը և կամ մեզ կտա զորությունը՝ հարատևելու ու նրան դեմ կանգնելու:

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, դժվարության ու նեղության պահին խնդրում եմ տո՛ւր ինձ Քո Հոգու զորությունը: Ամեն:

**Մարդունը բավարար չէ Աստծո նպատակները  
իրագործելու համար:**

## Իմ օգնությունը

**Տ**աննամյակներ շարունակ Բրուքլինի Տապանակ երգչախումբը հոգի նորոգող իր հոգևոր երգերով օրհնություն է եղել շատերի համար: Օրինակ՝ Սաղմոս 121-ի իրենց մեկնաբանությունը «Իմ օգնությունը» խորագրով: 120-րդ Սաղմոսը սկսվում է անձնական հավատի հանգանակով Տիրոջ համար, որ ամեն բան ստեղծեց ու Սաղմոսերգուի օգնության աղբյուրն էր (Հմ. 1-2): Ի՞նչ է նշանակում սա: Կայունություն (Հմ. 3), մնայուն հոգատարություն (Հմ. 4), հարատև ներկայություն ու պաշտպանություն (Հմ. 5-6) և պահպանություն ամեն տեսակի չարից՝ հիմա և հավիտյան (Հմ. 7-8): Տիրոջ Սուրբ Խոսքի պատվերների լույսի տակ Աստծո ժողովուրդը տարիների ընթացքում նկատի է ունեցել Տիրոջը՝ որպես «օգնության» աղբյուր: Պաշտամունքի փորձառությունս էլ ներառում է իմ ձայնը բարձրացնել նրանց հետ, որոնք Չարից Ուեսլիի հուզումնալից անձնատվությամբ երգեցին. «Հա՛յր, ձեռքս երկարում եմ Քեզ, այլ ապավեն չունեմ: Երբ ինձ թողնես, օ՛հ, ո՛ւր և ո՛ւմ մոտ գնամ»: Այդպես մեծ բարեկարգիչ Մարտին Լութերը շիտակ ձևով ասաց, երբ գրի առավ իր այս երգի բառերը. «Աստված մեր բերզն է հաստատուն և հզոր պաշտպան: Երբ վիշտ պատի և փորձություն, Ինքն է քաջ օգնականը»:

Միայնակ, լքված ու չփոթված ես: Խորհրդածիր 120-րդ Սաղմոսի բառերի մասին: Թույլ տուր, որ այս բառերը քո հոգին հավատքով և քաջությունով լցնեն ու քեզ նորոգեն: Դու միայնակ չես, ուստի մի փորձիր կյանքի տազնապները մենակ դիմադրավել: Ընդհակառակը, ցնձա այս երկրի ու Աստծո հավիտենական հոգատարության համար, ինչպես նկարագրված է Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի, մահվան, հարության և համբարձման մեջ:

**Աղոթք** - Հայր, որքա՛ն երախտապարտ եմք, որ Քո Սուրբ Խոսքը ու հոգևոր երգերը մեզ հիշեցնում են, թե Դու մեր օգնության աղբյուրն ես: Օգնիր, որ հիշենք սա ամեն օր: Ամեն:

**Տիեզերքի արարիչը Աստծո ժողովրդի օգնականն է:**

### Կարդա՛ր Սաղմոս 120

Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը:  
Սաղմ. 120.2

## ԱՃԵԼ

**Կ**րտսեր աղջիկս ու ես մի խաղ ունենք, որ անվանում ենք «Ճմլողներ»։ Երբ նա բարձրանում է աստիճաններով, իր ետևից բարձրանում ու փորձում եմ մի փոքր ճմլել իրեն։ Մեր խաղի օրենքն այն է, որ ես պետք է մեղմ ճմլեմ, երբ նա աստիճանների վրա է։ Հենց որ աստիճանների գագաթը հասնի, ապահով կլինի։ Երբ տրամադրված չի լինում մեր խաղը խաղալու, ու ես իր ետևից վեր եմ բարձրանում, նա խիստ կերպով ասում է. «Ո՛չ ճմլողներ», ես էլ պատասխանում եմ. «Ո՛չ ճմլողներ, խոստանում եմ»։ Այդ խոստումնս կարող է փոքր բան թվալ, սակայն երբ այն կատարում եմ, աղջիկս սկսում է հասկանալ նկարագիրս ու տեսնում է, թե խոսքս ու արարքս իրար համապատասխան են։ Նա գիտի, որ խոսքս հաստատ է ու կարող է ինձ վստահել։ Այո՛, նման խոստումը հարգելը փոքր բան է, սակայն մեր տված խոստումները ու դրանք պահելը մեր հարաբերությունների շաղախն են կազմում։ Նրանք սիրո ու վստահության հիմքերն են հաստատում։

Մտածում եմ, թե Պետրոս առաքյալը ճիշտ դա ուզեց ասել, երբ գրեց, թե Աստծո խոստումները մեզ կարողություն են տալիս, որ «դրանցով աստվածային բնությունը հաղորդակից լինենք» (Բ Պետ. 1.4)։ Երբ Աստծո ասած խոսքը իր ու մեր մասին նկատի ունենանք, կտեսնենք իր ունեցած սերը մեր հանդեպ։ Երբ մենք իր տված խոստումներին ապավինենք, Նա մեզ առիթ կտա իր ճշմարիտ հավատարմությունը հայտնելու։ Ես երախտապարտ եմ, որ Նրա Սուրբ Խոսքը իր խոստումներով լեցուն է ու հաստատ հիշեցում, թե «...նրա գիծությունները չեն նվազում։ Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր» (Ողբք Եր. 3.22-23)։

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք Քո մեծ ու արժեքավոր խոստումների համար։ Օգնիր մեզ, որ վստահենք Քո բոլոր ասածներից, որպեսզի տեսնենք Քո բարությունը։ Ամեն։

**Աստծո խոսքը ցույց է տալիս իր սիրտը մեր հանդեպ։**

Կարդա՛ր  
Բ Պետրոս 1.1-9

Որոնցով ամենամեծ ու պատվական խոստումներ են մեզ տրված, որպեսզի դրանցով աստվածային բնությանը հաղորդակից լինեն։

Բ Պետ. 1.4

## Կեցվածք

**Ռ**եջիհան աշխատանքից տուն վերադարձավ հոգնած ու հուսահատ: Օրը սկսել էր մի բարեկամից իր ստացած ցավալի լուրով, ապա տրտմել իր աշխատակիցների հետ ունեցած աշխատանքային ժողովների ընթացքում, երբ նրանք մերժել էին ընդունել իր բոլոր առաջարկները: Մինչ Ռեջիհան աղոթում էր Աստծուն, մտածեց մի կողմ թողնել այդ օրվա ճնշումներն ու ցավերը և ծաղիկներ առնելով՝ անակնկալ այցելու թյուն անել հանգստյան տանը ապրող տարեց մի բարեկամի: Նրա հոգին սփոփվեց, երբ Մարիան այս հիանալի բառերով իրեն ասաց, թե Աստված որքա՛ն բարի է եղել. «Ես ունեմ իմ անձնական ակողինը և աթոռը, օրական երեք անգամ ճաշ ու մշտական օգնություն հիվանդապահուհիների կողմից: Ու նաև երբեմն Աստված Կարդինալ թոշուն է ուղարկում պատուհանիս առջև, պարզապես այն բանի համար, որ գիտի, թե սիրում եմ, ու Նա էլ ինձ է սիրում»: Դիրք, կեցվածք ու հեռանկար: Ինչպես ասացվածքն է ասում. «Կյանքը տասը տոկոսով մեզ հետ պատահածն է ու իննսուն տոկոսով՝ մեր հակազդեցությունը»: Հակոբոսը գրում է հալածանքի հետևանքով ցիրուցան եղած ժողովրդին ու հարց տալիս իրենց հեռանկարի մասին դժվարությունների ժամանակ: Նա մարտահրավեր է նետում հետևյալ խոսքերով. «Լիովին ուրախություն համարե՛ք... երբ պես-պես փորձանքների մեջ ընկնեք» (Հակ. 1.2): Յուրաքանչյուրս Աստծուն վստահել սովորելու ճանապարհի մեջ ենք դժվարությունների և նեղությունների ժամանակ: Հակոբոսի՝ ուրախության զգացումներով լցվելու կեցվածքի մասին ասածը մենք կարող ենք ունենալ, երբ սովորում ենք տեսնել, թե Աստված ինչպես է գործածում մեր պայքարները՝ հավատքի մեջ մեզ աճում պարզեցնելով:

**Աղոթք** - Տե՛ր, խնդրեմ փոխիր իմ կեցվածքը նեղությունների ժամանակ: Տուր ինձ ցնծություն, հարատևելու կորով և հասունություն: Ամեն:

**Աստված աճման պահեր է պարգևում մեր ցավերի մեջ:**

### Կարդա՛

### Յակոբոս 1.1-12

Լիովին ուրախություն համարեք, եղբայրներ, երբ պես-պես փորձանքների մեջ ընկնեք:

Յակ. 1.2

## Սիրո արտահայտություն

**2**016-ի օգոստոսի 21-ին Կարիզան Լուիզիանայի ավերիչ ջրհեղեղի պատկերները դրեց համացանցում: Հաջորդ առավոտ ավելացավ հեղեղի ենթարկված շրջանի բնակիչներից մեկի օգնության խնդրանքը: Հինգ ժամ հետո նա և ամուսինը՝ Բոբին, կոչ արեցին բարեկամներին, որ օգնություն հասցնելու համար իրենց 1000 մղոն երկարող ճամփորդությունը միանան: Նույն օրն իսկ տասներեք հոգի, միանալով նրանց, գնացին ծառայություն մատուցելու նրանց, որոնց բնակարանները խիստ վնասվել էին:

Ի՞նչն է մղում մարդկանց, որ ամեն բան թողնելով՝ տասնյոթ ժամ մեքենա վարեն և օգնության ձեռք երկարեն՝ մաքրություն անելով, վնասված տան կարասիները փոխադրելով և հույս ներշնչելով անձանոթ մարդկանց:

Սա սիրո ջերմ արտահայտություն է: Մտածիր այս համարի մասին, որ Կարիզան ավելացրեց իր խնդրանքին. «Հայտնի՛ դարձրու քո ճանապարհները Տիրոջը և դի՛ր հույսդ նրա վրա» (Մաղմ. 36.5): Սա հատկապես ճշմարիտ է, երբ մենք ուրիշներին օգնելու համար Աստծո կոչին հետևենք: Հովհաննես առաքյալն ասաց. «Ով որ... իր եղբորը մի բանի կարոտ տեսնի ու իր գուլթը նրա առաջ փակի, նրա մեջ Աստծու սերն ինչպե՞ս բնակված կլինի» (Ա. Հովհ. 3.17): Սա կարող է սրտաբեկ փորձառություն լինել, սակայն մենք ունենք Աստծո օգնության խոստումը, երբ «նրան հաճելի եղած բաներն ենք անում» (Հմ. 22):

Երբ կարիքը հայտնվի, մենք կարող ենք Աստծուն պատվել և մեր անկեղծ սերը հայտնել նրանց, որոնք մեր օգնության են կարոտ՝ ընդունելով, որ սա մեր Երկնավոր Հոր խնդրանքն է մեզ:

**Աղոթք** - Տե՛ր, մեր աչքերը բաց՝ տեսնելու ուրիշների կարիքները, բաց մեր սրտերը ու մեր ձեռքերը, որպեսզի կարողանանք մեր օգնությունը հասցնել: Ամեն:

Աստծո սերն ենք ցույց տալիս, երբ ցանկանում ենք ուրիշներին օգնել, և Իր զորությունը, երբ կատարում ենք Իր տված պարտականությունը:

Կարդա՛ր  
Ա Յովհ. 3.16-24

Որոյակներ, խոսքով չսիրենք և ոչ էլ լեզվով, այլ գործով ու ճշմարտությամբ:  
Ա Յովհ. 3.18



## Կյանքի Աստվածը

**Մ**ի քանի տարի առաջ մեր քաղաքում անսովոր՝ մինչև ոսկորները թափանցող ցուրտ եղանակ եղավ, մինչև որ վերջապես գարնան ջերմությունը հասավ: Ուղիղ երկու շաբաթ ջերմաստիճանը իջավ մինչև 20 աստիճան:

Մի ցուրտ առավոտ ճովողոց թռչունների ձայնը գիշերվա լուռությունը ընդհատեց: Հարյուրավոր թռչունների երգը հնչում էր այնպես, կարծես նրանք թախանձում էին Արարչագործ Աստծուց սաստիկ ցուրտ օդը ջերմացնել:

Կենդանաբանները ասում են, թե ձմռան առավոտները ճովողոց թռչունները հիմնականում արուններն են, որոնք ջանում են էգերի ուշադրությունը գրավել: Սակայն նրանց ճովողյունը ինձ հիշեցրեց, թե ինչպես է Աստված ներդաշնակել Իր ամբողջ ստեղծագործությունը, որ պահի ու զարգացնի կյանքը, որովհետև Նա է կյանքի Աստվածը:

Սաղմոսի մեջ, որ սքանչանում է Աստծո բարգավաճող երկրի վրա, հեղինակը սկսում է՝ ասելով. «Օրհնիր Տիրոջը, ո՛վ իմ անձ...» (Հմ. 1): Ապա շարունակում է. «Այնտեղ երկնքի թռչունները բույն պիտի դնեն և ժայռերի միջից ձայն պիտի տան» (Հմ. 12):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ ենք Քո ստեղծած երկրի ու նրա մեջ եղող յուրաքանչյուր էակի համար: Ամեն:

### Կարդա՛

Սաղմ.103.1-12,24.-30

Տե՛ր իմ Աստված, անչափ մեծ ես, գովաբանությամբ ու մեծափառությամբ զգեստավորվեցիր: Սաղմ. 103.1

Եվ նա բոլորից առաջ է, ու ամեն բան Նրանով է հաստատուն: **Կող. 1.17**

## Ճշմարիտ հույս

**Վ**երջերս մի բարեկամի հետ այցելեցինք Empire State Building: Սպասող մարդկանց շարքը կարճ թվաց մեզ: Սակայն երբ սկսեցինք կամաց-կամաց առաջանալ, տեսանք, որ շարքը երկարում էր նախասրահից մինչև վեր բարձրացող աստիճանները և ապա մի ուրիշ սենյակ: Յուրաքանչյուր շրջադարձի հայտնաբերվեց սպասող մարդկանց երկար նոր շարք:

Ընդհանրապես նման գրավիչ վայրերի պատասխանատուները այնպես են դասավորում սպասող մարդկանց երկար շարքը, որպեսզի կարճ թվա: Սակայն յուրաքանչյուր դարձվածք հուսախաբ է անում նրանց: Երբեմն կյանքի հուսախաբությունները շատ ավելին են լինում: Աշխատանքը, որ հույս ունեինք ունենալ, չի ստացվում: Այն

բարեկամները, որոնց վստահում էինք աջակցություն համար, մեզ հուսախաբ են անում: Սիրային հարաբերությունը, որ ուզում էինք զարգացնել, ձախողվում է: Սակայն այս սրտաբեկությունների մեջ Աստծո Սուրբ Խոսքը վերանորոգող ճշմարտություն է հայտնում Նրա հանդեպ ունեցած մեր հույսի մասին: Պողոս առաքյալը գրեց. «... Գիտենք, որ նեղությունը համբերություն է առաջացնում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. 5. 3-5):

Երբ մենք վստահում ենք Աստծուն Իր Հոգու միջոցով, Աստված փսփսում է մեր ականջներին այն ճշմարտությունը, թե մենք առանց որևէ պայմանի վայելում ենք Նրա սերը և մի օր իր հետ պիտի լինենք՝ հակառակ մեր դիմադրված բոլոր ցավերին և արգելքներին: Մեզ հուսախաբ անող աշխարհի մեջ որքան լավ է իմանալ, թե Աստված մեզ իսկական հույս է ներշնչում:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ կարող եմ Քո կատարյալ ու անսպառ սիրուն վստահել: Ամեն:

**Քրիստոսով անհույսը հույս է գտնում:**

**Կարդա՛ր**  
**Հռոմ. 5.1-11**

Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ մենք Աստծու որդիներ ենք:  
**Հռոմ. 8.16**

## Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ

**Թ**եև հասարակ խոսքը՝ «Երբ զվարճանում ես, ժամանակը թռչում է»-ն, իրականում հիմք չունի, սակայն փորձառությունը հաստատում է դրա ճշմարտությունը:

Երբ կյանքը հաճելի է թվում, ժամանակը շատ արագ է անցնում: Տուր ինձ հաճելի պարտականություն կամ մեկին, որի ընկերակցությունը սիրում եմ, և ժամանակը անպատեհ պիտի թվա:

Այս ճշմարտության առնչությամբ փորձառությունս ինձ նոր հասկացողություն է տվել Հայտնություն 4-ի մասին: Անցյալում, երբ նկատի ունեցա այնտեղ նշված Աստծո գահի շուրջ կանգնած չորս էակներին, որոնք շարունակում են կրկնել նույն բառերը, մտածեցի, թե դա ինչքան ձանձրացուցիչ կարող է լինել:

Հիմա այդպես չեմ մտածում: Մտածում եմ իրենց աչքով տեսած սքանչելի պատկերների մասին (Հմ. 8): Մտածում եմ նրանց հիացումի մասին Աստծո իմաստուն և սիրառատ միջամտության շուրջ: Ապա խորհում եմ՝ ասելով, թե ի՞նչ ավելի լավ պատասխան կարելի է տալ: Ի՞նչ է մնում ասելու, եթե ոչ՝ «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ»:

Արդյոք ձաճրացուցի՞չ է կրկնել նույն խոսքը դարձյալ ու դարձյալ: Ո՛չ, եթե սիրելի մարդու կողքին ես կանգնած: Ո՛չ, երբ անում ես այն, ինչ կարող ես:

Չորս էակների նման մենք էլ ձևավորված ենք Աստծուն փառավորելու համար: Մեր կյանքերը բնավ ձանձրացուցիչ չպիտի լինեն, եթե կենտրոնացնենք մեր ուշադրությունը Իր վրա ու իրականացնենք այդ նպատակը:

**Աղոթք** - Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Տե՛ր, Հայր Աստված մեր. Քեզ ենք սրտանց ուղղում առավոտի մեր քաղցր երգերը: Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Սո՛ւրբ ես, Տե՛ր, բյուր բարիք տվող, ամենքի Տե՛ր, Եռյակ անձ, մի Աստված: Ամեն:

**Աստծո հետ ներդաշնակ սիրտը չի կարող չերգել Նրա փառքը:**

### Կարդա Հայտնություն 4

Նրանք հանգիստ չունեին՝ ցերեկ ու գիշեր ասելով. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, ամենակալ Տե՛ր Աստված, որ էր, և որ է, և որ գալու է»: Հայտն. 4.8

## Վերջին խոսքը

**Մ**ի օր համալսարանի փիլիսոփայություն դասի ընթացքում մի ուսանող խոռվահոլից ակնարկ արեց դասախոսի տեսակետների մասին: Ի զարմանա մյուս ուսանողների՝ դասախոսը չնորհակալություն հայտնեց աշակերտին ու շարունակեց դասը: Երբ հետո իրեն հարց տրվեց, թե ինչու չպատասխանեց ուսանողին, նա ասաց. «Ես փորձում եմ պահել վերջին խոսքը չասելու սովորությունը»:

Այս դասախոսը պատվում էր ու սիրում Աստծուն, նաև ուզում մարմնացնել հեզ հոգու՝ իր սերը ցույց տալու համար: Նրա խոսքերը ինձ հիշեցրին անցյալից մի ուրիշ Ուսուցչի, որ գրեց ժողովողի գիրքը: Հակառակ նրան, որ նա չի ասում ինչպես վարվել բարկացող մարդու հետ, ասում է, թե երբ Տիրոջը մոտենանք, պետք է ուշադիր լինենք մեր քայլերին ու «մոտենանք լսելու համար»՝ փոխանակ շտապելու բերանով պատասխանելու ու սրտով չչտապելու: Այդ բանը անելով՝ մենք ընդունում ենք, թե Աստված Տեր է, ու մենք իր ստեղծագործությունն ենք (Ժող. 5.1-2):

Ի՞նչպես ես դու Աստծուն մոտենում: Եթե զգում ես, թե քո կեցվածքը որոշ ճշտումների կարիք ունի, ինչո՞ւ մի քիչ ավելի ժամանակ չես տալիս՝ նկատի առնելու Աստծո մեծությունն ու փառավորությունը: Երբ մտածենք Նրա անսահման իմաստություն, զորություն ու ներկայություն մասին, մենք կարող ենք հարգել մեր հանդեպ իր ունեցած անբացատրելի սերը: Խոնարհություն այս կեցվածքով մենք էլ վերջին խոսքը պիտի ասենք:

**Աղոթք** - Տեր, ուզում եմ Քեզ պատվել ու լռությամբ Քո առջև խոնարհվել: Սովորեցրու ինձ ինչպես աղոթել և լսել: Ամեն:

**Զգուշությամբ ընտրված բառերը Աստծուն են պատվում:**

### Կարդա՛ ժողովող 5.1-7

Թող քո բերանը չչտապի, և ոչ էլ սիրտդ հապճեպ խոսք ասի Աստծու առջև: Ժող. 5.1

## Ցնծություն

**Ե**ս շուտով կհասանեմ կյանքիս նոր եղանակին՝ ծերության՝ «ձմռանը», սակայն այնտեղ չեմ դեռ: Թեև տարիները սահում ու անցնում են, ու ես շատ հաճախ ցանկանում եմ կյանքի ընթացքի դանդաղելը, բայց ունեմ ցնծություն, որ ինձ պահում է: Յուրաքանչյուր օրը Տիրոջից ինձ տրված նոր օր է: Սաղմոսերգուհի Հետ ես էլ ցնծությամբ կարող եմ գոհ սրտով ասել. «Բարի է գոհաբանել Տիրոջը, սաղմոս երգել քո անվանը, ո՛վ Բարձրյալ: Առավոտյան պատմել քո ողորմությունը, և գիշերը՝ քո ճշմարտությունը» (Սաղմ. 91.1-2): Թեև կյանքս ունի իր պայքարները, և ուրիշների կրած ցավերն ու դժվարություններն էլ են ինձ նեղացնում, սակայն Աստված օգնում է, որ միանամ Սաղմոսերգուհին՝ ցնծալու Իր ձեռքերի գործերի համար (Հմ. 4): Ցնծում եմ Իր տված բոլոր օրհնությունների համար՝ ընտանիքիս, բարեկամներիս, ինչպես նաև կատարած գործերիս հաջողության համար: Ցնծում եմ Աստծո հրաշագործ ստեղծագործության ու Իր ներշնչող Խոսքի համար: Ցնծում եմ, որովհետև Տեր Հիսուսը մեզ այնքան սիրեց, որ պատրաստ եղավ մեռնելու մեր մեղքերի համար: Ու նաև ցնծում եմ ճշմարիտ ուրախության աղբյուր Հոգուն մեզ տալու համար (Հռոմ. 15.13): Բոլոր նրանք, ովքեր Տիրոջը հավատում են, «արմավենու պես կծաղկեն... ու դրանք պտղաբեր կլինեն նաև ծերության ժամանակ...» (Սաղմ. 92.13-14):

Ի՞նչ պտուղ է դա: Հոգ չէ թե կյանքի որ եղանակին ու ինչպիսի վիճակների մեջ ենք, կարող ենք Իր սիրո օրինակները լինել մեր ապրած կյանքով ու ասած խոսքերով: Ցնծություն կա Տիրոջը ճանաչելու, Իր համար ապրելու և ուրիշներին Իր մասին պատմելու մեր գործում:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք ցնծության համար, որ մերն է Յոզու միջոցով: Ամեն:

Կարդա՛ր  
Սաղմոս 91

Պիտի ցնծամ ձեռքիդ գործերով:  
Սաղմ. 91.5

**Աստված է ցնծություն տվողը:**

## Մանուկի նման

**Տ**արիներ առաջ երկու տարեկան աղջկաս հետ երեկոյան մեր Տաղոթքն անելուց հետո կնոջս զարմանք պատճառեց այս հարցը.

- Մայրի՛կ, ո՞ւր է Հիսուսը:

Կինս՝ Լուանը պատասխանեց ու ասաց.

- Հիսուսը երկնքում է ու ամեն տեղ և հենց հիմա այստեղ է՝ մեզ հետ: Նա նաև կարող է քո սրտի մեջ լինել, եթե խնդրես:

- Ուզում եմ, որ Հիսուսը իմ սրտում լինի:

- Այս օրերին կարող ես խնդրել Իրենից:

- Ուզում եմ հիմա խնդրել, որ իմ սրտի մեջ լինի:

Ուստի մեր աղջիկը աղոթեց ու ասաց. «Հիսո՛ւս, արի սրտիս մեջ ու այնտեղ բնակվիր»: Ու դա եղավ իր հավատքի ճամփորդության սկիզբը Տիրոջ հետ:

Երբ Հիսուսի աշակերտները հարցրին, թե ով է մեծագույնը երկնքի Թագավորության մեջ, Նա կանչեց մի մանուկի, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու ասաց. «...Եթե դարձի չգաք ու երեխաների նման չլինեք, երկնքի արքայությունն չեք մտնի: Եվ ով իմ անունով այսպիսի մեկ երեխայի ընդունի, ինձ ընդունած կլինի» (Մատթ. 18.3-5): Հիսուսի ակնոցով մենք տեսնում ենք մի մանուկի՝ որպես մեր հավատքի տիպար օրինակ: Նաև մեզ կոչ է արվում ընդունել բոլոր նրանց, որոնք իրենց սրտերն են բացում Իրեն ընդունելու համար: Հիսուսն ասաց. «Արդ երեխաներին թո՛ւյլ տվեք և նրանց մի՛ արգելեք ինձ մոտ գալ, քանի որ երկնքի արքայությունն այդպիսիներինն է» (19.14):

**Աղոթք** - Տե՛ր Գիսուս, շնորհակալ եմք, որ մեզ հրավիրում ես Քեզ հետևելու մանկական վստահ հավատքով: Ամեն:

**Մեր հավատքը Տեր Գիսուսի վրա վստահություն ունեցող մանուկի նման է:**

Կարդա՛

Մատթ.18.1-5,19.13-14

...եթե դարձի չգաք ու երեխաների նման չլինեք, երկնքի արքայությունն չեք մտնի: Մատթ. 18.3

## Կարող և հասանելի

**Ա**մուսինս դեռ աշխատանքի վայրում էր, երբ մորս քաղցկեղի ախտաճանաչման ցավալի լուրը լսեցի: Ամուսնուս հեռախոսին հաղորդագրություն ուղարկեցի ու փորձեցի կապ հաստատել բարեկամների և ընտանիքի անդամների հետ: Ոչ ոք հասանելի չէր: Դողդողացող ձեռքերովս երեսա ծածկեցի ու հեծկտալով ասացի. «Տե՛ր, օգնիր ինձ»: Վստահություն ունենալով Աստծո ներկայության վրա՝ մխիթարվեցի իմ առանձնությունս: Շնորհակալություն հայտնեցի, երբ ամուսինս տուն վերադարձավ, ու բարեկամներից ու ընտանիքի անդամներից աջակցության ու զորակցության խոսքեր լսեցի: Առաջին մի քանի ժամերին Աստծո ներկայության հանդարտեցնող զգացումի գիտակցությունը վստահորեն հաստատեց, որ հավատարիմ Աստված պատրաստ կերպով հասանելի է՝ ուր որ և երբ օգնության կարիք զգամ: 45-րդ Սաղմոսի մեջ Սաղմոսերգուն հայտարարում է, թե Աստված մեր հաստատ ապավենը, զորությունն ու օգնականն է (Հմ. 2): Երբ ունենանք այն զգացումը, թե քոտսային վիճակի մեջ ենք, ու այն ամենը, ինչ մտածում ենք, թե հաստատ ու անշարժ են, հանկարծ փուլ են գալիս, երկյուղ չպետք է ունենանք (Հմ. 3): Աստված չի սասանվում (Հմ. 4-7): Նրա զորությունը բացահայտ և ազդու է (Հմ. 8-9): Մեր հավիտենական պահապանը Իր անփոփոխ բնության վստահությունն է պարգևում մեզ (Հմ. 10): Տերը՝ մեր պատսպարանը, մեզ հետ է մնում հավիտյան (Հմ. 11): Աստված Իրեն հետևողներ ստեղծեց, որպեսզի նրանք աղոթքով օգնեն ու քաջալերեն իրար: Սակայն Նա նաև հաստատում է, թե Ինքը հարատև կարող ու հասանելի է: Երբ Աստծուն կանչենք, կարող ենք վստահ լինել, թե կարող ենք Իրեն վստահել, որովհետև խոստացել է մեր բոլոր կարիքները հոգալ:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ վստահեցնում ես, թե հարատև հասանելի ես, որովհետև միշտ մեզ հետ ես: Ամեն:

**Աստված միշտ կարող ու հասանելի է մեզ օգնելու:**

### Կարդա՛ր Սաղմոս 45

Աստված մեր ապավենն ու զորությունն է մեր և մեր օգնականը մեզ հասած խիստ նեղությունների մեջ: Սաղմ. 45.2

## Ձյան պես ճերմակ

**Ա**նցյալ դեկտեմբերին ընտանիքս ու ես լեռները գնացինք: Մեր ամբողջ կյանքի ընթացքում բարեխառն կլիմա ունեցող չրջանում ենք ապրել: Հետևաբար՝ առաջին անգամն էր, որ տեսնում էինք ձյունը՝ իր բոլոր սքանչելիություններով: Մինչ ըմբռնված էինք դաշտերը ծածկող գեղեցիկ սպիտակ ծածկոցը, ամուսինս մեջբերեց Նսայի մարգարեի խոսքերը. «...Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կդարձնեմ» (Ես. 1.18): Հարց տալուց հետո, թե ինչ է նշանակում «արյան պես կարմիր», մեր երեք տարեկան աղջիկը ասաց. «Կարմիր գույնը վա՞տ բան է»: Նա գիտի, թե Աստված մեղքերը ատում է, սակայն այս համարը գույների մասին չէ, որ խոսում է: Մարգարեն նկարագրում է այն գործվոր կարմիր գույն ունեցող ներկը, որ ստացվում է փոքրիկ միջատի ձվերից: Հագուստները երկու անգամ թաթախվում էին այս կարմիր գույն ունեցող ներկի մեջ, որպեսզի գույնը մնայուն լինի: Ո՛չ անձրևը ու ո՛չ էլ լվանալը չեն կարող այդ գույնը ջնջել: Մեղքը դրա նման է: Ոչ մի մարդկային ջանք չի կարող այն սրբել, որովհետև այն արմատացած է սրտի մեջ: Միայն Աստված կարող է մաքրել սիրտը մեղքերից: Ու երբ նայեցինք լեռներին, հիացանք նրանց ճերմակության վրա, որ արյան կարմիր գույնով ներկած մի կտոր լվանալով ու մաքրելով հնարավոր չի լինի ճերմակացնել: Եթե հետևենք Պետրոսի ասած խոսքին. «Ուրեմն ապաշխարեցե՛ք ու դարձի՛ եկեք, որպեսզի ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք. Առ. 3.19), Աստված կների ու նոր կյանք կշնորհի մեզ:

Միայն Տեր Հիսուսի գոհողության միջոցով ենք կարող ստանալ այն, ինչ որ ոչ ոք չի կարող տալ մեզ՝ մաքուր մի սիրտ: Ի՛նչ հիանալի պարգև:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմք, որ մեր մեղքերը ներում ես ու մաքրում դրանք՝ ծյունից ավելի ճերմակ դարձնելով: Ամեն:

**Երբ Աստված ներում է, նաև մաքրում է մեզ:**

### Կարդա՛ Եսայի 1. 16-20

Եթե ձեր մեղքերը արյան պես կարմիր են, ապա ես ձյան պես ճերմակ կը դարձնեմ: Ես. 1.18



## Ազգային գանձ

**Ե**րբ մի ծանուցող փոխեց Միքելանջելոյի Սուրբ Գրային հերոս Դավթի հռչակավոր մարմարյա քանդակի պատկերը, Իտալիայի կառավարութիւնն ու թանգարանի պատասխանատուները առարկեցին: Մշակութային մի պաշտոնյա ասաց, թե պատկերացնել Դավթին ռազմական հրացանը ուսին, փոխանակ պարսատիկի, պիտի լիներ հիմնական խախտում՝ «մուրճով հարվածելու նման կամ ավելի վատ»:

Առաջին դարի Երուսաղեմի մեջ Դավթը հիշված էր որպես Իսրայելի անմոռանալի հուշերի և մեծագույն հույսի երաժիշտ հովիւ և զինվոր թագավոր: Մարգարեները նախապես ասացին Իսրայելի ժողովրդին, թե Դավթի որդիները պիտի հաղթեն իրենց թշնամիներին: Ուստի դարեր հետո, երբ մեծ բազմութիւնը դիմավորեց Հիսուսին՝ որպես Դավթի Որդի (Մատթ. 21.6-9), ակնկալեց, որ Նա հեղափոխութիւն առաջացնի ու տապալի հռոմեական իշխանութիւնը: Սակայն Հիսուսը այդ ակնկալության փոխարեն տաճարի մեջ դրված լուծայափոխների սեղանները տապալեց՝ ասելով, թե Իր Հոր տունը աղոթքի տուն է բոլոր ազգերի համար: Իսրայելի առաջնորդները սաստիկ բարկացան, որովհետև նրանց ակնկալած Մեսիային ու Դավթի Որդուն չէր, որ տեսան: Հետեւաբար առանց գիտենալու, թե ինչ են անում, դիմեցին հռոմեացի դահիճներին՝ մուրճով զարկելու Իսրայելի ճշմարիտ փառքը եղողի ոտքերին ու ձեռքերին: Տեր Հիսուսը, փոխանակ նրանց կանգնեցնելու, թույլ տվեց, որ Իրեն արհամարհանքի խաչը բարձրացնեն՝ եղծված ու անարգված: Միայն Նրա հարությամբ էր, որ պիտի իմացվեր, թե Դավթի Որդին սիրով էր Իր թշնամիներին հաղթել ու բոլոր ազգերի որդիներին պատվիրել այդ լուրը տարածել:

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, դժվար է ընդունել: Շփոթվում եմք ու փորձում պաշտպանել մեր սիրած բաները քո մեծ ու անզին սիրո փոխարեն: Ամեն:

**Տեր Հիսուսը ցույց է տալիս, թե Աստված միշտ էլ ավելին է, քան մեր ակնկալածները:**

### Կարդա՛ր

Մատթեոս 21.12-16

Օվսաննա՛ր Դավթի Որդուն, օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը: Մատթ. 21.9

## Ժամանակը գնել

**Շատերի նման ես էլ եմ պայքարում մարզանք անելու համար: Ուստի վերջերս գնեցի քայլաչափ գործիք, որ հաշվում է քայլերս: Շատ պարզ գործիք է, սակայն հիանալի միջոց է՝ ինձ մղելու, որ ավելի շատ քայլեմ: Փոխանակ գանգատվելու, երբ նստած տեղիցս ելնելու լինեմ, առիթ է ներկայանում մի քանի քայլ ավելի անելու: Սովորական բաներ անելը, ինչպես՝ մի գավաթ ջուր բերել զավակներիս, առիթ է, որ ավելի մեծ նպատակներ հետապնդեմ: Այդ իմաստով իմ գնած քայլաչափ գործիքը փոխեց կեցվածքս ու մղումս՝ ավելին անելու: Ներկայումս ցանկանում եմ հավելյալ քայլ առնել, երբ առիթ ունենամ:**

Ես մտածում եմ, թե մեր Քրիստոնեական հավատքի կյանքն էլ նման է այս պարագային: Ամեն օր առիթ ունենք սիրելու, ծառայելու ու մարդկանց հետ հարաբերվելու, ինչպես Պողոսն է քաջալերում Կողոսացիս 4.5-ի մեջ: Սակայն ես տեսնո՞ւմ եմ նման առիթներ: Ուշադրություն դարձնո՞ւմ եմ ինձ տրված առիթներով քաջալերվելու՝ սովորական բաներ անելու համար: Աստված գործի վրա է ամեն անձի կյանքի մեջ, որի հետ կապի մեջ եմ՝ սկսած ընտանիքիցս, աշխատակիցներիցս ու նպարավաճառի խանութի մեջ գործող պաշտոնյայից: Յուրաքանչյուր համագործակցություն ինձ առիթ է ընծայում ուշադրություն դարձնելու Աստծո արարածներին, նույնիսկ եթե դրանք շատ փոքր են թվում, ինչպես ճաշարահի մեջ գործող անձին հարցնել, թե ինչպես է:

Ո՞վ գիտի, թե Աստված ինչեր կարող է անել պահերին, երբ մեր առջև դրված հաղորդակցության ու համագործակցության առիթները օգտագործենք:

**Աղոթք** - Տե՛ր, միշտ բազմաթիվ առիթներ կան սիրելու, լսելու ու ծառայելու մեր շուրջ եղող մարդկանց: Խնդրում եմք օգնիք մեզ, որպեսզի տեսնենք ուրիշների կարիքները: Ամեն:

**Տրված ամեն առիթ օգտագործիր որևէ մեկին ծառայելու համար:**

Կարդա՛ր  
Կողոս. 4. 2-6

Դրսիցների հետ իմաստությամբ վարվեցեք ու ժամանակը օգտագործեցեք: Կող. 4.5

## ԻՆչպե՞ս կարելի է կյանքը փոխել

**Շ**ատ անգամ մեր կյանքերը ուրիշների ունեցած հզոր ազդեցու-  
թյան պատճառով կարող են փոխվել ակնթարթի մեջ: Երաժշ-  
տի գործն էր, որ օգնեց մեծ վարկ ունեցող աշխարհահռչակ ար-  
դի երաժիշտ Բրյուս Սփրինկսթինին իր ունեցած դժվար մանկու-  
թյան ու հարատև ճնշումների պայքարի մեջ: Նա իմաստ գտավ  
իր գործի մեջ իր փորձառությամբ ունեցած ճշմարտությունների  
միջոցով՝ ասելով, թե «Դու կարող ես մե-  
կի կյանքը փոխել երեք ըոպեի մեջ՝ ճիշտ  
երգ երգելով»: Երգի բառերի նման ու-  
րիշների ընտրանի խոսքերն էլ կարող են  
մեզ հույս ներշնչել և նույնիսկ մեր  
կյանքերի ընթացքը փոխել: Վստահ եմ,  
թե մեզինքն շատերը կարող են կիսել  
մարդկանց հետ մեր ունեցած խոսակցու-  
թյունների պատմությունները, որոնք մեր կյանքերի վրա մեծ ազ-  
դեցություն են թողել, ինչպես մի բարեկամի ազնիվ բառերը,  
որոնք օգնել են մեզ մեր ունեցած տաղնապալի օրերի մեջ:

Սրա համար է, որ Առակաց գիրքը հստակ ասում է, թե մեր պա-  
տասխանատվությունն է մեր խոսքերին ուշադրություն դարձնել ու  
իմաստությամբ գործածել դրանք: Աստվածաշունչը մեր խոսքերը  
նկատի չի ունենում պարզապես որպես «խոսակցություն»: Այլ  
ընդհակառակը՝ մեզ սովորեցնում է, թե մեր խոսքերը կարող են  
մահվան կամ կենաց հետևանքներ ունենալ (18:21): Միայն մի քա-  
նի բառով մենք կարող ենք խորտակել մեկի հոգին և կամ իմաստու-  
թյան և հույսի խոսքերով անուցել ու զորացնել ուրիշներին (15:4):

Իմաստություն խնդրենք Աստծուց՝ ուրիշներին ծառայելու  
մեր խոսքերի միջոցով: Լավ ընտրված մի քանի բառերով Աստ-  
ված կարող է մեզ գործածել կյանք փոխելու համար:

**Աղոթք** - Տե՛ր, օգնիր մեզ, որ բնավ պարզ բան չդիտենք լեզվի  
հզոր պարզև: Թող իմաստությամբ գործածենք մեր խոսքերը՝ ու-  
րիշներին քաջալերելու և նրանց հույս ներշնչելու համար: Ամեն:

**Տերը մեզ գործություն է տվել ուրիշների կյանքի վրա  
ազդեցություն ունենալու մեր խոսքերով:**

Կարդա՛ Առ. 15.4,  
16.24, 18.21

Բարի խոսքը մեղրի  
խորիսխ է, և հոգու  
բժշկությունն է նրա  
քաղցրությունը:  
Առ. 16.24

## Հիանալի է

**Բ**նության մեջ բոլորս էլ զրկված ենք Նրանից (Հռոմ. 3.23):  
Տեր Հիսուսը Նրա լույսն է (Եբ. 1.3) և նրանք, որոնք Նրան  
ճանաչեցին, տեսան Նրան (Հովհ. 1.14):

Հին Կտարարանի մեջ կարդում ենք, որ Նա լցրեց խորանը  
(Ել. 40.34-35), ու Իսրայելի ժողովուրդը Նրա առաջնորդու-  
թյունը վայելեց: Ու մեզ էլ խոստում է տրվել, թե վերջին օրե-  
րին երկինքը պիտի լուսավորվի Նրա-  
նով, ու այլևս արևի ու լուսնի լույսի  
կարիքը չպիտի լինի (Հայտ 21.23):

Ի՞նչ է «Նա»-ն վերևում հիշված  
խոսքերի մեջ: «Նա»-ն Աստծո փառքն  
է, որ հիանալի ու սքանչելի է:

Աստվածաշնչի էջերի վրա մեզ աս-  
ված է, թե մենք կարող ենք վայելել Աստ-  
ծո հիանալի փառքի նշույլները, մինչ բնակվում ենք Իր ստեղ-  
ծած աշխարհի վրա: Աստծո փառքը նկարագրված է որպես Իր  
էության արտաքին ներկայացում: Քանի որ մենք չենք կարող  
տեսնել Աստծուն, Նա մեզ Իր ներկայություն ու գործերի հս-  
տակ պատկերն է տալիս տիեզերքի վիթխարիություն ու մեր  
փրկության մեծության մեջ, ինչպես նաև Սուրբ Հոգու ներկա-  
յություն՝ մեր կյանքերի մեջ:

Այսօր փնտրիր Աստծո փառքն ու Իր մեծության ապացույ-  
ցը: Դու պիտի կարողանաս տեսնել Նրան բնության գեղեցկու-  
թյան, մանկան խնդուքի և ուրիշների սիրո մեջ: Աստված տա-  
կավին Իր փառքով է լցնում աշխարհը:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Երկնավոր Հայր, Քո փառքի  
նշույլի համար, որ տեսնում եմք այսօր: Շնորհակալ եմ մեր  
Փրկչի մեջ եղած փառքի ու Քո փառքի՝ ամբողջական գիտու-  
թյան վստահ հույսի համար, որ պիտի վայելենք երկնքում  
հավիտյան: Ամեն:

**Մենք կարող ենք տեսնել ու վայելել Աստծո փառքը հիմա  
և հավիտյան:**

Կարդա՛ Հայտն.

21.1-3, 10-11, 23

...թող նրա փառքով  
ողջ երկիրը լցվի.  
թող լինի, թող լինի:  
Սաղմ. 71.19

## Նրա ձայնը լսել

**Ե**ս լսողություն ղեկավարություն ունեմ. ինչպես հայրս էր ասում, «*Խուլ եմ մեկ ականջով ու չեմ լսում մյուս ականջով*»: Հետևաբար լսելու գործիք եմ գործածում:

Ընդհանրապես այս գործիքները լավ են գործում՝ բացի այն տեղերից, ուր շրջապատում շատ այլ ձայներ կան: Այդ պարագաներում գործիքս ներառում է ամեն ձայն, ու ես չեմ կարողանում լսել ինձ հետ խոսողին:

Նույնն է պարագան մեր կյանքի մեջ. ձայների բազմությունը խափանում է Աստծո մեղմ ձայնը: Բանաստեղծ Թ.Ս. Էլիոթը հարցնում է. «Ո՞ւր պետք է հնարավոր լինի Խոսքը գտնել, և ո՞ւր պիտի Խոսքը արձագանքի»: «Ո՛չ այստեղ, որովհետև բավարար լուսություն չկա»:

Բարեբախտաբար, լսելու իմ գործիքը հնարավորություն ունի շուրջս գտնվող ձայները կտրելու և օգնելու ինձ, որ կարողանամ լսել այն ձայնը, որն ուզում եմ: Այդպես էլ, հակառակ մեր շուրջ եղած ձայների, եթե լուսությամբ մեր հոգով լսենք, պիտի կարողանանք լսել Աստծո «մեղմ» ձայնը (Գ Թագ. 19.11-12):

Նա մեզ հետ խոսում է ամեն օր ու քաջալերում մեր ցավերի ու նեղությունների մեջ: Նա մեզ կանչում է մեր վշտերի, ինչպես նաև մեր մեծագույն ուրախությունների բացակայության ու անկատարության մեջ:

Աստված հիմնականում մեզ հետ խոսում է Իր Խոսքի միջոցով (Ա Թես. 2.13): Երբ վերցնես Իր գիրքն ու կարդաս, դու էլ Իր ձայնը պիտի լսես: Նա քեզ սիրում է քո կարծածից շատ ավելի ու ցանկանում, որ լսես, ինչ որ ուզում է քեզ ասել:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ Քո Խոսքի համար: Օգնիր ինձ, որ Քո ձայնը լսեմ, երբ Քեզ հետ առանձին ժամանակ եմ անցկացնում: Ամեն:

**Աստված խոսում է Իր Խոսքի միջոցով, երբ ժամանակ ենք տրամադրում Իրեն լսելու:**

### Կարդա՛

**Յովիաննես 10.25-30**

Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, ու ես նրանց ճանաչում եմ, և իմ հետուկից գալիս են: Յովի. 10.27

## Դժվարության ժամանակ՝ փառաբանություն

«Քաղցկե՛ղ է»: Ուզեցի ուժեղ լինել, երբ մայրս այս խոսքը ասաց ինձ, սակայն արցունքներս հոսեցին: Դու երբեք չպիտի ուզես լսել այդ խոսքը, ոչ մի անգամ: Սակայն մորս պարագայում սա երրորդ անգամն էր: Իր վերջին ստուգումը ցույց էր տվել, թե այս անգամ թևատակի քաղցկեղը մահացու էր: Թեև մայրս էր այս վատ լուրը տվողը, սակայն նա՛ պետք է ինձ հանգստացներ: Իր պատասխանը աչքերս բացեց, երբ ասաց. «Գիտեմ, որ Աստված միշտ բարի է իմ հանդեպ ու հավատարիմ»: Նույնիսկ երբ նա դժվար վիրահատության պիտի ենթարկվեր ու հետագայում ճառագայթային բուժում ստանար, վստահ էր Աստծո ներկայության ու հավատարմության նկատմամբ:

Կարդա՛ր  
Յոթ 1.13-22

...եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք:  
Յոթ 2.10

Որքա՛ն էր մայրս նման Հոբին: Հորը կորցրեց զավակներին, հարստությունը ու առողջությունը: Սակայն այդ լուրը իմանալուց հետո Հոբ 1.20-ը մեզ ասում է. «...գետին փռվելով՝ երկրպագեց»: Երբ իրեն խորհուրդ տվեցին Աստծուն անիծել, նա ասաց. «...եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, չարիքներին չհամբերե՞նք» (2.10): Որքա՛ն հզոր խոսք է սա: Թեև Հորը հետզանգատվեց, սակայն հաստատեց, թե Աստված միշտ նույնն է: Նա գիտեր, թե Աստված դեռ իր հետ էր ու հոգ էր տանում:

Մեզնից շատերի համար փառաբանությունը առաջին պատասխանը չէ դժվար պահին: Հաճախ հանգամանքների տված ցավերը այնքան մեծ են, որ մենք վախենում ենք ու բարկանում: Սակայն մորս տված պատասխանը հիշեցրեց ինձ, թե Աստված ներկա է ու բարի: Նա մեզ պիտի օգնի նեղության ու ցավի ժամանակ:

**Աղոթք** - Տե՛ր, պատրաստիր ինձ այն պահերի համար, երբ դժվար է թվում Քեզ փառաբանելը: Ամեն:

**Նույնիսկ մեր ամենադժվար պահերին մենք կարող ենք մեր աչքերը հառել Տիրոջը:**

## Ամենքի համար ծածկոց

**Լ**այնրս Վան Փելլիթը «Պիստակներ» ծիծաղաշարժ երիզներում նշված է որպես զվարճախոս ու սրամիտ, սակայն միաժամանակ անապահովություն զգացում ունեցող մեկը: Մենք էլ նրա նման կարող ենք ունենալ վախեր ու անապահովության զգացում:

Պետրոս առաքյալը շատ լավ գիտեր այս վախի մասին: Երբ Հիսուսը ձերբակալվեց, Պետրոսն իր քաջությունը ցույց տվեց՝ նրա հտեկից դնալով քահանայապետի գավիթը: Սակայն շատ չանցած՝ նա սկսեց իր վախը ցույց տալ սուտ խոսելով իր ինքնությունը թաքցնելու համար (Հովհ. 18.15-26): Նա անշնորհ խոսքեր ասաց և ուրացավ իր Տիրոջը: Սակայն Հիսուսը բնավ չդադարեց նրան սիրել ու նորոգեց նրան (Հովհ. 21.15-19): Պետրոսի դրած շեշտը սիրո վրա եկավ Տեր Հիսուսի՝ իր ունեցած այդ խոր սիրո փորձառությունից, ու նա շեշտեց սիրո կարևորությունը մեր հարաբերությունների մեջ այս խոսքով. «Ամեն բանից առաջ»: Համարի հզորությունը շարունակվում է իր արած քաջակերական խոսքով, որ ասում է. «Ջերմեռանդ սեր ունեցեք իրար հանդեպ, որովհետև սերը ծածկում է մեղքերի բազմությունը»:

Երբևէ նման ծածկոցի կարիք ունեցե՞լ ես: Ես ունեցել եմ: Մի բան ասելուց կամ անելուց հետո, երբ զղջացել եմ, զգացել եմ հանցանքի ամոթն ու դառնությունը: Կարիք եմ ունեցել ծածկվելու, այնպես, ինչպես Հիսուսը ծածկեց շնորհագուրդի ու ամոթալից ժողովրդին Ավետարանների մեջ: Հիսուսի հետևորդների համար սերը ծածկոց է՝ շնորհքով ու քաջությունով տրված ուրիշների հանգստի ու ազատագրումի համար: Որպես նման մեծ սեր ստացողներ՝ եկեք մենք էլ նույն սերը ցույց տանք ուրիշներին:

**Աղոթք** - Հայր, Քո սերը Հիսուսի մեջ ու միջոցով մեզ ազատել է դարձյալ ու դարձյալ: Օգնիր մեզ, որ միջոց լինենք Քո փրկող սերը ուրիշներին տալու: Ամեն:

**Աստված քեզ և ինձ սիրում է: Ուստի սիրենք իրար:**

### Կարդա՛

**Հովհ. 18.15-18, 25-27**

Բայց ամենից առաջ իրար նկատմամբ ջերմ սեր ունեցեք, որովհետև սերը ծածկում է մեղքերի շատությունը: Ա Պետ. 4.8

## Պատերազմ և հաղթանակ

**Վ**արդանանց նշանակում է պատերազմ և հաղթանակ: Երբ կարդում ենք Վարդանանց պատմությունը, հաստատում ենք, թե այդ պատերազմը բարի էր՝ մղված թշնամու դեմ հավատքի համար, իսկ հաղթանակը՝ բարոյական: Պարսիկները 428-ին Հայաստանը գրավեցին, վերջ դրեցին Արշակունյաց թագավորությունը, նոր կառավարիչներ նշանակեցին, ծանր տուրքեր դրեցին եկեղեցիների ու քաղաքների վրա և Քրիստոնեությունը սուտ և սխալ կրոն հռչակեցին: Գործված անարդարությունը տեսնելով՝ հայր ոտքի ելավ՝ պաշտպանելու իր արդար իրավունքները և խղճի ու մտքի ազատությունը, 451-ին բարի պատերազմ մղեց և բարոյական հաղթանակ ապահովեց: Վարդանանք հաղթանակը ապահովեցին.

Կարդա՛ր  
Բ ՏԻՄ. 4.1-8

Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատը պահեցի: Այսուհետև մնում է ինձ արդարության պսակը: Բ ՏԻՄ. 4.7-8

1. Հաստատակամ լինելով. նրանք ուխտեցին հաստատ ու հավատարիմ մնալ իրենց հավատքի մեջ: 2. Բարեպաշտ լինելով. նրանք պատրաստ եղան իրենց հավատքը ապրելու ճամարտությամբ, պարկեշտությամբ, անկեղծությամբ և բարեպաշտությամբ: Նրանք Տեր Հիսուսի խաչը իրենց պարծանքը, փառքն ու ուրախությունը նկատեցին:

3. Քաջասիրտ լինելով. Վարդանանց հերոսները դյուցազնորեն կռվեցին հաստատ հավատքով ու համոզումով: 4. Նահատակվելով. նրանք նահատակվեցին հանուն Քրիստոսի և ի սեր հայրենիքի:

Հավատքի համար մղված պատերազմները, ինչպես այս պատերազմը, բարի են: Ուստի Վարդանանց հերոսներին ոգեկոչելով՝ մենք էլ ուխտենք բարի պատերազմ մղել ու արժանի լինենք փառավոր հաղթանակի ու կենաց պսակի:

**Աղոթք** - Ողորմած Տեր, մինչ ոգեկոչում ենք Վարդանանց հերոսներին, խնդրում ենք՝ տո՛ւր մեզ ուժն ու զորությունը պատերազմը շարունակելու չարի դեմ հաղթանակի մեծ հույսով: Ամեն:

**Աստված մեզ էլ արժանի պիտի նկատի արդարության պսակին, եթե բարի պատերազմ մղենք:**



## ԱՆՆՄԱՆ բարեկամներ

**Դ**իմատետրի բարեկամներս շատ հաճախ կայքէջի վրա ավելացնում են կենդանաբանական աշխարհին վերաբերող տեսահոլովակներ: Վերջերս դիտեցի տեսանյութ անբաժան ծովաշան և խոզի մասին, մեկ այլ հոլովակ՝ եղնիկի ու կատվի, ուրիշ անգամ մի կապիկի մասին, որ խնամում է վագրի ձագերին: Նման սիրտ ջերմացնող աննման բարեկամությունները ինձ հիշեցնում են Եղեմական պարտեզի նկարագրությունը: Այս միջավայրի մեջ Ադամն ու Եվան ներդաշնակ ապրեցին Աստծո և իրար հետ: Եվ որովհետև Աստված նրանց տվեց բույսեր՝ ուտելու համար, մտածում եմ, որ կենդանիներն էլ համերաշխ ապրեցին պարտեզի մեջ (Ծնն. 1.30): Սակայն այս յուրահատուկ տեսարանը խանգարվեց, երբ Ադամն ու Եվան մեղք գործեցին (3.21-23): Հիմա մարդկային հարաբերությունների և ստեղծագործության

մեջ մենք տեսնում ենք հարատև պայքար ու բախում: Եսայի մարգարեն մեզ վստահեցնում է, թե մի օր «Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառյուծը ուլի հետ պիտի մակաղի: Հորթը, ցուլն ու առյուծը միասին պիտի սնվեն...» (Ես. 11.6): Շատերը այդ օրը մեկնաբանում են որպես այն օրը, որ Հիսուսը նորից պիտի գա՝ իշխելու: Երբ Նա գա, այլևս բաժանումներ չպիտի լինեն, «...ո՛չ սուգ, ո՛չ ցավ, որովհետև առաջիններն անցան» (Հայտ. 21.4): Այդ վերանորոգված երկրում ստեղծագործությունը պիտի վերածվի իր նախկին համերաշխության, ու ամեն ցեղի, ազգի ու լեզվի ժողովուրդները պիտի միանան իրար՝ Աստծուն պաշտելու համար (7.9-10, 22.1-5): Մինչև այդ օրը Աստված կարող է օգնել մեզ՝ նորոգելու խզված հարաբերությունները ու զարգացնելու նոր ու աննման բարեկամություններ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնիր, որ ուրիշների հետ փորձենք բարեկամություն մշակել ու վերացնել բաժանող արգելքները: Տուր մեզ կարողություն՝ խաղաղության ավետարանի պատգամաբերները լինելու: Ամեն:

**Մի օր Աստված պիտի նորոգի աշխարհը՝ ամբողջական խաղաղություն հաստատելով:**

### Կարդա՛ Եսայի 11. 1-10

Գայլն ու գառը միասին պիտի ուտեն, ընձառյուծը ուլի հետ պիտի մակաղի, հորթը, ցուլն ու առյուծը միասին պիտի սնվեն... Ես. 11.6

## Ամեն տեղ ու ոչ մի տեղ

Քարեկամ մի ընտանիք, որ մեզ նման երիտասարդ զավակ Հիորեցրեց վթարի պատճառով, տեղական մի թերթում մի գովաբանական խոսք արձանագրեց իր աղջկա՝ Լինդսեյի մասին: Ներկայացված ուժեղ պատկերներին մեկը հետևյալն էր: Հիշելուց հետո իրենց տան շուրջ դրված բոլոր նկարներն ու հիշատակի գրուկներն ենք՝ նա գրում է. «Նա ամեն տեղ է, սակայն ոչ մի տեղ չէ»:

Հակառակ այն բանի, որ մեր աղջիկների ժպիտը կարելի է տեսնել նկարներում, նրանց հոգին, որ խայտում էր նրանց դեմքին, հիմա հնարավոր չէ գտնել որևէ տեղ: Նրանք ամեն տեղ են՝ մեր սրտերի, մեր խորհուրդների ու այդ բոլոր նկարների մեջ, և սակայն ոչ մի տեղ չեն:

Աստծո խոսքը մեզ ասում է, թե Քրիստոսով Լինդսեյը և մեր աղջիկը՝ Մելիսան, իրականում ոչ մի տեղ չեն: Նրանք Հիսուսի ներկայություն մեջ են, ինչպես Պողոսն է ասում. «Տիրոջ մոտ մտնել» (Բ Կորնթ. 5.8): Նրա հետ են, որ «ոչ մի տեղ չէ ու ամեն տեղ է»: Վերջապես, Ֆիզիկական աչքերով չէ, որ մենք Աստծուն տեսնում ենք: Հաստատ մեր մտքերի մեջ չունենք իր ժպտադեմ պատկերը: Երբ շուրջը նայես, կարող ես խորհել, թե Նա ոչ մի տեղ չէ: Մակայն ճիշտ հակառակն է: Նա ամեն տեղ է:

Ուր էլ գնանք այս աշխարհի վրա, Աստված այնտեղ է: Նա այնտեղ է՝ մեզ առաջնորդելու, զորացնելու ու հանգստացնելու համար: Չենք կարող գնալ ուր Նա է: Չենք տեսնում Նրան, սակայն Նա ամեն տեղ է: Ամեն փորձություն, որ մենք դիմագրավում ենք, բարի լուր է մեզ համար:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ Դու ինձ հետ ներկա ես ճիշտ այս պահին: Սովորեցրու Քեզ ապավինել: Ամեն:

Կարդա՛ր  
Սաղմոս 138

Ո՞ւր գնամ ես քո հոգուց, կամ քո դեմքից ո՞ւր փախչեմ:  
Սաղմ. 138.7

**Մեր մեծագույն մխիթարությունը ցավի ժամանակ գիտենալն է, թե Աստված մեզ հետ է:**

## Մխալ գծեր

**Գ**աղթականների մեծ թվի ներհոսքը մեր շրջաններ պատճառ եղավ եկեղեցիների թվի աճի: Սակայն այդ աճը մեզ նոր մարտահրավերների առջև է կանգնեցնում: Եկեղեցու անդամները պետք է սովորեն ընդունել նորեկներին, մինչ նրանք փորձում են հարմարվել անծանոթ նոր մշակույթի, նոր լեզվի ու նոր պաշտամունքի ձևի հետ: Այս բոլոր փոփոխությունները կարող են ստեղծել տարօրինակ վիճակ:

Ինչպես ամեն տեղ, եկեղեցում էլ են անըմբռնողություններ ու անհամաձայնություններ պատահում: Եթե առողջ չվարվենք մեր ունեցած տարբերությունների մեջ, դրանք պատճառ են դառում բաժանումների: Առաջին դարի եկեղեցին աճում արձանագրեց, երբ անհամաձայնություն առաջ եկավ: Հունարեն խոսող հրեաները՝ հելլենացիները, առարկություն արեցին արամերեն խոսող հրեաների դեմ: Հելլենացի այրիները անտեսվում էին ամեն օրվա որդրմության սպասարկության ժամանակ (Գործք Առ. 6.1): Ուստի առաքյալները ասացին. «Եղբայրներ՛ր, ձեր միջից յոթ վկայված մարդիկ ընտրեցեք՝ Սուրբ Հոգով և իմաստությամբ լցված, որոնց այս ծառայության վրա դնենք» (Հմ. 3): Ընտրված յոթ օգնականները բոլորն էլ հունարեն անուններ ունեին (Հմ. 5): Այլ խոսքով, նրանք հելլենացի էին, այն խմբի անդամներից, որոնք լքված ու արհամարհված էին: Նրանք լավագույնն էին՝ լավ հասկանալու համար այս պարագան: Առաքյալները աղոթեցին նրանց համար, ու եկեղեցին բարգավաճեց (Հմ. 6-7): Երբ հետամուտ լինենք Սուրբ Հոգու առաջնորդության, լուծումներ կգտնենք հարցեր ծագելու պարագային, որոնք մեզ ավելի աճելու սքանչելի առիթներ են տալիս:

**Աղոթք** - Տե՛ր, օգնիր, որ կարողանանք մեր ուժերը միատեղել ու միասին գործի լծվել Քո շնորհքով ու տված առաջնորդությունով: Ամեն:

**Միատեղ հավաքվելը սկիզբ է միասին լինելը աճման ժամանակ առաջացում է ու միասին աշխատելը՝ հաջողություն:**

### Կարդա՛ր Գործք Առ. 6.1-7

Սրանց առաքյալների առաջ կանգնեցրին, և աղոթելով ձեռք դրեցին նրանց վրա: Եվ Աստուծո խոսքը աճում էր...

Գործք. Առ. 6.6-7:

## Ինձ վստահիր

**Ք**ուրե՛ն ավարտելուց հետո չնչին վճարումով աշխատանք գումար չունեի՝ հաջորդ օրվա ճաշս ապահովելու: Այդ վիճակում սովորեցի Աստծուն ավելի վստահել իմ կարիքների համար:

Այս վիճակս ինձ հիշեցրեց Եղիայի ունեցած փորձառութիւնը: Որպես մարգարե՝ իր ծառայութիւն ընթացքում նա սովորեց Աստծուն վստահել իր օրվա կարիքների համար:

Իսրայելի մեջ լինելիք երաշտի մասին իր արած հայտարարութիւնն իր կարճ ժամանակ անց Աստված նրան ուղարկեց ամալի մի տեղ՝ Բոռաթի վտակի մոտ: Այնտեղ նա վտակի ջրից խմեց, ու

Աստծո հրամանով ազնավները իր ամենօրյա հացն ու միսը բերեցին, որ ուտի ( Թագ. 17.1-4): Սակայն որոշ ժամանակ անց վտակը ցամաքեց: Տերը խոսեց նրան ասելով. «Վե՛ր կաց և գնա՛ սիդոնացիների Սարեփթա քաղաքը և այնտե՛ղ մնա: Ես մի այրի կնոջ պատվիրել եմ, որ քեզ այնտեղ կերակրի» (Հմ. 9): Սարեփթան Փյունիկեի մեջ էր, որի բնակիչները Իսրայելի ժողովրդի թշնամիներն էին: Կարելի՞ էր, որ ինչ-որ մեկը Եղիային տեղ տար, ու աղքատ մի այրի իր ունեցած ուտելիքը նրա հետ բաժաներ:

Մեզնից շատերը պիտի ուզեին, որ Աստված մեր բոլոր կարիքները առատորեն հոգար, նախքան մեր ունեցածը բավարարելը յուրաքանչյուր օրվա համար: Սակայն մեր սիրող Հայրը փսփստում է՝ ասելով, «Ինձ վստահիր»: Ինչպես որ Նա ազնավներին ու այրի կնոջը գործածեց Եղիայի կարիքները հոգալու, մեզ էլ կարող է հոգ տանել: Նրա համար ո՛չ մի բան անհնար չէ: Մենք կարող ենք նրա սիրուն ու զորութիւնը վստահել մեր ամենօրյա կարիքների համար:

**Աղոթք** - Հավատարիմ Աստված, շնորհակալ եմք, որ լավ գիտես մեր կարիքները, նույնիսկ մեր խնդրելուց առաջ: Օգնիր մեզ, որ Քեզ վստահենք մեր բոլոր կարիքների համար: Ամեն:

**Աստված մեր բոլոր կարիքները հոգում է օրը օրին:**

Կարդա՛

Գ Թագ. 17.16-17

Ուրեմն վաղվա համար հոգ մի՛ արեք:  
Մատթ. 6.34

## Օրհնության աման

**Է**լեկտրոնային նամակի հասնելու ծանոթ «պինկ» ձայնը ուշադրությունս գրավեց, երբ գրում էի համակարգչիս վրա: Հաճախ ջանում եմ տեղի չտալ անմիջապես նամակը բացելու և կարդալու փորձությունը, սակայն այդ նամակի նյութը շատ գրավիչ թվաց ինձ, որովհետև ասում էր. «Դու օրհնյալ ես»:

Կաթոզին բացեցի նամակը ու տեսա, որ հեռավոր երկրից մի բարեկամ ասում էր, թե մեր ընտանիքի համար աղոթում էր: Նրանք ամեն շաբաթ իրենց խոհանոցի սեղանի վրայի մեծ «Օրհնության ամանի» մեջ Ծննդյան ընտանեկան պատկերով քարտ էին դնում ու այդ ընտանիքի համար աղոթում էին: Նա ասում էր. «Գոհանում եմ իմ Աստծուց ամեն անգամ, որ ձեզ հիշում եմ» (Փիլ. 1.3), ու հիշում Աստծո սերը ուրիշների հետ բաժանելու մեր թափած ջանքերը: Բարեկամիս նպատակադրված այս արտահայտությամբ Պողոս առաքյալի գրած բառերը Փիլիպպեի եկեղեցուն երևացին իմ համակարգչի նամակատուփի մեջ՝ տալով սրտիս նույն հրճվանքը, որ մտածում եմ, թե այս նամակը ընթերցողները ստացան առաջին դարի այս շնորհակալության գրառման մեջ: Այնպես է թվում, թե Պողոսը սովորություն էր դարձրել իր շնորհակալության ու երախտագիտության խոսքերը ասել նրանց, որոնք իր կողքին էին գործում: Նույնանման խոսքով է սկսվում իր նամակների մեծ մասը. «Նախ Հիսուս Քրիստոսի միջոցով Աստծուն շնորհակալություն եմ հայտնում ձեզ բոլորիդ համար. որ ձեր հավատը պատմվում է ողջ աշխարհում» (Հռոմ. 1.8): Առաջին դարում Պողոսը օրհնեց իր գործակիցներին աղոթարար շնորհակալական խոսքով: 21-րդ դարում բարեկամս գործածեց «Օրհնության ամանը»՝ ուրախությամբ լցնելու օրս: Ինչպե՞ս կարելի է շնորհակալություն հայտնել նրանց, որոնք մեզ հետ եմ գործում Աստծո ծառայության դաշտի մեջ:

**Աղոթք** - Հայր, օգնիր մեզ, որպեսզի նպատակադրված կերպով օրհնենք նրանց, որոնք ծառայում են մեր կողքին: Ամեն:

**Ռ՞ն կարող ես այսօր շնորհակալություն հայտնել:**

Կարդա՛ր  
Հռոմ. 1.1-10

Գոհանում եմ իմ  
Աստծուց ամեն ան-  
գամ, որ ձեզ հիշում  
եմ: Փիլիպ. 1.3

## Նոր բնակարան

**Մ**ի բարեկամ պատրաստվեց տեղափոխվել ուրիշ քաղաք՝ իր ներկա բնակավայրից 1000 մղոնից ավելի հեռու: Նա ու իր ամուսինը բաժանեցին տեղափոխության աշխատանքը՝ ժամանակացույցի համաձայն: Ամուսինը գտավ ժամանակավոր բնակություն վայր, մինչ կինը սկսեց հավաքվելու աշխատանքը: Ես զարմացա, թե ինչպես նա ընդունեց տեղափոխվել՝ առանց իմանալու այդ նոր շրջանը կամ մասնակցելու նոր բնակարանի փնտրտուքի գործին: Ես ինձ հարցրեցի, թե ինչպես կարելի է սա: Նա համոզված էր, թե կարող էր վստահել ամուսնուն, որովհետև նա միշտ ուշադիր էր եղել իր նախասիրություններին ու կարիքներին իրենց միասին անցկացրած բոլոր տարիների ընթացքում:

Կարդա՛ր  
Յովհ. 14.1-14

Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան, ... գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Յովհ. 14.2

Վերնատան մեջ Հիսուսը խոսեց իր աշակերտների հետ իր մատնվելու ու մահվան մասին, որոնք պիտի լինեին իր ու իր աշակերտների կյանքի խավարագույն պահերը: Նա մխիթարեց նրանց՝ վստահեցնելով, թե նրանց համար տեղ պիտի պատրաստի երկնքի մեջ, ճիշտ այնպես, ինչպես բարեկամիս ամուսինը պատրաստեց նոր բնակարան իրենց ընտանիքի համար: Երբ աշակերտները հարցրին Հիսուսին, նա մատնանչեց ու հիշեցրեց անցյալում իր կատարած հրաշքները: Թեև նրանք պիտի ողբային իր մահն ու բացակայությունը, սակայն Նա հիշեցրեց, թե նրանք կարող են իրեն վստահել ամեն պարագայում:

Նույնիսկ մեր խավար պահերին կարող ենք վստահել իրեն, որ մեզ բարի տեղ առաջնորդի: Մինչ քայլում ենք իր հետ, պիտի սովորենք իր հավատարմությանն ավելի վստահել:

**Աղոթք** - Տե՛ր, օգնիր ինձ՝ Քեզ վստահելու, երբ կյանքս անորոշ ու դժվար թվա: Դու վստահելի ու բարի ես: Ամեն:

**Մենք կարող ենք Աստծուն վստահել, որ մեզ առաջնորդի դժվար պահերին:**

## Յետևել ուր որ տանի

**Ե**րեխա ժամանակ անձկագին սպասում էի Կիրակի օրվա Երեկոյան հետաքրքրական պաշտամունքներին, ուր մենք հաճախ ունենում էինք հյուր քարոզիչներ ու միսիոներներ: Նրանց պատգամները ներշնչում էին ինձ, որովհետև նրանք, իրենց ընտանիքները, բարեկամներին, ժամանակը, տունը, ունեցածներն ու գործերը թողնելով, գնում են օտար ու անծանոթ և երբեմն էլ վտանգավոր շրջաններ՝ Աստծուն ծառայելու համար:

Այդ միսիոներների նման Եղիսենն նույնպես շատ բաներ իր ետևում թողեց՝ Աստծուն հետևելու համար (Գ Թագ. 19.19-21): Քիչ բան գիտեք Եղիսենի մասին Աստծո տված կոչից առաջ, բացի նրանից, որ նա ազարակապան էր: Երբ Եղիա մարգարեն նրան հանդիպեց դաշտում, որ հերկում էր, վերարկուն հանելով նրան տվեց, որ խորհրդանիշ էր նրա մարգարե լինելու, ու հրավիրեց իրեն հետևել: Եղիսենն անմիջապես իր եզները որպես զոհ մատուցեց ու միայն խնդրեց իր հորն ու մորը համբուրել Եղիային հետևելուց առաջ:

Թեև մեզնից շատերը հրավիրված չեն ընտանիք ու բարեկամներ թողնելու՝ Աստծուն ծառայելու համար որպես ամբողջական միսիոներներ, Աստված ցանկանում է, որ մենք բոլորս իրեն հետևենք, ու Պողոսի խոսքերով՝ «...ամեն մեկն էլ ինչպես որ նրան Աստված կանչեց, թող այնպես ընթանա...» (Ա. Կորնթ. 7.17): Ինչպես ես միշտ ունեցել եմ փորձառությունը, Աստծուն ծառայելը կարող է զգայացունց լինել ու լեցուն մարտահրավերներով, հոգ չէ թե ուր ենք, նույնիսկ եթե մեր տները թողնելու պարտադրանքը չունենք:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, զիմիր մեզ լինելու Քո միսիոներները՝ ո՛ւր էլ մեզ դնես, մոտ կամ հեռու, մեր գտնված տեղում կամ օտար վայրում: Ամեն

**Աստված մեզ ցույց պիտի տա, թե ինչպես պիտի իրեն ծառայենք՝ ուր էլ լինենք:**

Կարդա՛

Գ Թագ. 19. 19-21

Եղիսենն թողեց եզներն ու վազեց Եղիայի հետևից:  
Գ Թագ. 19.20

## Բոլորին սիրել

Ընդարձակ, բայց դաշտում գտնվող եկեղեցում Տիրոջն եմ պաշտում, որ կարելի է հազվագյուտ բան նկատել Սինդապուր կղզու վրա: Սինդապուրը հազիվ քսանհինգ մղոն բարձրություն ու տասնհինգ մղոն երկարություն ունի: Մի ժամանակ առաջ օտար երկրներից եկած աշխատավորները սկսեցին ամեն Կիրակի հավաքվել ընտանյոք եկեղեցու կալվածում՝ դաշտակերույթ անելու:

Այս պատահածը պատճառ հանդիսացավ եկեղեցու անդամների առարկության: Ոմանք գանդատվեցին այցելուներից հետո թողած աղտոտության համար: Սակայն ուրիշները սա նկատեցին Աստվածային առիթ՝ հյուրասիրելու մի անձանոթ խմբի, նույնիսկ առանց եկեղեցու շրջափակից դուրս գալու: Իսրայելցիները նման հարցեր դիմադրաված պիտի լինեին իրենց ժամանակին: Իրենց նոր բնակավայրը հաստատվելուց հետո նրանք պետք է գոտեմարտեին՝ հասկանալու, թե ինչպես կարելի է ուրիշների հետ գործակցել: Աստված հստակ կերպով հրամայեց, որ պանդուխտների հետ վարվեն բնիկի նման ու սիրեն նրանց իրենց անձի պես (Ղևտ. 19.34): Աստծո կանոններից շատերը հատուկ հիշատակություններ են կատարում օտարականների ու պանդուխտների մասին: Նրանց չտանջել, ոչ էլ ճնշում գործադրել նրանց վրա: Այլ ընդհակառակը՝ նրանց սիրել ու օգնել (Ել. 23.9, Բ Օրինաց 10.19): Դարեր հետո Հիսուսը նույնը պատվիրեց մեզ. սիրել մեր դրացիներին մեր անձերի պես (Մարկ. 12.31): Թող որ մենք Աստծո սիրտը ունենանք մեր մեջ՝ ուրիշներին սիրելու մեր անձերի պես՝ հիշելով, թե մենք էլ պանդուխտներ ենք այս երկրի մեջ: Սակայն սիրված ենք որպես Աստծո ժողովուրդ ու նկատի առնված որպես Իր սեփականություն:

**Աղոթք** - Հայր, մեզնից յուրաքանչյուրին ստեղծել ես Քո նմանությամբ: Թող որ սիրենք նրանց, որոնք ուրիշ տեղերից են գալիս, և օգնիր, որ կարեկցության մեր ձեռքը երկարենք նրանց: Ամեն:

**Աստծո սերը ընդունելը բանալին է ուրիշներին սիրելու:**

Կարդա՛ր  
Ղևտ. 19. 33-44

Ձեր երկրի տեղաբնակի պես ընդունեցե՛ք նրան, և եկվորը թող բնակվի ձեզ մոտ: Նրան սիրի՛ր քո անձի պես: Ղևտ. 19.34



## Զորությանն ապավինել

**Ե**րբ սկսեցի սուսերամարտ պարապել ավագ դպրոցում, մարզիչս գոռալով հուշում էր ինքնապաշտպանական շարժումս՝ իր արած հարձակման դիմաց: Երբ նա իր սուրը երկարում էր հարձակվելու նպատակով, ինքս ինձ պաշտպանելու համար պետք է լսեի ու անմիջապես հակադարձեի նրան:

Սա ուշադիր լսելու պարագան մեզ հիշեցնում է Աստվածաշնչի տված պատվերը սեռային փորձություն ժամանակ: Ա Կորնթացիս 6.18-ի մեջ Պողոսը գրում է հավատացյալներին, որոնք փորձություն են ենթարկվում հեթանոսական պոռնիկություններով. «Պոռնիկությունից փախե՛ք»: Երբեմն մենք մարտահրավերների դիմաց «հաստատ պիտի մնանք» (Գաղ. 5.1, Եբ. 6.11), սակայն այստեղ Աստծո խոսքը մեզ կանչում է մեր լավագույն ինքնապաշտպանությունը. «Փախե՛ք»:

Մեր անմիջական գործնական պատասխանը մեզ պաշտպանում է զիջումներից: Փոքր զիջումները առաջնորդում են ավերիչ պարտությունների: Անզուսպ խորհուրդը, սխալ ակնարկը համացանցում և քծնաբարո բարեկամությունը, երբ ամուսնացած ենք, քայլեր են, որոնք մեզ տանում են այնտեղ, ուր չպետք է լինենք, ու մեզ Աստծուց հեռացնում են:

Երբ մենք փորձությունից փախչենք, Աստված նաև մեզ կտա ապահով տեղ, ուր կարելի է վազել փորձություն ժամանակ: Հոգ չէ թե որտեղ ենք եղել կամ ինչ ենք արել, Նա մեզ հույս, ներում և նոր սկիզբ է տալիս մեր մեղքերի համար խաչի վրա Հիսուսի մահով: Երբ մենք Հիսուսի մոտ վազենք մեր տկարություն ժամին, Նա մեզ ազատ կթողնի՝ իր զորության մեջ ապրելու:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, մե՛ծ սիրով Քո կյանքը տվեցիր խաչի վրա մեզ համար: Քո կամքին հնազանդվելով՝ հիմա կյանքս Քեզ եմ տալիս: Ամեն:

**Միայն Աստված կարող է մեր կարիքները հոգալ ու տալ հոգու մեծ գոհունակություն:**

Կարդա՛ր  
Ա Կորնթ. 6.12-20

Քանի որ մե՛ծ գնով եք գնվել, ուստի փառավորեցե՛ք Աստծուն ձեր մարմնի...  
մեջ: Ա Կորնթ. 6.20

## Քաջություն՝ հավատարիմ լինելու

**Վ**ախը Հաղասայի մնայուն ընկերակիցն է: Հաղասան՝ առաջին դարում ապրող երիտասարդ հրեա աղջիկը, առասպելական կերպար է Ֆրանսին Ռիվերի գրած «Մի ձայն քամու մեջ» գրքում: Մի հռոմեացու տան մեջ ստրուկ լինելուց հետո նա վախենում է կրելիք հալածանքից իր Քրիստոնեական հավատքի համար: Գիտեր, որ Քրիստոնյաները անարգված էին, ու շատերը տարված սպանվելու և կամ առյուծների առջև նետված: Երբ իր հավատքը քննության էր ենթարկվում, արդյոք նա քաջություն կունենա՞ր՝ հաստատ մնալու ճշմարտության համար:

Կարդա՛ր  
Ա Պետրոս 3.13-18

...մի՛ վախեցեք...:  
Ա Պետ. 3.14

Երբ իր ունեցած վախը իրականացավ, նրա տիրոջն ու Քրիստոնյաներին ատող հռոմեացի պաշտոնյաները նրա դեմ ելան: Նա երկու ընտրություն ուներ՝ Քրիստոսի հանդեպ իր ունեցած հավատքը ուրանալ կամ մահվան դատապարտվել: Սակայն երբ նա հայտարարում է Հիսուսին որպես Քրիստոս, վախը նրանից հեռանում է, ու նա էլ ավելի հանդուգն է դառնում մահվան դիմաց:

Աստվածաշունչը մեզ հիշեցնում է, թե երբեմն մենք պիտի չարհարվենք շիտակ բան անելով՝ Ավետարանը բաժանելու ժամանակ կամ էլ ապրելով Աստվածավայել կյանքով, որ հակառակ է ներկա ժամանակների արժեքներին: Մեզ ասված է չվախենալ (Ա Պետ. 3.15): Հաղասայի հիմնական պատերազմը եղավ իր սրտի մեջ: Երբ նա վերջնականապես որոշեց Հիսուսին ընտրել, գտավ անհրաժեշտ քաջություն՝ հավատարիմ լինելու:

Երբ որոշում ենք պատվել Քրիստոսին, Նա մեզ օգնում է հանդուգն լինել և հաղթել մեր վախերին՝ հակասությունների մեջ:

**Աղոթք** - Հայր, տո՛ւր ինձ հանդուգնություն՝ հաստատ մնալու դժվար ժամանակների մեջ: Ամեն:

**Հանդուգն լինենք, մինչ Աստօն վկաներն ենք դառնում:**

## Բավարար չէ՞

**Ե**կեղեցուց տուն վերադարձի ճանապարհին աղջիկս մեքենայի ետևի աթոռի վրա նստած հաճույքով ուտում էր ձկնի ձևով կակուճներ, մինչ մյուս զավակներս աղերսում էին, որ իրենց հետ բաժանի: Փորձելով խոսակցության նյութը փոխել՝ հարցրեցի. «Ի՞նչ արեցիք այսօր կիրակնօրյա դասապահին»: Նա ասաց, թե հացով և ձկով լցված կողով շինեցին, որովհետև մի պատանի հինգ հաց և երկու ձուկ տվեց Հիսուսին, որպեսզի Հիսուսը հինգ հազարից ավելի մարդկանց կերակրի (Հովհ. 6.1-13):

«Ի՞նչ լավ ու բարի բան է արել այդ պատանին՝ բաժանելով իր ունեցածը: Չե՞ս մտածում, թե Աստված խնդրում է քեզնից, որ դու էլ բաժանես քո ձկները»: «Ո՛չ, մա՛մ», - պատասխանեց նա:

Ես փորձեցի հորդորել նրան, որ միայն ինքն իրեն չպահի կակուճները: Նա չհամոզվեց ու ասաց. «Մեզ բոլորիս համար բավարար չէ»:

Բաժանելը դժվար բան է: Ավելի հեշտ է կառչել մեր տեսածին: Հավանաբար մենք էլ հաշիվ ենք անում, թե պարզապես բավարար չէ բոլորի համար: Ու ենթադրությունը այն է, թե եթե տամ, ե՛ս կարիք պիտի ունենամ:

Պողոսը մեզ հիշեցնում է, թե ինչ որ ունենք, Աստծուց է տրված: Նա ուզում է մեզ ամեն կերպով ճոխացնել, որպեսզի մենք էլ մեր հերթին առատաձեռն լինենք ուրիշների հանդեպ (Բ Կորնթ. 9.10-11): Երկնքի թվաբանությունը սակավության հաշիվ չէ, այլ ընդհակառակը՝ առատության: Մենք կարող ենք ուրախությամբ բաժանել մեր ունեցածը, որովհետև Աստված խոստանում է մեզ հոգալ, երբ մենք առատաձեռն ենք լինում ուրիշների հանդեպ:

**Աղոթք** - Յայր, լավապես հոգ ես տանում ինձ: Օգնիր, որ այսօր ուրիշների մասին մտածեմ ու բարիքների բաժանեմ նրանց հետ: Ամեն:

**Երբ հավատանք, թե Աստված բարի է, կարող ենք սովորել մեր ձեռքերը բացել ուրիշներին:**

Կարդա՛

Բ Կորնթ. 9. 10-15

Իսկ բարեգործությունն ու կարոտյալներից հաղորդակցվելը մի՛ մոռացեք: Եբր. 13.16

## Մեծ բժիշկը

**Ե**րբ դոկտոր Մանչանդան հարց է տալիս իր հիվանդներին՝ «Որտե՞ղ եք ապրում», նա ցանկանում է իմանալ ոչ միայն նրանց տան հասցեն, այլ՝ ավելին: Նա նկատել է, թե կապ կա նրանց ունեցած հիվանդությունն ու բնակավայրի միջև: Նրանք, որոնք գալիս են իր մոտ օգնություն, շատ հաճախ ապրել են ճնշիչ միջավայրում: Խոնավությունը, միջատները ու ժահրը նրանց հիվանդության պատճառն են եղել: Հետևաբար դոկտոր Մանչանդան բարեխոս է եղել այն բժիշկներին, որոնք իրենց հիվանդներին անմիջական բժշկական հոգատարություն ցույց տալու հետ մեկտեղ գործակցում են հիվանդների ու հասարակության հետ՝ ավելի առողջ կյանք ապրելու պայմաններ ստեղծելու: Հիսուսը բուժեց նրանց, որոնք իր մոտ եկան (Մատթ. 4.23-24) ու նրանց ուշադրությանը հանձնեց շտապ ֆիզիկական ու նյութական օգնությունից այն կողմ եզոզ մի ճշմարտություն: Իր Լեբան քարոզով Նա բժշկական հրաշքից շատ ավելին տվեց: Նա յոթ անգամ նկարագրեց մտքի ու սրտի պահպանումներ, որոնք ցուցանում են բարեկեցիկ կյանքը, որ սկսվում է նոր տեսիլքի ու խոստումի բարեկեցությունամբ: Կրկնակի երանելի է կոչում նրանց, որոնք հալածվում են ու իրենց հույսն ու տունը գտնում իր մեջ (Հմ. 10-12): Հիսուսի խոսքերը ինձ մտածել են տալիս: Մ՞եր եմ ապրում ես: Որքանո՞վ եմ ես տեղյակ իմ կարիքներից՝ բարեկեցիկ կյանքով ապրելու համար, որ շատ ավելի մեծ է իմ անմիջական ֆիզիկական ու նյութական կարիքներից: Մինչ անձկությունամբ սպասում եմ հրաշքի, ցանկանո՞ւմ եմ ունենալ կարոտյալի, կոտրածի, անթիբիոտիկոզի ուղղմամբ ու խաղաղարար սիրտ, որ Հիսուսը կոչում է երանելի:

**Աղոթք** - Երկնքում բնակվող Հայր, դժվար է մեր ցավերից այն կողմ տեսնել: Փափագում ենք Քո ողորմությունը տեսնել ամեն ժամանակ: Օգնիր, որ մեր աչքերը բարձրացնենք՝ տեսնելու մեր կարիքներից այն կողմ: Թող առողջության նոր տեսիլք ու աղբյուր ունենանք Հիսուսի հոգատարության մեջ, որ բուժում է: Ամեն:

**Երբ Աստված մեր տանն է, մեր հույսը իր վրա է:**

Կարդա՛ր  
Մատթ. 4.23-5.12

Իմ մեջ մնացեք, ես էլ՝ ձեր մեջ:  
Յովհ. 15.4

## Աստծո ներկայութունը և սարդերը

«Սարդեր»։ Չգիտեմ, որևէ երեխա սիրո՞ւմ է նրանց, հատկապես սենյակներում՝ անկողին մտնելիս։ Սակայն երբ աղջիկս պատրաստվում էր անկողին մտնել, տեսավ մեկը անկողնուկողքին։ Նա վախեցած բացականչեց. «Հայրի՛կ։ Սա՛րդ»։ Հակառակ իմ ջանքերին՝ չկարողացա գտնել սարդին։ «Քեզ չի կարող վնասել», - ասացի։ Սակայն նա չհամոզվեց։ Նա չուզեց անկողին մտնել, մինչև իրեն չասացի, որ պահակ պիտի կանգնեմ իր մոտ։

Երբ աղջիկս հանդարտվեց, ձեռքը բռնեցի ու ասացի. «Քեզ շատ եմ սիրում։ Ես ճիշտ այստեղ՝ կողքիդ եմ։ Սակայն գիտե՞ս ինչ։ Աստված քեզ սիրում է, նույնիսկ հորիցդ ու մորիցդ ավելի։ Ու նա շատ մոտ է քեզ. դու միշտ կարող ես Նրան աղոթել, երբ վախենաս»։ Իմ այդ խոսքերը նրան հանգստացրին, ու խաղաղությամբ քնեց։

Աստծո Խոսքը հաճախակի վստահեցնում է մեզ, թե Աստված միշտ մեզ հետ է (Սաղմ. 145.18, Հոռմ. 8.38-39, Հակ. 4.7-8), սակայն երբեմն մենք դժվարություններ հավատում դրան։ Թերևս սրա համար է, որ Պողոսը աղոթեց իր հավատակիցների համար Եփեսոսի մեջ, որ ուժ ու զորություն տա ճշմարտությունը ըմբռնելու (Եփ. 3.16)։ Նա գիտի, թե երբ կուվում ենք, կարող ենք Աստծուն մոտ լինելու զգացումը կորցնել։ Սակայն ճիշտ այնպես, ինչպես ես սիրով աղջկաս ձեռքը բռնեցի այդ երեկո անկողին մտնելու ժամանակ, նույնպես մեզ սիրող Երկնավոր Հայրը միշտ մոտ է մեզ՝ աղոթքի չափ։

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ միշտ մեզ մոտ ես։ Խնդրում եմք, տո՛ւր մեզ ուժ ու զորություն՝ հիշելու, թե մեզ սիրում ես, ու կարող եմք Քեզ մոտենալ։ Ամեն։

**Աստված միշտ մոտ է՝ հակառակ մեր վախերին։**

### Կարդա՛ Եփես. 3. 14 - 19

Իմ ծնկները ծալում եմ մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, որից երկնքում ու այս երկրի վրա ամեն ազգատոհմ անուն է առնում Եփես. 3.14-15

## Կապվել

«Օղաչուն աթոռի ամրագոտիների ազդանշանը միացրեց՝ ցույց տալու, թե օղային անբարենպաստ շրջանով պիտի անցնենք: Խնդրում ենք անմիջապես ձեր տեղերը վերադառնալ ու ամրագոտիները կապել»: Այս ազդարարությունը հայտարարվում է օղանավում, երբ անհրաժեշտ է լինում, որովհետև անբարենպաստ օդի պատճառով չկապված ճամփորդները կարող են վնասվել: Եթե իրենց աթոռներին նստելով գոտիները կապեն, ապահով կճանապարհորդեն: Ընդհանրապես՝ կյանքը մեզ ազդարարություններ չի անում, երբ անկայուն վիճակներ են մեզ սպասում: Սակայն մեզ սիրող Հայրը գիտի և տաժանքի ժամանակ մեզ հրավիրում է մեր ցավերը, հոգսերն ու վախերը Իրեն բերելու: Աստծո Խոսքը մեզ ասում է. «Որովհետև ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված է մեզ նման, բայց առանց մեղքի: Ուրեմն շնորհի աթոռին համարձակություն մտնենանք, որ ողորմություն ընդունենք ու շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու» (Եբ. 4.15-16): Տագնապների ու նեղության ժամանակ աղոթքով Հոր մոտ գնալը լավագույն բանն է, որ կարող ենք անել: Խոսքը՝ «շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու», նշանակում է, թե մենք կարող ենք վտանգի ժամանակ Իր ներկայությունը խաղաղությամբ կապված լինել, որովհետև մեր մտահոգությունները բերում ենք Նրան, որ ամեն բանից մեծ է ու վեր: Երբ կյանքը նեղացուցիչ է թվում, մենք կարող ենք աղոթել: Նա կարող է մեզ օգնել մեր բոլոր նեղությունների ու տագնապների մեջ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, երբեմն կյանքը ճնշիչ է: Օգնի՛ր մեզ, որ Քեզ վստահենք մեր կյանքի բոլոր նեղությունների մեջ՝ գիտենալով, թե որքա՛ն ես Դու մեզ սիրում: Ամեն:

Թեև չենք կարող նախատեսել կյանքի փորձառությունները, սակայն կարող ենք աղոթել Հորը, որ լավ է հասկանում մեր բոլոր նեղությունները:

### Կարդա՛ր Եբր. 4. 11 - 16

Ուրեմն շնորհի աթոռին համարձակությամբ մոտենանք, որ ողորմություն ընդունենք ու շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու: Եբր. 4.16

## Ողորմություն՝ դատաստանի փոխարեն

**Ե**րբ զավակներս վիճաբանում էին ու ինձ մոտ եկան իրարից բերողքելու, ամեն մեկին առանձին քննեցի, որպեսզի հարցի չուրջ յուրաքանչյուրի կարծիքը լսեի: Երբ տեսա, թե երկուսն էլ մեղավոր էին, խոսակցությունից ավարտին խնդրեցի նրանցից, որ ասեն, թե ինչ են կարծում. ո՞րն էր լինելու հարմար ու արդար պատիժը մյուսի արածի համար: Երկուսն էլ ծանր պատիժ առաջարկեցին:

Սակայն ի զարմանս իրենց՝ ես տվեցի այն պատիժը, որ ուզում էին դիմացինը ստանա: Ու երկուսն էլ սկսեցին լալ ու զանգատվել՝ ասելով, թե որքա՛ն «անարդար է» այդ պատիժը, երբ իրենց հետ պատահեց, հակառակ նրան, որ արդար էին համարում դիմացինի համար:

Զավակներս ցույց էին տվել մի տեսակ «դատապարտություն՝ առանց ողորմությունից», որ Աստված հորդորում է անել իր զավակներին, երբ սխալ գործ են անում (Հակ. 2.13): Հակոբոսը հիշեցնում է մեզ, թե փոխանակ աչառու լինելու հարուստի կամ նույնիսկ մեր հանդեպ, Աստված կամենում է, որ մենք սիրենք ուրիշներին՝ մեր անձերի պես (հմ. 8): Փոխանակ ուրիշներին գործածելու եսասիրական շահի համար կամ անտեսելու որևէ մեկին, որի դիրքը մեզ օգուտ չի տալիս, Հակոբոսը հորդորում է վարվել այնպես, որ հիշենք, թե մեզ որքա՛ն է տրված ու ներված, և այդ ողորմությունը ուրիշների էլ հասցնենք:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ Քո ցույց տված մեծ ողորմության համար: Օգնիր, որ նման ողորմություն ցույց տամ ուրիշներին՝ որպես նշան իմ երախտագիտության: Ամեն:

### Կարդա՛

### Յակոբոս 2. 1 - 13

Այնպես խոսեցեք ու այնպես արեք, որպես թե ազատության օրենքով եք դատվելու:

Յակ. 2.12

**Աստծո ողորմությունը մղում է մեզ ողորմություն ցույց տալու:**

## Ծաղկել ճիշտ տեղում

Հայրս մարկեղը ինձ տալով ասաց. «Որոմը բույս է, որ աճում է Հայնտեղ, ուր չենք ուզում»: Ուզեցի թողնել եգիպտացորենի բույսը, որ սիսեռների մեջ էր բուսանել: Սակայն Հայրս, որ Հասակ էր առել ազարակում, հրահանգեց, որ արմատից դուրս քաշեմ այն: Եգիպտացորենի մեկ Հատիկ բույսը պիտի խեղդեր սիսեռները ու արգելք հանդիսանար նրանց ստանալիք սնունդին:

Մարդ էակները բույսեր չեն. մենք ունենք միտք և Աստծուց տրված ազատ կամք: Սակայն երբեմն փորձում ենք աճել մի տեղում, որ Աստված չի ցանկանում մեզ տեսնել:

Սավուղ թագավորի որդին՝ պատեբրազմող իշխան Հովնաթանը, կարող էր դա անել: Նա ամեն պատճառ ունե՞ր՝ ակնկալելու թագավոր դառնալ: Սակայն նա տեսավ Աստծուն տված օրհնությունը Դավթին, նաև իր հոր՝ Սավուղի նախանձն ու հպարտությունը (Ա Թագ. 18.12-15): Ուստի, փոխանակ առնելու գահը, որ բնավ իրենը չպիտի լիներ, նա Դավթի մտերիմ բարեկամը եղավ և նույնիսկ նրա կյանքը փրկեց (19.1-6, 20.1-4):

Ոմանք կարող են ասել, թե Հովնաթանը շատ բանից զրկվեց: Սակայն ինչպե՞ս պիտի ուզենք հիշվել: Փառամոլ Սավուղի նման, որ փորձեց կառչած մնալ իր գահին ու կորցրեց, թե՞ Հովնաթանի պես, որ պաշտպանեց մարդու կյանքը, որ պատիվ պիտի ստանար որպես Հիսուսի նախահայր: Աստծո ծրագիրը միշտ էլ ավելի լավն է մեր ծրագրերից: Մենք կարող ենք պայքարել նրա դեմ ու նմանվել սխալ տեղում բուսնած որոմին կամ էլ ընդունել նրա ցույց տված ուղղությունը և աճել՝ պտղատու բույս լինելով իր պարտեզի մեջ: Նա ընտրությունը մեզ է թողնում:

**Աղոթք** - Տե՛ր, խնդրում եմք ներիք մեզ այն պահերի համար, երբ վարվում ենք այնպես, կարծես թե մեզ սխալ տեղում ես ցանել: Օգնիր մեզ՝ տեսնելու, թե ինչ ունես մեզ համար այսօր: Ամեն:

**Աստված հրավիրում է մեզ իր հետ աշխարհի մեջ Ավետարանը տարածելու:**

Կարդա՛ր

Ա Թագ. 20. 30 - 34

Դովնաթանի անունը համարում պետք է ունենա Դավթի տանը:  
Ա Թագ. 20.16



## Մեր հաստատ հիմքը

**Տարիներ շարունակ մարդիկ տներ շինեցին ու գնեցին մեր քաղաքի այն շրջաններում, ուր սահանքի վախ կար: Ոմանք գիտեին անկայուն հողի վտանգը, մինչ կային մարդիկ, որ տեղյակ էին: «Երկրաբանների քառասուն տարիների զգուշացումներն ու քաղաքի օրենքներով ստեղծված տների շինության անապահով լինելու հաստատումները» չբացատրվեցին կամ էլ անտեսվեցին (*The Gazete, Colorado Springs, April 27, 2016*): Այդ տներից երևացող տեսարանը սքանչելի էր, սակայն նրանց հատակը աղետալի էր իր էությունը:**

Շատ մարդիկ հին Իսրայելի մեջ անտեսեցին կուռքերից ետ կանգնելու և ճամարիտ Աստծուն հարելու և հետևելու Տիրոջ տված զգուշացումները: Հին Կտակարանը արձանագրում է այս անհնազանդության ողբերգական արդյունքները:

Հակառակ իրենց շուրջ երկրի փլուզումին՝ Տերը շարունակեց իր ժողովրդին ձեռք երկարել՝ ներումի և հույսի պատգամը տալու, եթե նրանք իրեն դառնային ու հետևեին իր ճանապարհներին:

Եսայի մարգարեն ասաց. «Մեզ հասան Տիրոջ իմաստությունը, հանճարը և աստվածապաշտությունը. ահա դրանք են արդարությունից գանձերը» (Ես. 33.6): Ինչպես Հին Կտակարանի օրերին, այսօր էլ Աստված մեզ առիթ է տվել ընտրելու այն հիմքը, որի վրա մեր կյանքերը պիտի շինենք: Կարող ենք մեր փափազներին հետևել կամ Աստվածաշնչի ու Հիսուս Քրիստոսի անձի մեջ հայտնված իր հավիտենական սկզբունքները ընդունել: «Անխախտ վեմի՝ Քրիստոսի վրա եմ կանգնում, ու բոլոր մյուս գետիկները ընկղմվում են» (Էդուարդ Մոթե):

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, ընդունում ենք Քեզ՝ որպես մեր անխախտ վեմ: Մեր ապահովությունն ու հույսը Քո մեջ է: Ամեն:

**Տերը ինքն է մեր կյանքի հաստատ հիմքը:**

Կարդա՛ր  
Եսայի 33. 2 - 6

Մեզ հասան Տիրոջ իմաստությունը, հանճարը և աստվածապաշտությունը. ահա դրանք են արդարության գանձերը: Ես. 33.6

## Անվախ տալ

**Ե**րբ իմ որդին՝ Խավիերը, վեց տարեկան էր, մի բարեկամուհի այցելեց մեզ՝ իր հետ բերելով իր երեխային: Խավիերը նրան մի քանի խաղալիք ուզեց տալ: Ես հրճվեցի մեր փոքրիկի ունեցած առատաձեռնությունից համար. մինչև իսկ տվեց այն խաղալիքը, որի համար ամուսինս բազմաթիվ խանութներ էր գնացել տարբեր քաղաքներում՝ փնտրելու այն: Գիտենալով, թե այդ խաղալիքը փնտրված է, ընկերուհիս քաղաքավարի մերժեց: Խավիերը դրեց խաղալիքը փոքրիկի ձեռքերի մեջ ու ասաց. «Իմ հայրիկը շատ նվերներ է տալիս՝ բաժանելու համար»:

Թեև Խավիերը իր տալիք դասը ինձնից է սովորել, սակայն շատ հաճախ ես ետ եմ պահել իմ ունեցածները Աստծուց և ուրիշներից: Սակայն երբ հիշեմ, որ իմ Երկնավոր Հայրը ամեն բան տալիս է ինձ, ինչի կարիքն ունեմ, ավելի հեշտ կլինի կիսել: Հին Կտակարանի մեջ Աստված պատվիրեց, որ իսրայելցիները Իրեն վստահեն և Իր տվածներից մի մաս տրամադրեն դետացի քահանաներին, որոնք իրենց հերթին ուրիշ կարոտյալների են օգնում: Երբ ժողովուրդը մերժեց, մարգարեն ասաց, թե իրենք Տիրոջն են կողոպտում (Մաղ. 3.8-9): Եթե նրանք ուզելով տվեցին՝ ցույց տալով, թե վստահել էին Տիրոջ նախատեսություններին և պաշտպանությունից (Հմ. 10-11), ուրիշները պիտի նկատեն իրենց որպես Աստծո օրհնյալ ժողովուրդ (Հմ. 12):

Հոգ չէ, որ տնօրինում ենք մեր նյութականը, մեր ծրագրերը կամ Աստծո՝ մեզ տված պարգևները, տալը փառաբանությունից պաշտամունքի արտահայտություն կարող է լինել: Սիրահոժար ու անվախ տալը ցույց է տալիս մեր վստահությունը մեզ սիրող Հայր Աստծո՝ գերազույն առատաձեռն տվողի հանդեպ:

**Աղոթք** - Տեր, օգնիր մեզ, որ ապրենք Քո հավատարիմ նախատեսության վստահությամբ, որպեսզի կարողանանք ազատորեն ու անվախ տալ Քեզ և ուրիշներին: Ամեն:

**Առանց վախի տալը Աստծուն և ուրիշներին հայտնաբերում է մեր վստահությունը Տիրոջ խոստումների ու նախատեսության հանդեպ:**

Կարդա՛ր  
Մաղաքիա 3. 8-12

Տարին ավարտվեց,  
և ամբողջ բերքը  
հավաքեցինք մեր  
շտեմարաններում:  
Մաղ. 3.10

## Վախի արկունը

**Մ**եր մարմինները հակազդում են սոսկումի ու վախի զգացումներին: Ահավոր զգացումը, ծանրութիւնը մեր ստամոքսում մեր սրտերի զարկերի հետ մեկտեղ, մինչ դժվարութեամբ ենք շնչում, ցույց են տալիս մեր անձկութեան զգացումը:

Աշակերտները վախի ցնցումներ ունեցան մի գիշեր, երբ Հիսուսը հինգ հազարից ավելի մարդկանց կերակրելու հրաշքը կատարեց: Տերը նրանց նախապես ուղարկել էր Բեթսայիդա, որպեսզի Ինքը կարողանա միայնակ լինել՝ աղոթելու համար: Գիշերը նրանք թիավարում էին հովի հակառակ ուղղութեամբ, երբ հանկարծ տեսան Նրան ջրի վրայով քայլելիս: Խորհելով, թե Նա հոգի էր, խիստ վախեցան (Մարկ. 6.49-50):

Սակայն Հիսուսը նրանց վստահեցրեց՝ ասելով, որ չվախենան ու չզարհուրեն: Մինչ Նա նավ մտավ, փոթորիկը դադարեց, ու նրանք ապահով ծովափ հասան: Ես երևակայում եմ ահի ու զարհուրանքի զգացումները նրանց, որոնք հանդարտվեցին, երբ Նա իր խաղաղութիւնը տվեց:

Երբ մենք անձկութեան մեջ շնչասպառ ենք լինում, կարող ենք վստահել Հիսուսի զորութեանը: Մեզ սպառնացող ալիքները հանդարտեցրու կամ օգնիր, որ նրանց դիմադրավենք: Նա պիտի տա մեզ իր խաղաղութեան պարզելը, «որ ամեն մտքից վեր է» (Փիլ. 4.7): Ու նաև Նա մեզ մեր վախերից ազատում է, ու մեր հոգիներն ու մարմինները կարող են իրենց հանգիստը գտնել:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, օգնիր ինձ, երբ փոթորիկը հարձակվի վրաս: Ազատիր ինձ իմ բոլոր վախերից և տուր ինձ Քո խաղաղութիւնը: Ամեն:

**Տերը ազատում է մեզ մեր բոլոր վախերից:**

Կարդա՛ր  
Մարկոս 6.45-53

Քա՛ջ եղեք, ես եմ,  
մի՛ վախեցեք:  
Մարկ. 6.50

## Կորսված, բայց գտնված

**Ե**րբ իմացանք, թե զոքանչս կորել էր շուկայի մեջ մի ազգականի հետ գնում անելու ժամանակ, կինս և ես վախեցանք: Զոքանչս մոռացկոտություն ու շփոթվելու հիվանդությունամբ էր տառապում, ու հնարավոր չէր գիտենալ, թե ինչ կարող էր անել: Պիտի թափառե՞ր շրջանում, թե՞ ավտոբուս բարձրանալով պիտի փորձեր տուն վերադառնալ: Ամենավատ բանն անցավ մեր մտքով, մինչ սկսեցինք նրան փնտրել ու աղերսել Աստծուն՝ ասելով. «Խնդրում ենք, գտի՛ր նրան»:

Ժամեր հետո զոքանչս երևացել էր մղոններ հեռու գտնվող փողոցի մեջ: Աստված որքա՛ն օրհնեց մեզ՝ նրան գտնելու հնարավորություն տալով: Մի քանի ամիս հետո Տերը նրան էլ օրհնեց իր ութսուն տարեկան հասակում, երբ նա Տեր Հիսուսին դարձավ փրկության համար:

Հիսուսը, բաղդատելով մարդ էակներին կորած ոչխարների հետ, տալիս է այս օրինակը. «Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարյուր ոչխար ունենա, և զբանցից մեկը կորցնի. իննսունինը անապատում չի թողնի և այն կորածի հետևից չի գնա, մինչև որ այն գտնի: Բայց երբ գտնի, ուրախացած նրան իր ուսերին կընի: Եվ տուն գալով՝ բարեկամներին ու հարևաններին կկանչի ու նրանց կասի. «Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա» (Ղուկ. 15.4-6):

Հովիվները հաշվում էին իրենց ոչխարներին՝ վստահ լինելու, որ բոլորն էլ այնտեղ են: Նույն ձևով Հիսուսը, որ Ինքն իրեն նմանեցնում է հովիվի, մեզնից յուրաքանչյուրին կարևոր է դիտում՝ տարեց կամ երիտասարդ: Երբ մենք կյանքում թափառում ենք՝ փնտրելով ու խորհելով, թե ինչն է մեր նպատակը, բնավ ուչ է Քրիստոսին դառնալ: Աստված ուզում է, որ մենք իր սերն ու օրհնությունը վայելենք:

**Աղոթք** - Տե՛ր, մեզ փնտրում ես ու գտնում: Շնորհակալ ենք, որ մեզ Քո սեփականությունն ես դարձնում: Ամեն:

Յիանալի շնորհ... Կորսված էի, բերեցիր ինձ տուն:

**Ջոն Եյուսոն**

Կարդա՛ր  
Ղուկաս 15. 1-9

Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա: Ղուկ. 15.6

## Չպիտի կտրվենք

**Ո**րպես բնիկ կալիֆոռնիացի ու սիրահար պայծառ արևոտ օրերի՝ փախուստ եմ տալիս ցրտից: Սակայն հաճույքով եմ նայում ճյուղնապատ բնապատկերների: Ուստի չկարողացա չժպտալ, երբ Իլինոիսից մի բարեկամ ցույց տվեց իր պատուհանի մոտ եղող նորատունկ մի ծառի ձմեռային պատկերը: Հիացումս տխրության վերածվեց, երբ նշմարեցի դրա մերկ ու հանգուցված ճյուղերը՝ սառույցի ծանրության տակ կքած:

Ինչքա՞ն ժամանակ պիտի այդ կքած ճյուղերը կարողանային տոկալ սառույցի բեռան տակ: Ծառի ճյուղերը կտրել սպառնացող ծանրությունը ինձ հիշեցրեց մտահոգության ծանրության տակ կքած ուսերիս մասին: Հիսուսը, հաստատելուց հետո, թե մեր մեծագույն գանձերը

երկրի ժամանակավոր գանձերը չեն, քաջալերում է՝ թողնելու մեր մտատանջության խորհուրդները: Տիեզերքի Արարիչն ու Պահողը սիրում է ու հոգում էր զավակների բոլոր կարիքները: Հետևաբար, մենք մեր արժեքավոր ժամանակը չպիտի կորցնենք մտահոգվելով: Աստված գիտի մեր կարիքները ու պիտի հոգա մեզ (Մատթ. 6.19-32): Նա գիտի, որ մենք փորձության պիտի ենթարկվենք՝ ընկճվելու մտահոգության ծանրության տակ: Ու մեզ խորհուրդ է տալիս Իրեն մոտենալ, վստահել Իր ներկայությանը ու հոգատարությանը և հավատքով ապրել մեր առօրյան (Հմ. 33-34):

Այս կյանքում մենք պիտի դիմադրավենք դժվար հարցերի, անորոշությունների ու նեղությունների, որոնք պիտի պատճառ դառնան մեր ուսերի կքելուն: Մենք կարող ենք ժամանակավորապես կքել մտահոգության ծանրության տակ, սակայն երբ Աստծուն վստահենք, չպիտի կտրվենք:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ վստահեցնում ես, թե բնավ չպիտի մտահոգվենք, որովհետև Դու մեր բոլոր կարիքները հոգում ես: Ամեն:

**Մտահոգությունը մեզ չպիտի կարողանա կտրել, երբ վստահենք բոլոր բարիքների աղբյուր Տիրոջը:**

### Կարդա՛

Մատթեոս 6. 25-34

Յիմա ձեզանից ո՞վ կարող է հոգ անելով իր հասակի վրա մի կանգուն ավելացնել: Մատթ. 6.27

## Յեռախոսի գոտի

**Բ**Ջջային հեռախոսի առավելություններից մեկը այն է, որ այժմ մենք հնարավորություն ունենք միշտ հաղորդակցություն մեջ լինել ուրիշների հետ: Արդյունքում այսօր շատերը խոսում են կամ հաղորդագրություն ուղարկում բՋջայինով մեքենա վարելիս ու պատճառ դառնում ահավոր վթարների: Նման աղետալի փորձանքների մեջ չընկնելու համար բազմաթիվ երկրներում մեքենա վարելիս օրինազանցություն է հեռախոսով խոսելը: Ամերիկայի Միացյալ Նահանգների մայրուղիների վրա նշաններ են դրված, որոնք ասում են «Հեռախոսի գոտի», ուր կարելի է մի կողմ քաշվել ու ապահով կերպով խոսել: Մինչ լավ գաղափար է սահմանափակել բՋջային հեռախոսների գործածությունը մեքենա վարողների համար, կա նաև հաղորդակցության մեկ այլ միջոց, որ սահմանափակումներ չունի: Աղոթքը: Աստված հրավիրում է մեզ միշտ իր հետ հաղորդակցվելու, հոգ չէ թե գալիս ենք, գնում կամ նստած ենք: Նոր Կտարականում Պողոսի խոսքերը խրատում են յուրաքանչյուր անձի, որ փափագում է Աստծո հետ հաղորդակցվել, ասելով. «Անդադար աղոթք արեք» (Ա. Թես. 5.17): Պողոսը, այս երկնային բաց դռան սկզբունքը քաջալերելով, ասում է. «Միշտ ուրախ եղեք» (Հմ. 16) և «Ամեն բանով գոհացե՛ք...» (Հմ. 18): Աստված մեզ հրավիրում է ուրախ լինելու և շնորհակալություն հայտնելու, որոնք իր հանդեպ հավատքի արտահայտություններ են Քրիստոսի միջոցով շարունակական աղոթքով:

Աստված միշտ հասանելի է՝ արագ աղերսի կամ երկար խոսակցության համար: Նա մեզ հրավիրում է իր հետ հաղորդակցվելու ու բաժանելու մեր հարատև ու անվերջ ուրախությունը, շնորհակալությունը, հարցերը և մտահոգությունները (Եբ. 4.15-16): Մենք միշտ հեռախոսային գոտում ենք:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ուզում ես լսել ինձ: Քո կարիքն ունեմ այսօր: Ամեն:

**Աստծո գահին մոտենալու հնարավորությունը միշտ բաց է:**

Կարդա՛ր  
Ա Թես. 5.16-24

Անդադար աղոթք  
արեք: Ա Թես. 5.17

## Արժեքավոր՝ Աստծո համար

**Ա**նունը Դավիթ էր, սակայն շատերը նրան կոչում էին «Թաղի ջուլթակահար»։ Դավիթը մազերը խառնված ու բոլորին ծանոթ տարեց մարդ էր, որ մեր քաղաքի նշանավոր փողոցներում անցորդներին հրապուրում էր իր արտասովոր վարպետ նվագով։ Իր նվագած այդ երաժշտության փոխարեն՝ շատերը դուրս էին գցում մայթի վրա դրված ջուլթակի բաց պայուսակի մեջ։ Դավիթը ժպտում էր ու գլխի շարժումով իր շնորհակալությունը հայտնում՝ շարունակելով նվագը։

Երբ Դավիթը վերջերս մահացավ, ու նրա մահազոյր երեւոց տեղական օրաթերթի մեջ, հայտնի դարձավ, որ նա խոսում էր բազմաթիվ լեզուներով, շրջանավարտ էր համբավավոր մի համալսարանի ու նույնիսկ տարիներ առաջ իր թեկնածությունն էր դրել իր նահանգի ծերակուտական ժողովին մաս կազմելու համար։ Նրանք, որոնք նրան գնահատել էին լուրջ իր ունեցած արտաքին տեսքով, զարմացան նրա արձանագրած այս բոլոր հաջողությունների մասին իմանալով։ Աստվածաշունչը մեզ ասում է, թե «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով» (Ծննդ. 1.27)։ Այս խոսքը ցույց է տալիս մեր մեջ եղած մեծ արժեքը՝ անկախ մեր արտաքինից ու մեր արձանագրած հաջողություններից, կամ նրանից, թե ուրիշները մեր մասին ի՞նչ են մտածում։ Նույնիսկ երբ մենք որոշեցինք Աստծուց հեռանալ մեր մեղքերի պատճառով, Նա մեզ այնքան արժեքեց, որ մինչև անգամ Իր Որդուն ուղարկեց՝ մեզ ցույց տալու փրկության ու հավիտենականության ճամփան Նրա միջոցով։ Աստված սիրում է մեզ, ու մեր շուրջ եղողներն էլ կարևոր են Նրա համար։ Թող Իր հանդեպ մեր ունեցած սերը հայտնենք՝ ուրիշների հետ կիսելով այն։

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ իմ հանդեպ Քո ունեցած հիանալի սիրո համար։ Աղոթում եմ, որ ուրիշները տեսնեն Քո սերն իմ խոսքերի ու գործերի մեջ։ Ամեն։

**Աստծո սերը պետք է բաժանել։**

**Կարդա՛**  
**ԾՆՈՒ. 1. 26-31**

Սիրելիներ, եթե Աստված մեզ այսպես սիրեց, ապա մենք էլ պետք է իրար սիրենք։  
 Ա Յովհ. 4.11

## Երբ Աստված մեզ լցնի

«Ի՞նչ էի արել արդյոք»: Իմ կյանքի ամենից հետաքրքիր շրջաններից մեկը պիտի լիներ: Ընդհակառակը, ամենից ավելի միայնակ լինելու զգացումը ունենալու պահն էր: Քոլեջը ավարտելուց հետո իմ առաջին «իրական» աշխատանքի հնարավորությունն էի ստացել տնիցս մղոններ հեռու գտնվող մի քաղաքի մեջ: Սակայն այդ մեծ քայլի ուրախությունը շուտով խամրեց: Փոքր բնակարան ունեի՝ առանց որևէ կահույքի: Քաղաքին էլ ծանոթ չէի ու ոչ ոքի չէի ճանաչում: Աշխատանքս հետաքրքրական էր, սակայն միայնությունն զգացումը ճնշում էր: Մի երեկո նստեցի տանս մեջ՝ մեջքս պատին հենած: Բացեցի Աստվածաշունչս ու հանդիպեցի Սաղմոս 15-ին, որի 11-րդ համարը խոստանում է, թե Աստված մեզ պիտի լցնի: Աղոթեցի. «Տե՛ր, մտածում էի, թե այս աշխատանքը շիտակ բանն էր, սակայն շատ միայնակ եմ զգում:

Խնդրում եմ, լցրու սիրտս Քո ներկայությունամբ»: Շաբաթներ շարունակ այդ աղիողորմ աղերսի տարբերակները ներկայացրի: Որոշ երեկոներ միայնության զգացումներս նվազեցին, և ունեցա Աստծո ներկայության խոր զգացումը: Ուրիշ երեկոներ սոսկալի կերպով զգացի մեկուսի: Սակայն երբ վերադարձա այդ համարին՝ ամեն երեկո սիրտս խարսխելով նրա վրա, Աստված աստիճանաբար զորացրեց հավատքս: Իր հավատարմության փորձառությունը ունեցա այնպիսի ձևով, որ նախապես բնավ չէի ունեցել: Ու ես սովորեցի, թե իմ աշխատանքը պարզապես իմ սիրտը Իր առջև բանալն էր ու խոնարհաբար սպասեղն Իր հավատարիմ պատասխանին՝ մեզ Սուրբ Հոգով լցնելու Իր խոստումին վստահելով:

**Աղոթք** - Տե՛ր, մենք որոշ շրջաններ դատարկություն ենք զգում: Սակայն Դու կյանքի ճանապարհն ես ցույց տալիս: Ուզում ես, որ մենք Քեզ վստահենք: Օգնիր մեզ, որ Քո խոստումին վստահենք մեր հուսահատ վիճակների մեջ: Ամեն:

**Խարսխիր սիրտդ Աստծո մեջ:**

Կարդա՛ր  
Սաղմոս 15. 5-11

Ինձ ցուց տվիր կյանքի քո ճանապարհները, քո աջի քաղցրությունից ու վայելչությունից լիովին հագեցրիր ինձ երեսիդ ուրախությամբ: Սաղմ. 15.11



## Խոստ թե՞ շնորհ

Ընկերս՝ Արչին, արձակուրդից տուն վերադառնալիս տեսավ, որ իր դրացին փայտե նոր ցանկապատ էր կանգնեցրել Հինգ ոտք իր հողամասի սահմանից դուրս: Շաբաթներ անցան, մինչ Արչին փորձում էր լեզու գտնել դրացու հետ՝ ցանկապատը ետ տեղափոխելու համար: Նույնիսկ առաջարկեց ծախսերը կիսել և օգնել տեղափոխության գործին, սակայն անօգուտ: Արչին կարող էր դանդաղ ներկայացնել քաղաքապետարան, սակայն որոշեց այդ իրավունքը չօգտագործել թույլ տալով, որ ցանկապատը մնա իր տեղում՝ Աստծո շնորհը ցույց տալու համար: Դու կարող ես ասել. «Արչին երկչոտ է»: Ո՛չ, ընդհակառակը, նա զորություն ունեցող մեկն էր, սակայն նախընտրեց շնորհը՝ մի կտոր խոտածածկ հողամասի փոխարեն:

Մտածում եմ Աբրահամի ու Ղովտի մասին, որոնք վիճեցին իրենց արջառների համար երկիրը բավարար չնկատելով: «Կռիվ եղավ Աբրահամի հոտերի հովիվների ու Ղովտի հոտերի հովիվների միջև: Քանանացիներն ու փերեզացիներն այդ ժամանակ բնակվում էին այդ երկրում» (Ծննդ. 13.7): Ղովտը ընտրեց հողամասի լավագույն բաժինը ու վերջում ամեն բան կորցրեց: Աբրահամը վերցրեց ինչ մնաց ու շահեց խոստացյալ երկիրը (Հմ. 12-17): Մենք իրավունքներ ունենք, որոնք կարելի է պաշտպանել, ու երբեմն էլ պետք է պահանջատեր լինել: Պողոսն այդպես արեց, երբ Ատյանը անարդար վարվեց իր հետ (տե՛ս Գործք Առ. 23.1-3): Սակայն մենք կարող ենք նրանց մի կողմ դնել՝ ավելի լավ միջոց ցույց տալու աշխարհին ու մեզ շրջապատող մարդկանց: Աստվածաշունչը սա կոչում է «հեղություն» կամ «խոնարհություն» ու ոչ թե տկարություն: Սա զորություն ցույց տալ է Աստծո հսկողության տակ:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, ես միշտ տրամադրված եմ անձիս մասին մտածել: Տուր ինձ իմաստություն՝ գիտեցալու, թե երբ պետք է իրավունքներից հրաժարվել՝ լավագույնս ներկայացնելու Քո սերն ու շնորհը: Ամեն:

**Մեր կյանքը օգնում է գծագրել Աստծո պատկերը մեր դրացիների առջև:**

Կարդա՛

ԾՆՈՒՄ 13. 1-8

Ղովտն ընտրեց  
Յորդանանի ողջ  
շրջանը: ԾՆՈՒ. 3.11

## Փոքր մանկան նման

**Փոքր** աղջնակը ուրախությամբ ու նազանքով էր շարժվում փառաբանություն երգի եղանակի հետ: Միակ մանուկն էր եկեղեցու միջանցքում, սակայն դա բնավ արգելք չէր, որ դադարեր թևերը ճոճել, ոտքերը շարժել ու պտտվել երաժշտության հետ: Մայրն էլ, ժպտը դեմքին, չփորձեց նրան կանգնեցնել:

Նրան նայելով՝ սիրտս հրճվանքով լցվեց, ու ցանկացա նրան միանալ: Վաղուց կորցրել էի մանկության ուրախության անգիտակից արտահայտությունը: Թեև մենք հասակ առնելով ու զարգանալով պիտի թողնենք մանկական պահվածքը, սակայն երբեք չպիտի կորցնենք ուրախությունը, մասնավորաբար Աստծո հետ ունեցած մեր հարաբերություն մեջ:

Հիսուսը իր առաքելության ընթացքում ընդունեց մանուկներին ու հաճախ ակնարկեց նրանց մասին իր ուսուցման մեջ (Մատթ. 11.25, 18.3, 21.16): Մի առիթով Նա արհամարհեց իր աշակերտներին, որոնք փորձում էին արգելել ծնողներին՝ իրենց հետ մանուկներին Հիսուսի մոտ բերելու՝ իր օրհնությունը ստանալու համար, ու ասաց. «Երեխաներին թո՛ւյլ տվեք, որ ինձ մոտ գան, ու դրանց մի՛ արգելեք» (Մարկ. 10.14): Հիսուսը նկատի ուներ մանկական հատկանիշները, որոնք պատրաստում են մեզ Քրիստոսին - ուրախությունն ու հրաշքը - ընդունելու, սակայն միաժամանակ ընդունելու նրանց պարզությունը, վստահությունն ու խոնարհությունը: Մանկական ուրախությունն ու հրաշքը, ու շատ ավելին, մեր սրտերը բացում են Նրան ընդունելու: Նա սպասում է, որ իր բաց բազուկների մեջ վազենք:

**Աղոթք** - Հայր, օգնիր մեզ, որ ավելի նմանվենք մանուկներին Քեզ հետ մեր ունեցած հարաբերության մեջ: Ցանկանում ենք Քո կատարածների հրաշքով լցվել: Ամեն:

**Հավատքը** իր լավագույն փայլն է տալիս մանկական սրտի մեջ:

Կարդա՛ր  
Մարկոս 10.13-16

Երեխաներին թո՛ւյլ տվեք, որ ինձ մոտ գան, ու դրանց մի՛ արգելեք: Մարկ. 10.14

## Առայժմ մնաս բարով

**Թ**ոռնուհիս՝ Ալիսան և ես սովորություն ունենք, որ երբ ողջերթ ենք մայրթում իրար, փաթաթվում ենք ու սկսում թատերական հեծկլտանքով ու բարձր ձայնով ողբալ մոտ քսան վայրկյան: Ու մի քայլ ետ քաշվելով պարզ ասում ենք. «Կհանդիպենք», ու իրարից բաժանվում ենք: Հակառակ մեր այս թեթևասլիկ ու ծիծաղելի սովորության՝ մենք միշտ ակնկալում ենք, որ շուտով դարձյալ պիտի տեսնենք իրար:

Սակայն երբեմն մեր սիրելիներից բաժանումի ցավը դժվար է թվում: Երբ Պողոս առաքյալը ողջերթ ասաց Եփեսոսի եկեղեցու երեցներին, «Բոլորն էլ շատ էին լաց լինում և Պողոսի վզովն ընկած՝ համբուրում էին նրան: Ցավում էին մանավանդ այն խոսքի համար, որ ասում էր, թե իր երեսն այլևս չեն տեսնելու...» (Գործք Առ. 20.37): Սակայն մեծագույն ցավը գալիս է, երբ մահվան պատճառով բաժանում ենք ունենում ու վերջին անգամ մնաս բարով ասում սիրելի մեկին այս կյանքում: Այդ բաժանումը թվում է աներևակայելի ու անդիմանալի: Սգում ենք ու լալիս: Ինչպե՞ս պիտի դիմանանք մեր սրտի կոտրածության պատճառով, մեր սիրելիին դարձյալ ողջագուրելու հնարավորությունը չունենալու համար:

Պողոսը գրում է դարձյալ վերամիանալու հնարավորության մասին հավիտենականության մեջ նրանց համար, որոնք հավատում են, թե Աստված պիտի բերի Հիսուսով ննջողներին՝ Իր հետ (Ա. Թես. 4.13-18): Եվ հայտարարում է. «Տերն ինքը հրամանով, հրեշտակապետի ձայնով ու Աստծու փողով երկնքից վայր կգա, և Քրիստոսով մեռելները նախ հարություն կառնեն: Եվ հետո մենք, որ կենդանի ենք մնացել, նրանց հետ ամպերով օդի մեջ կհամիչտակվենք՝ Տիրուջը դիմավորելու...» (Հմ. 16-17): Եվ լավագույնն այն է, որ այս ամենից զատ մենք բոլորս հավիտյան Հիսուսի հետ պիտի լինենք:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ ենք այն վստահության համար, որ այս աշխարհը մեր միակ ունեցածը չէ, այլ օրհնյալ հավիտենականությունն է սպասում նրանց, որոնք Քեզ են վստահում: Ամեն: **Մահանալիս Աստծո ժողովուրդը «մնաս բարով» չի ասում, այլ՝ «նորից պիտի հանդիպենք»:**

Կարդա՛ր  
Ա Թես. 4. 13-18

...ոչ մի բանի կարոտ չլինեք:  
Ա Թես. 4.12

## Տարեցների իմաստություն

2010-ին Մինդապուրում մի օրաթերթի հատուկ տեղեկագիր հրատարակեց, որ պարունակում էր ութ մեծահասակ քաղաքացիներից քաղված կյանքի դասեր: Տեղեկագրի առաջին տողերն ասում են. «Մինչ ծերությունը մտքին ու մարմնին մարտահրավերներ է տալիս, կարող է նաև անձի գիտելիքները ընդլայնել այլ ասպարեզներում՝ զգացական ու հասարակական գիտելիքների ճոխություն, որի հատկութունները գիտնականները սկսում են սահմանել իբրև իմաստություն... տարեցների իմաստություն»։ Վստահ ենք, որ իմաստուն տարեց մարդիկ մեզ շատ բան ունեն սովորեցնելու կյանքի մասին: Սակայն Աստվածաշնչում մենք հանդիպում ենք նոր դաս բարձրացած մի թագավորի, որ ձախողում է սա տեսնելու մեջ: Գ թագավորաց 12.3-ում կարդում ենք, թե երբ Սողոմոն թագավորը մեռավ, «բոլոր իսրայելացիները եկան ու խոսելով Ռոբովամ արքայի հետ՝ ասացին» ու խնդրեցին նոր թագավորից, որ իր հոր՝ Սողոմոնի դրած տուրքերի ծանր լուծը թեթևացնի, ու իրեն ծառայեն: Երիտասարդ թագավորը նախ երեցներից խորհուրդ հարցրեց (Հմ. 6): Սակայն մերժեց նրանց տված խորհուրդը ու իր հետ մեծացած երիտասարդների կարծիքը հարցրեց (Հմ. 8): Նա ժողովրդի լուծը ավելի ծանրացրեց, ու իր ժպրհությունն ու անհոգությունը իր թագավորության կործանման պատճառը դարձան: Բոլորս էլ կարիքն ունենք տարիների փորձառություն ունեցող մարդկանց խորհրդին, հատկապես նրանց, որոնք Աստծո հետ են քայլել ու ուշադրությամբ լսել Նրա խորհուրդները: Մտածիր Աստծո՝ նրանց տված ու նրանց ամբարած իմաստության մասին: Նրանք շատ բան ունեն Տիրոջ մասին մեզ հետ բաժանելու:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ կյանքիս մեջ դրած տարեց ու իմաստուն մարդկանց համար: Օգնիր ինձ, որ սովորեմ նրանցից և ուշադիր լինեմ Աստվածային խրատներին: Ամեն:

**ԽՈՒՍԱՓԵՂՈՒ ԿԱՄԱՐ ԵՐԻՏԱՍԱՐՊԱԿԱՆ ՍԻՎԱԼՆԵՐԻՑԻՑ՝  
ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՐԻՐ:**

Կարդա՛

Գ Թագ. 12. 1-7, 12-17

Ժամանակի երկարության մեջ կա իմաստություն, և կյանքի երկարության մեջ՝ միտքը հանճարեղ: Դր. 12.12

## Ծիշտ ցուցումներ

**Ե**րկրորդ աղջիկս անհամբեր էր քրոջ սենյակում՝ «մեծ աղջկա անկողնում» քնելու: Ամեն երեկո վերմակով ծածկում էի Բրիթթային՝ հստակ ցուցումներ տալով իր անկողնու մեջ մնալու՝ ազդարարելով, որ ե՛ս իրեն ետ պիտի տանեմ, եթե ինքը միայնակ չվերադառնա իր անկողինը: Ամեն գիշեր նրան գտա անցնելիս ու ետ տարա իր անկողինը: Տարիներ հետո իմացա, որ իր մեծ քույրը ուրախ էր սենեկակից ունենալու համար և հաճախակի ասել էր Բրիթթային, թե մայրիկը նրան է կանչում: Բրիթթան, իր քրոջ խոսքերին հավատալով, գնում էր ինձ փնտրելու ու ապա իրեն գտնում էր մեր սենյակում գտնվող իր հին անկողնում:

Միալ ձայներին ականջ դնելը կարող է իր հետևանքները ունենալ մեզ համար: Երբ Աստված մարդ ուղարկեց Բեթել, որ իր անունից խոսի, տվեց հստակ ցուցումներ, որ հաց չուտի ու ջուր չխմի այնտեղ եղած ժամանակ ու չվերադառնա իր անցած ճանապարհով չգնա (Գ Թագ. 13.9): Երբ Հերոբոամ թագավորը հրավիրեց նրան հաց ուտելու, մարգարեն մերժեց՝ հնազանդվելով Աստծո տված հրամանին: Երբ մի տարեց մարգարե հրավիրեց նրան հաց ուտելու, սկզբում մերժեց, սակայն երբ երեց մարգարեն ստեց նրան՝ ասելով, թե հրեշտակն էր իրեն պատվիրել, արգելք չկար: Ծիշտ այնպես, ինչպես ես էի ուզում, որ Բրիթթան «մեծ աղջկա անկողինը» վայելի, մտածում եմ, թե Աստված տխրեց, երբ մարդը իր ցուցումներին չհետևեց:

Մենք կարող ենք ամբողջովին Աստծուն վստահել, որովհետև նրա խոսքերը մեր կյանքի ուղին են: Մենք իմաստուն պիտի լինենք՝ լսելու և հնազանդվելու:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Տե՛ր, որ ինձ հետ հաղորդակցվում ես Քո խոսքի միջոցով: Օգնիր, որ ականջներս սրեմ Քո ձայնին ու հնազանդվեմ: Ամեն:

**Աստծո խոսքերն ամենից կարևորն են:**

Կարդա՛

Գ Թագ. 13. 11-22

Քանզի Տերն ինձ  
այսպիսի հրաման է  
տվել: Գ Թագ. 13.17

## Ինձ դեպի ժայռն առաջնորդիր

**Ե**րբ խոնավության գործիք զնելու համար շուկա գնացի, ուշադրությո՞ւնս գրավեց տարեց մի կին, որ վաճառատան միջանցքներում երթուղարձ էր անում: Խորհելով, թե նա էլ էր նույն գործիքից ցանկանում զնել, մի կողմ քաշվեցի, որ ինքը մոտենա: Շուտով մենք սկսեցինք խոսակցել մեր շրջանում գտնվող հարբուխի թույնի մասին, որ իրեն երկար ժամանակ հազ ու գլխացավ էր պատճառել: Մի քանի րոպե հետո նա դառը ճառախոսությո՞ւն սկսեց՝ հայտնելով իր տեսակետը թույնի սկզբնավորման մասին: Լսեցի՝ վստահ չլինելով, թե ինչ պիտի անեի: Քիչ հետո նա բարկացած ու հիասթափված թողեց վաճառատունը: Թեև իր ցանկությունը արտահայտել էր, որևէ բան չկարողացա անել՝ իր այդ ցավը բուժելու համար:

Կարդա՛ր  
Մաղմոս 60

Երկրի ծայրերից ես  
քեզ կանչեցի, երբ  
սիրտս հոգնեց:  
Մաղմ. 60.2

Դավիթը՝ Իսրայելի երկրորդ թագավորը, Սաղմոսներ գրեց իր բարկությունն ու հիասթափությունը արտահայտելու համար: Սակայն Դավիթը գիտեր, որ Աստված ոչ միայն լսում է, այլ նաև ունի դարման՝ իր ունեցած ցավի համար: 60-րդ Սաղմոսի մեջ նա գրում է. «Երկրի ծայրերից ես քեզ կանչեցի, երբ սիրտս հոգնեց: Ժայռից բարձր պահեցիր ինձ, առաջնորդեցիր ինձ...» (Հմ. 3-4): Աստված իր «հույսն էր» (Հմ. 4), «ժայռ», որին դիմեց:

Երբ մենք ցավի մեջ լինենք և կամ հանդիպենք ցավի մեջ եղող մեկին, Դավթի պարագան հետևելու լավ օրինակ թող լինի: Մենք կարող ենք զնալ դեպի «այն ժայռը, որ ավելի բարձր է» կամ էլ մեկին առաջնորդել այնտեղ: Երանի թե վաճառատան մեջ եղող այդ կնոջը Աստծո մասին խոսեի: Թեև Աստված մեր բոլոր ցավերը չի բուժում, սակայն մենք կարող ենք իր տված խաղաղությունը ունենալ ու վստահություն, թե լսում է մեզ:

**Աղոթք** - Հայր Աստված, օգնիր, որ ուշադիր լինեն ուրիշների կարիքներից, լսեն ու Քո ներկայության հույսը ներշնչեն նրանց: Ամեն:

**ժայռի վրա հանգստացիր:**

## Ոչ ամոթահար հավատարմություն

**Մ**արզական խաղերի երկրպագուները սիրում են իրենց խմբերի գովքը հյուսել: Թիմերի նշաններով լեցուն զգեստներ հագնելով, նկարներ ու գրություններ դնելով իրենց զիմատետրի էջին և խոսելով նրանց մասին իրենց բարեկամների հետ՝ երկրպագուները կասկած չեն թողնում իրենց հավատարմության մասին: Դիտրոյթ Թայգերը խմբի իմ գլխարկները, շապիկներն ու նրանց մասին խոսակցություններս ցույց են տալիս, որ ես ճիշտ այնտեղ եմ, նրանց հետ, ովքեր նրանց գովքն են անում:

Մեր մարզական հավատարմությունները կարող են մեզ հիշեցնել, թե մեր ճշմարտագույն և մեծագույն հավատարմությունը Տիրոջ հանդեպ պիտի լինի: Նման

ոչ ամոթալի հավատարմության մասին եմ մտածում, երբ կարդում եմ 33-րդ Սաղմոսը, ուր Դավիթը մեր ուշադրությունն է հրավիրում Մեկին, որ ավելի ազդու է, քան որևէ բան այս երկրի վրա:

Դավիթն ասում է. «Ամեն ժամ Տիրոջն օրհներգեմ» (Հմ. 2), և մենք զարմանում ենք մեր կյանքերի մեջ գոյություն ունեցող պարավությունների վրա, երբ ապրում ենք այնպես, կարծես Աստված ճշմարտության, լույսի և փրկության աղբյուրը չէ՛: Նա ասում է. «... Նրա օրհնությունն ամեն ժամ բերանումս լինի» (Հմ. 2), ու տեսնում ենք, թե մենք, փոխանակ Հիսուսի արածները օրհներգելու, գովաբանում ենք մեր արձանագրած ճղճիմ հաջողությունները:

Սխալ բան չէ ուրախանալ մեր նախասիրած մարզական խմբերով, ինչպես նաև մեր արձանագրած հաջողություններով: Սակայն մեր գերագույն փառաբանությունը պիտի լինի մեր Տիրոջը: «Մեծարեցե՛ք Տիրոջն ինձ հետ մեկտեղ, բարձրացնե՛ք նրա անունը միասին» (Սաղմ. 33.4):

**Աղոթք** - Տեր, օգնիր ինձ, որ Քո փառաբանությունը իմ շուրթերի վրա լինի, ու միշտ Քեզ մեծարեմ: Օգնիր, որ Քեզ վրա կենտրոնանամ: Ամեն:

**Հավատարմությունը ճշմարիտ սիրո քննությունն է:**

Կարդա՛

Սաղմոս 33. 1-4

Մեծարեցե՛ք Տիրոջն ինձ հետ մեկտեղ, բարձրացնե՛ք նրա անունը միասին: Սաղմ. 33.4

## Վեց տառով հավատք

**Ի**մ հոռետեսական հակումներով հաճախ ժխտական եզրակացու-  
թյան եմ հանգում իմ կյանքում եղած հանգամանքների արդ-  
յունքի վերաբերյալ: Արագ հուսահատվում եմ աշխատանքի ծրագ-  
րերիցս, հեշտությամբ համոզվում, թե իմ ունեցած մյուս բոլոր ծրագ-  
րերից ոչ մեկը չպիտի հաջողվի. թեև ոչ մի կապ չունի այս բաների  
հետ, հավանաբար երբեք չպիտի կարողանամ հանգիստ ձևով ոտքի  
մատներիս դիպչել: Եվ վայ ինձ, ես ահ-  
ավոր ու սարսափելի մայր եմ, որ ոչ մի  
բան լավ չի կարողանում անել: Պարտու-  
թյունս մի ասպարեզում ազդում է իմ զգա-  
ցումների վրա շատ այլ պարագաներում:

Ինձ համար հեշտ է երևակայել, թե  
ինչպես կարող էր Ամբակում մարգարեն  
հակադարձել Աստծո ցույց տված բաներին: Աստծո ժողովրդի գա-  
լիք երկար ու տաժանելի տարիների նեղությունները տեսնելուց հե-  
տո նա հուսահատության մեծ պատճառ ուներ: Վիճակը իսկապես  
չարագուշակ էր. միրգ չպիտի լինի, միս չպիտի լինի, և հանգիստ  
չպիտի լինի: Նրա խոսքերը հասցնում են ինձ հուսահատության, հո-  
ռետեսության, մինչ վեց տառից բաղկացած «սակայն» բառը գոր-  
ծածելը ինձ սթափեցնում է. «Ես պիտի ուրախանամ Տիրոջով, ուրա-  
խանամ իմ փրկիչ Աստուծով» (Ամբ. 3.18): Հակառակ տիրող տագ-  
նապալի վիճակներին՝ Ամբակում մարգարեն կարողացավ գտնել ու-  
րախ լինելու պատճառներ՝ պարզապես Աստծո ով լինելու համար:

Մինչ մենք հակամետ ենք մեր հարցերը չափազանցելու, Ամ-  
բակումը իրապես դիմազրավեց ծանր դժվարություններ: Եթե նա  
կարողացավ Աստծուն փառավորել այդ պահերին, վստահաբար  
մենք էլ կարող ենք: Երբ մենք հուսահատության խորքն ենք հաս-  
նում, կարող ենք նայել Աստծուն, որ մեզ վեր է բարձրացնում:

**Աղոթք** - Տե՛ր, Դու ես իմ բոլոր ցնծությունների պատճա-  
ռը: Օգնիր, որ կարողանամ իմ աչքերը Քեզ ուղղել, երբ իմ  
պարագաները ցավալի ու դժվար են: Ամեն:

**Աստված մեր ցնծության պատճառն է դժվարությունների ու  
նեղությունների ժամանակ:**

Կարդա՛ր  
Ամբակում 3.17-19

Ես պիտի ուրախանամ  
Տիրոջով, ուրախանամ  
իմ փրկիչ Աստուծով:  
Ամբ. 3.18



## Միավորել

**Ի**նչո՞ւ է հինգ միլիոնից ավելի մարդ գումար վճարում մղոն-ներին արգելքներով ձգվող վազքի մրցումի համար, ուր բարձր պատեր պիտի մագլցեն, ցելսի մեջ սողան և ուղղահայաց լայն խողովակի միջով վեր բարձրանան, երբ վերևից ջուր է հոսում: Ոմանք սա նկատում են որպես անձնական մարտահրավեր՝ իրենց լավագույնը անելու և կամ իրենց վախերը հաղթահարելու: Ուրիշների համար գրավիչը խմբային համագործակցությունն է, ուր մրցակիցները իրար օգնում են ու խանդավառում: Մեկը սա կոչել է «չդատելու շրջան», ուր անձանոթ մարդիկ աշխատում են օգնել իրար, որպեսզի շահեն մրցումը:

Կարդա՛ր  
Եբր. 10. 19-25

Եվ իրար նկատմամբ զգույշ լինենք՝ իրար սիրո ու բարի գործերի մղելով: Եբր. 10.24

Աստվածաշունչը թախանձում է մեզ հետամուտ լինել խմբային աշխատանքի՝ որպես կենդանի օրինակ Հիսուսի մեջ եղած մեր հավատքը ապրելու: «Եվ իրար նկատմամբ զգույշ լինենք՝ իրար սիրո ու բարի գործերի մղելով: Եվ մեր՝ իրար հավաքվելը չթողնենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ իրար հորդորենք, և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցել է» (Եբ. 10.24-25):

Մեր նպատակակետը հավատքի մրցումի մեջ «առաջին դիրքը» գրավելը չէ, այլ շոշափելի քաջալերանքով ուրիշներին մոտենալը՝ օրինակ լինելու և օգնություն ձեռք երկարելու:

Պիտի հասնի այն օրը, երբ մեր կյանքը ավարտվի վերջանա: Մինչ այդ եկեք իրար մղենք, պատրաստ լինենք օգնելու և իրար մոտենանք ամեն օր:

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, տո՛ւր մեզ տեսնելու աչքեր ու զորություն՝ իրար օգնելու հավատքի մրցումի մեջ: Ամեն:

**Միասին ենք վազում հավատքի մրցումի մեջ:**

## Աղոթքի պարզևը շնորհել

«Ձիմացա, թե ի՛նչ է աղոթքի պարզևը, մինչև եղբայրս հիվանդացավ, ու դուք բոլորդ աղոթեցիք նրա համար: Բավարար խոսքեր չունեմ ասելու, թե ձեր աղոթքները որքա՛ն մխիթարուեթյուն եղան մեզ համար»:

Լորանը արցունքոտ աչքերով շնորհակալությու՛ն հայտնեց մեր եկեղեցու անդամներին արած աղոթքների համար, երբ իր եղբայրը քաղցկեղի ախտաճանաչում ունեցավ: Նա շարունակեց՝ ասելով. «Ձեր մատուցած աղոթքները նրան ուժեղացրին իր դժվար պահերին, ինչպես նաև քաջալերուեթյուն եղան մեր ընտանիքի բոլոր անդամներին»: Լավագույն ձևերից մեկը ուրիշներին սիրելու՝ աղոթելն է: Հիսուսը մեր գերագույն օրինակն է այս պարագայում: Նոր Կտակարանը տարբեր առիթներով մեզ ասում է Հիսուսի՝ ուրիշների համար աղոթելու մասին և նույնիսկ ցույց տալիս, թե Նա շարունակում է մեզ համար Հորը բարեխոսել: Հռոմեացիների 8.34-ը ասում է. «Քրիստոսը... Աստծո աջ կողմին է, որ մեզ համար բարեխոս էլ է»: Նույնիսկ խաչի վրա զոհաբեր սեր ցույց տալուց հետո հարուցյալ ու համբարձյալ Տեր Հիսուս Քրիստոսը շարունակում է հոգածություն ցույց տալ՝ մեզ համար աղոթելով հենց հիմա՝ այս պահին:

Մեր շուրջ կան մարդիկ, որոնք կարիք ունեն, որ մենք Քրիստոսի օրինակին հետևենք ու մեր աղոթքներով մեր սերը հայտնենք՝ խնդրելով Աստծո հոգատարությունն ու միջամտությունը իրենց կյանքերի մեջ: Մենք կարող ենք Աստծուց օգնություն խնդրել նրանց համար աղոթելով, և Նա պիտի տա: Թող որ մեր սիրո Տերը զորացնի մեզ, որ կարողանանք առատաձեռնությամբ մեր աղոթքի պարզևը տալ ուրիշներին:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Տեր, որ աղոթում ես ինձ համար: Օգնիր, որ Քեզ և ուրիշներին ծառայեմ հավատարմությամբ աղոթելով այսօր: Ամեն:

**Աղոթքը բաժանելու պարզև է:**

Կարդա՛  
Յոռմ. 8. 28-34

Մեր հանդեպ շատ մարդկանց ցույց տված շնորհով շատերի կողմից գոհությու՛ն մատուցվի մեզ համար: Բ Կորնթ. 1.11

## Հայտնաբերված՝ փրկվելու համար

**Ե**րբ պատանի էի, նայում էի հորս, երբ հերկում էր երեք չմշակված արտերը: Առաջին հերկելու ընթացքում, նախ, մեծ քարերն էին դուրս գալիս, որոնք մի կողմ էր շարտում: Ապա երկրորդ անգամ էր հերկում ու երրորդ անգամ՝ հողը ավելի պատրաստելու ցանքի համար: Յուրաքանչյուր անցքին արորը դուրս էր հանում մնացյալ մանր քարերը: Այս ընթացքը շարունակվում էր՝ պահանջելով բազմաթիվ երթուղարձեք դաշտի մեջ: Շնորհքի մեջ աճումն էլ նման է այս հերկելու ընթացքին: Երբ մենք նոր հավատքի ենք գալիս, «մեծ» մեղքերն են երևում: Խոստովանում ենք դրանք Աստծուն և ընդունում Նրա ներումը: Սակայն երբ տարիներն անցնում են, ու մինչ Աստծո խոսքն էլ մեր միջից է անցնում, ընկզմվում մեր ներսը, Սուրբ Հոգին ուրիշ մեղքեր է դուրս բերում: Հոգու դուրս բերած մեղքերը, որոնք նկատվում են հանցանքներ, անկարևոր, թեթև մեղքեր, հայտնվում են որպես քանդիչ արարքներ: Հպարտություն, ինքնագովություն, չարամտություն, գանգատի, նախապաշարումի, սնոտիապաշտություն, նախանձի, ատելություն և ի նպաստ անձի ներողամտության մեղքեր: Աստված յուրաքանչյուր մեղք դուրս է բերում, որպեսզի մի կողմ նետի դրանք: Նա հայտնաբերում է դրանք՝ ներելու համար: Երբ պահված վնասակար դիրքորոշումները դուրս են գալիս, կարող ենք ազդիթել, ինչպես Դավիթն արեց. «Հանուն քո անվան, Տե՛ր, քավություն տուր իմ մեղքերին, քանզի շատացան դրանք» (Սաղմ. 24.11): Մեզ խոնարհեցնող մեղքերի հայտնությունը, որքան էլ ցավալի լինի, բարի է մեր հոգու համար: Նա «հեղբրին առաջնորդում է դատաստանի մեջ, հեղբրին սովորեցնում իր ճանապարհը» (Հմ. 8-9):

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ հիշում ես Քո սիրով: Ուղղիր ու առաջնորդիր մեզ: Սովորեցրու մեզ ապրել նրանց նման, որոնց հանցանքները ներված են: Ամեն:

**Հիսուսն ընդունում է մեզ այնպիսին, ինչպիսին ենք, և դարձնում այն, ինչ որ ենք:**

**Կարդա՛**  
**Սաղմոս 24. 1-11**

Տե՛ր, ցույց տուր ինձ քո ճանապարհները և քո շավիղները սովորեցրո՛ւ ինձ: Սաղմ. 24.4

## Յրաշքներ

**Ո**մանք միտում ունեն միայն աշխարհի սխալ բաները տեսնել: National Geographic թերթի նկարիչ Դեմոկր Ջոնսը իր մասնագիտությունն օգտագործում է՝ ցույց տալու աշխարհի լավ բաները: Նա սպասում է ու դիտում, մինչև հանկարծ լույսի մի շող կամ հրաշալի տեսարան հայտնաբերվի, որ միշտ եղել է: Գործածում է իր լուսանկարչական սարքը՝ հրաշալի գեղեցկություն գտնելու բնության մեջ ու սովորական մարդկանց դեմքերի վրա: Եթե մեկը պատճառ ունենա, որ միայն աշխարհի սխալ հանգամանքների վրա կենտրոնանա, դա Հոբբը պիտի լինի: Իրեն ուրախություն պատճառող բոլոր բաները կորցնելուց հետո նույնիսկ իր բարեկամները ամբաստանեցին նրան:

Նրանք միաձայն այսպանեցին նրան՝ ասելով, թե իր կրած չարչարանքները իր գործած մեղքերի համար էին: Երբ Հոբբը օգնություն աղերս բարձրացրեց դեպի երկինք, Աստված լուռ մնաց:

Վերջապես մրրիկի ու փոթորկի խավարի քաոսային վիճակի միջից Աստված թելադրեց Հոբբին նկատի ունենալ բնության այն բոլոր հրաշքները, որոնք ցույցնում են մեր կարողությունից այն կողմ եղող իմաստությունն ու զորությունը (Հոբ 38.2-4):

Նա հիմա մեզ հարց պիտի տա՞: Եվ ի՞նչն է վերաբերվում բնական երևույթներին՝ շան ու կատվի վարմունքը, տերևի շարժումը կամ խոտի ցողունը: Կարող է լույսի մի շող կամ էլ մի գեղեցիկ տեսարան հայտնաբերվել, նույնիսկ մեր ցավերի մեջ. Արարչի միտքն ու սիրտը միշտ էլ մեզ հետ ու մեզ համար են:

**Աղոթք** - Երկնքում ապրող Հայր, շատ ժամանակ ենք անցկացրել խորհելով միայն սխալ բաների մասին: Խնդրում ենք, օգնիր մեզ՝ տեսնելու Քո ներկայության ապացույցը այն բաների մեջ, որ միայն Դու կարող ես անել: Ամեն:

**Բնության դեմքին հրաշքներ կան, որոնք բնավ չեն պակասում:**

### Կարդա՛ր Հոբ 38.1-18

Որովհետև նրանից, նրանով ու նրա համար է ամեն բան. նրան փառք հավիտյան. ամեն: Հոմ. 11.36

## Փսիսացող բառեր

**Ե**րիտասարդ մի մարդ անհանգիստ զգաց, երբ նստեց օդանավի աթոռին: Աչքերը չէր կտրում պատուհանից: Հետո դրանք փակեց ու խոր շունչ քաշեց՝ փորձելով իրեն հանգստացնել: Սակայն չհաջողվեց: Երբ օդանավը վեր բարձրացավ, նա սկսեց կամաց-կամաց ետ ու առաջ շարժվել: Միջանցքի մյուս կողմում նստած տարեց մի կին իր ձեռքը նրա ուսին դրեց ու հանդարտորեն սկսեց նրա հետ զրուցել՝ նրա ուշադրությունը գրավելու համար: Մի քանի բան փսփսաց. «Ի՞նչ է անունդ», «Որտեղի՞ց ես»: «Ամեն ինչ լավ կլինի»: Եվ «Լավ ես անում»: Կինը կարող էր զայրանալ նրա շարժումներից կամ էլ կարող էր անտեսել նրան: Սակայն նա ընտրեց մի քանի բառեր ասելու միջոցը:

**Փոքրիկ բաներ:** Ու երբ երեք ժամ հետո հասան, երիտասարդն ասաց. «Շատ շնորհակալ եմ, որ ինձ օգնեցիր»:

Նման գեղեցիկ ու քաղցր վերաբերմունքի պատկերներ դժվար է գտնել: Ազնվությունը բնական բան է մեզնից շատերի համար. մեր հիմնական մտահոգությունը միշտ էլ մեր անձերն են եղել: Սակայն երբ Պողոս առաքյալը թախանձելով ասաց. «Իրար հետ քա՛ղցր եղեք, գթած՝ իրար ներելով...» (Եփ. 4.32), նա չէր ասում, թե ամեն բան մեզնից է կախված: Տեր Հիսուսով մեզ նոր կյանք տրվելուց հետո Հոգին սկսում է մեզ փոխակերպել: Ազնվությունը մեր խորհուրդներն ու կեցվածքը նորոգող Սուրբ Հոգու կատարած մնայուն գործն է (Հմ. 23):

Միրո ու ողորմության Աստվածը գործի վրա է մեր սրտերի մեջ՝ արտոնելով մեզ, որ ուրիշների կյանքին հաղորդակցվենք՝ նրանց ու նրանց ականջների մեջ քաջալերական խոսքեր փսփսալով:

**Աղոթք** - Տեր, ինձ գործածիր այսօր՝ մեկին հույս ներշնչելու, բեռը թեթևացնելու ու քաջալերելու համար: Ամեն:

**Ողորմությունը ուրիշների խնդիրները հասկանալու և նրանց հասնելու է:**

Կարդա՛  
Եփես. 4. 22-32

...հավատի շինության համար պիտանի, որ շնորհ տա լսողներին: Եփես. 4.29

## Նամակների տուն

**Տ**նից հետո, Համաշխարհային երկրորդ պատերազմի համար ամերիկացի զինվորագրվողները իրենց պատրաստվելու ընթացքում սկսեցին զվարճախոսել և նամակներ գրել, որպեսզի կարողանան դիմանալ իրենց մարտահրավերներին: Մի նամակում մի երիտասարդ զինվոր նկարագրում է պատվաստումի պարագան հետաքրքիր չափազանցությունով: «Բժիշկները տեղավոր հրացանով մեզ հետապնդում են, բռնի ուժով զգեստնում, ասեղով մեզ գետին գամում ու մեկական ասեղ խրում մեր երկու ձեռքերին»: Մակայն մի զինվոր անդրադառնում է, թե զվարճախոսությունը կարող է իրեն միայն որոշ տեղ տանել: Ապա Աստվածաշունչ ստացած լինելով՝ գրում է. «Հաճույքով եմ այն կարգում ամեն գիշեր ու անդրադառնում, որ շատ բան կարելի է սովորել Աստծո խոսքից»:

Բաբելոնի մեջ երկար տարիներ գերի լինելուց հետո աքսորված հրեաները տուն վերադարձան ու տեսան, թե իրենց հետ բերել էին իրենց կրած նեղությունները: Մինչ նրանք մաքառեցին՝ վերաշինելու Երուսաղեմի պարիսպները, հակադարձության հանդիպեցին թշնամիներից, ինչպես նաև իրենց մեղքերից: Իրենց ունեցած դժվարությունների մեջ նրանք Աստծո խոսքին վերադարձան ու զարմացան իրենց սովորածների համար: Երբ քահանաները Աստծո Օրենքի Գիրքը կարդացին, ժողովուրդը սկսեց լալ (Նեեմի 8.10): Մակայն միաժամանակ նրանք մխիթարություն ունեցան: Կառավարիչ Նեեմիան նրանց ասաց. «Մի՛ սգացեք և մի լացեք... որովհետև սա մեր Տեր Աստծու սուրբ օրն է» (Հմ. 10): Կարիք չունենք նեղության սպասելու՝ Աստծո խոսքը լսելու համար: Խոսքից սովորում ենք իր նկարագրի, ներումի և տված մխիթարության մասին:

**Աղոթք** - Տեր, օգնիր, որ միայն նեղության ժամանակ Քեզ չփնտրենք, այլ՝ միշտ: Շնորհակալ ենք, որ մեզ ամեն օր սովորեցնում ես Քո սիրո մասին: Ամեն:

**Աստվածաշունչը մեզ օգնում է տեսնելու, թե մենք ով ենք, ու նաև օգնում է, որ տեսնենք, թե Աստված որքան է մեզ սիրում:**

### Կարդա՛ր Նեեմի 8.5-12

...օրենքները բացատրում էին ժողովրդին, և ժողովուրդը կանգնած էր ըստ մարդկանց կարգի: Նեեմի 8.7

## Երախտապարտ սիրտ ունենալու արվեստը

**Մ**եր պսակադրությունն օրը Մարթին և ես հաճույքով ուխտեցինք հավատարիմ լինել «լավ կամ վատ ժամանակ, երիտասարդության կամ ծերության ժամանակ, առողջության կամ հիվանդության պահին, հարստության կամ աղքատության մեջ»: Մի խոսքով, պսակադրության ուրախ օրվա մեջ տարօրինակ է թվում ուխտի ժամանակ խոսել վատ օրերի, ծերության, հիվանդության և աղքատության մասին, սակայն ուխտը հաստատում է, թե կյանքում, այնուամենայնիվ, կան վատ օրեր:

Հետևաբար, ի՞նչ պիտի անենք, երբ դիմագրավում ենք կյանքի դժվարությունները: Պողոսը թախանձում է մեզ Քրիստոսի անունով, երբ ասում է. «Ամեն բանով գոհացե՛ք...» (Ա. Թես. 5.18): Ուր-

բան էլ դժվար թվա սա, լավ պատճառ կա, որ Տերը քաջալերի մեզ, որ երախտապարտ հոգի զարգացնենք: Երախտագիտությունը արժատավորված է այն ճշմարտության մեջ, թե Տերը «բարի է» և «հավերժ է ողորմությունը Նրա» (Սաղմ. 117.1): Նա ներկա է մեզ հետ ու մեզ զորացնում է դժվարության ու նեղության ժամանակ (Եբ. 13.5-6), և Նա սիրով գործածում է մեր փորձությունները՝ մեր նկարագրերը իր նմանությունով զարգացնելու համար (Հռոմ. 5.3-4):

Երբ կյանքը իր դժվարություններով մեզ վրա է հարձակվում, պիտի ընտրել երախտապարտ լինելը, որ մեզ կենտրոնացնում է Աստծոյ բարության վրա ու տալիս հարատևելու զորությունը նեղությունների մեջ: Սաղմոսերգուի հետ մենք էլ կարող ենք երգել. «Գոհություն մատուցենք Տիրոջը, քանզի բարի է Նա, քանզի հավերժ է ողորմությունը Նրա» (Սաղմ. 118.29):

**Աղոթք** - Տեր, հասկանում եմ, որ հարցերի վրա կենտրոնանալով՝ կարող եմ մոռանալ, որ փորձությունների մեջ Դու բարի ես: Սովորեցրու երախտապարտ սիրտ ունենալու արվեստը: Ամեն:

**Հնորհակալությունը արժանիք է, որ աճում է վարժությունով:**

### Կարդա՛

Սաղմ. 117.1-14, 26-29

Գոհություն մատուցեք Տիրոջը, քանզի բարի է նա, քանզի հավերժ է ողորմությունը նրա: Սաղմ. 117.1

## Լավ եղանակ

**Ա**յսօր գարնան առաջին օրն է աշխարհի հյուսիսային մասում: Եթե Ավստրալիայում ես ապրում, աշնան առաջին օրն է. գարնանային զուգորություն հյուսիսային կիսագնդում և աշնանային զուգորություն հարավայինում: Այսօր արևը շողում է ուղիղ հասարակածի վրա, և ցերեկվա ու գիշերվա ժամերը մոտավորապես հավասար են ամբողջ աշխարհում:

Նոր եղանակները կարևոր են շատերի համար: Ոմանք օրերը հաշվում են, որովհետև մտածում են, թե նոր եղանակը նոր հույս է տալիս: Թերևս դուք ու օրացույցի վրա նշաններ ես դնում՝ ցույց տալու համար, թե մի ձմեռ էլ է անցել Վիսկոնսինի մեջ: Եվ կամ սպասում ես, որ աշունը հանգիստ տա քեզ ավստրալական կիզիչ արևից, եթե Մելբուրնում ես ապրում:

Մենք նույնպես կյանքի տարբեր եղանակներ ենք ունենում, որոնք կապ չունեն օդի հետ: Ժողովողի գրքում հեղինակը մեզ ասում է, թե երկնքի տակ եզոզ ամեն բանի համար ժամանակ կա, ժամանակ՝ նշանակված Աստծո կողմից, որի ընթացքում մենք ապրում ենք մեր կյանքերը (3.1-11): Մովսեսը խոսեց իր կյանքում նոր եղանակի մասին Իսրայելի ժողովրդին անապատի միջով առաջնորդելուց հետո (Բ Օրինաց 31.2), երբ պետք է իր առաջնորդությունը հանձնեն Հեսուին: Եվ Պողոսը միայնություն եղանակ անցկացրեց, երբ բանտարկված էր Հռոմի մեջ՝ խնդրելով այցելուներ ունենալ, սակայն միաժամանակ հասկանալով, թե Աստված «իր կողքին էր» (Բ Տիմ. 4.17):

Անկախ կյանքի եղանակներից՝ շնորհակալ լինենք Աստծուն իր մեծություն, հոգատարություն և ընկերակցություն համար:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ քո հոգատարության խոստումի համար կյանքիս այս եղանակի մեջ: Դու ես թույլ տվել այս վիճակները որակի պատճառով: Օգնիր, որ այս ժամանակը գործածեմ, որպեսզի ավելի վստահեմ քեզ: Ամեն:

**Ամեն նոր եղանակ ցնծության պատճառ է բերում իր հետ:**

### Կարդա՛ր Ժողովող 3. 1-11

Ամեն բանի ժամանակը կա, և աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը: Ժող. 3.1



## Ջրի վրա քայլել

**Խ**իստ ձմռան ցուրտ եղանակին համարձակվեցի Միչիգանի Լիճը գնալ, որ աշխարհի հինգերորդ մեծ լիճն է՝ տեսնելու նրա սառած վիճակը: Վերարկուս հագած կանգնեցի ափին՝ դիտելու սառած լճի հիանալի տեսարանը, ուր հաճախ էի վայելում կիզիչ արևը: Ջուրը սառած էր ալիքավոր ձևով՝ ստեղծելով սքանչելի սառցե գլուխգործոց:

Քանի որ ջուրը սառած էր, ես առիթ ունեցա «ջրի վրա քայլելու»: Թեև վատահ էի, թե սառույցը բավականաչափ հաստ էր, առաջին քայլերս դանդաղ արեցի: Վախենում էի, որ սառույցը է՛նր կարողանա ծանրությանս տակ դիմանալ: Մինչ զգուշությամբ սկսեցի քայլել այս անծանոթ փորձառության մեջ, չկարողացա չմտածել այն դեպքի մասին, երբ Հիսուսը Գալիլիայի Ծովի վրա Պետրոսին է կանչում, որպեսզի նավից դուրս գա:

Երբ աշակերտները տեսան Հիսուսին ջրի վրայով քայլելիս, նրանց առաջին հակազդեցությունը վախն էր: Սակայն Հիսուսն ասաց նրանց. «Քաջալերվեցե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք» (Մատթ. 14.26-27): Պետրոսը կարողացավ իր վախերին հաղթել և նավից դուրս գալ ջրի վրա, որովհետև նա գիտեր, որ Հիսուսը ներկա է: Սակայն երբ իր քաջարի քայլերը սկսեցին վարանել՝ փոթորկի ու ալիքների պատճառով, աղաղակեց Հիսուսին: Հիսուսը տակավին այնտեղ էր՝ մոտիկ, ու բավարար էր, որ իր ձեռքը երկարի՝ նրան ազատելու համար: Եթե դու այսօր ինչ-որ բանի ես դիմագրավում, ուր Հիսուսը կանչում է քեզ՝ մի բան անելու, որ կարող է անկարելի թվալ քեզ, ինչպես ջրի վրա քայլելը, քա՛ջ եղիր: Նա, որ կանչում է, ներկա պիտի լինի քեզ հետ:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ այն վստահության համար, թե Ղու միշտ մեզ հետ ես: Ամեն:

**Երբ ձայն ենք տալիս Աստծուն, Նա լսում է:**

### Կարդա՛ր Մատթեոս 14. 25-33

Գիսուսն իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերվեցե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք»: Մատթ. 14.24

## Ավանդը փոխանցել

Հեռախոսը հնչեց՝ տեղեկացնելու եկած հաղորդագրության մասին: Աղջիկս ուզում էր տատիս՝ դաղձով և պաղպաղակով կարկանդակի բաղադրատոմսը: Մինչ փնտրում էի հին ճաշի բաղադրատոմսերի տուփի դեղին քարտերի մեջ, ուշադրությունս գրավեց տատիս հատուկ ձեռագիրը, ինչպես նաև մորս ձեռագիր գանազան նոթերը: Ինձ այնպես թվաց, որ աղջկաս՝ դաղձով և պաղպաղակով կարկանդակի բաղադրատոմսը ունենալու խնդրանքը կարող է մեր ընտանիքը դնել չորրորդ սերնդի մեջ:

Ու մտածեցի, թե արդյոք ուրիշ ինչ ընտանեկան ժառանգական իրեր կարող են անցնել սերնդեսերունդ: Ինչ վերաբերում է հավատքի ընտրություններին, կարկանդակի կողքին կարո՞ղ է տատիս հավատքը ու իմը կարևոր դեր խաղալ աջկաս ու թոռնիկիս կյանքում:

78-րդ Սաղմոսում Սաղմոսերգուն հեծեծում է կամակոր Իսրայելի համար, որ կորցրել է իր հավատքի խարխալը: Նա աղերսում է Աստծուն՝ իր ժողովրդին ազատելու անաստվածներից և վերահաստատելու Երուսաղեմի ապահովությունը: Երբ սա պատահում է, նա խոստանում է վերանորոգված ու շարունակական հանձնառություն Աստծո ճանապարհներին: «Մենք՝ քո ժողովուրդն ու քո արոտի ոչխարները, հավիտյան քեզ գոհուլություն պիտի մատուցենք, սերնդից սերունդ պիտի պատմենք քո օրհնությունը» (Սաղմ. 78.13): Ես ուրախությամբ ուղարկեցի բաղադրատոմսը՝ գիտենալով, թե տատիս անուշեղենի ավանդը կարող է մեր ընտանիքի նոր սերնդի վայելքը ունենալ: Ու աղոթեցի անկեղծորեն ամենից մնայուն ավանդի մասին, որ մեր ընտանեկան հավատքի ազդեցությունն է:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, տուր մեզ իմաստություն՝ Քո ավանդը փոխանցելու սերնդեսերունդ: Ամեն:

**Բաժանել ու ապրել մեր հավատքը ավանդ թողնելու լավագույն ձևն է:**

Կարդա՛ր  
Սաղմոս 78. 8-13

Մենք՝ քո ժողովուրդն ու քո արոտի ոչխարները, հավիտյան քեզ գոհուլություն պիտի մատուցենք, սերնդից սերունդ պիտի պատմենք քո օրհնությունը: Սաղմ. 78.13

## Կրկնակի խոստում

**Տ**արիներ առաջ, այն օրից ի վեր, երբ Հռութը սկսեց քաղց-  
կեղով տառապել, նա չի կարողանում ուտել, խմել և որևէ  
բան կուլ տալ: Նա կորցրել է նաև Ֆիզիկական ուժը, ու բազ-  
մաթիվ վիրահատությունները և բուժման փորձերը լուրջ ստվեր  
են թողել նրա մարմնի անցյալի կառուցվածքից:

Սակայն Հռութը դեռ կարողություն ունի Աստծուն պաշտե-  
լու: Նրա հավատքը հաստատ է, ու նրա  
ուրախությունը վարակիչ է: Նա վստա-  
հում է Աստծուն ու հույս ունի, որ մի  
օր ամբողջովին պիտի բուժվի: Նա աղո-  
թում է հրաշքի համար և վստահ է, թե  
Աստված պիտի պատասխանի՝ ուչ կամ  
չուտ: Ի՞նչ սքանչելի հավատք:

Կարդա՛  
եսայի 25. 1-9

...սքանչելի գործեր  
կատարեցիր՝  
առաջին խորհուրդը  
ճշմարիտ: Ես. 25.1

Հռութը բացատրում է, թե իր հավատքը  
հաստատ պահողը այն է, որ Աստված ոչ միայն իր խոստումը պի-  
տի կատարի իր ժամանակի մեջ, այլև պիտի պահի նրան, մինչև  
դա իրականանա: Այս նույն հույսն է, որ Աստծո ժողովուրդն ու-  
նեն, երբ սպասում էր, որ Նա իր ծրագիրն իրագործի (Ես. 25.1),  
ազատի իրենց թշնամիներից (Հմ. 2), արցունքները սրբի, վերաց-  
նի նախատինքը և «մահը ընդմիշտ անհետացնի» (Հմ. 8):

Մինչ այդ Աստված իր ժողովրդին սպասումի մեջ տվեց մի  
ամբողջ ու ապաստան (Հմ. 4): Նրանց մխիթարեց տաճնապաների  
ժամանակ, ուժ տվեց հարատևելու ու վստահություն, որ ինքը  
նրանց հետ է այնտեղ:

Այս է մեր ունեցած կրկնակի խոստումը՝ Հույսը մի օր  
ազատ լինելու, առավել ևս իր մխիթարություն, զորություն և  
ապաստանի նախատեսությունը մեր կյանքի ընթացքում:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք քո սքանչելի հույսի  
պարգևի համար: Դու խոստացել ես ինձ փրկել ու ինձ հետ  
քայլել իմ կյանքի բոլոր օրերում: Ամեն:

**Աստծո հավատարմությանը վստահելը կարող է փարատել  
մեր վախը:**

## Ապացույցի գորուծությունը

**Ի**մ արած փորձերը տան մեջ փչացած բաները նորոգելու, ընդհանրապես պատճառ են դառնում որևէ մեկին վարձատրելու, որպեսզի իմ արած սխալն ուղղի: Սակայն վերջերս հաջողեցի տան մեջ գործածվող մի գործիք նորոգել՝ քայլ առ քայլ հետևելով մի հոլովակի, որ ցույց էր տալիս, թե ինչպես կարելի է նորոգել այդ խափանված գործիքը: Պողոսը ազդու օրինակ էր իր երիտասարդ գործակից Տիմոթեոսի համար, որ իր հետ ճամփորդում էր ու հետևում իր մատուցած ծառայությանը: Հռոմի բանտից Պողոսը Տիմոթեոսին գրում է. «Բայց դու հետևեցիր իմ ուսուցումին, վարմունքին, մտադրությանը, հավատին, համբերատարությանը, սիրուն, համբերությանը, հալածանքներին, չարչարանքներին...» (Բ. Տիմ. 3.10-11): Նա նաև թախանձում է նրան. «Բայց դու հաստատուն մնա այն բաների մեջ, որ սովորեցիր ու հավատացիր՝ իմանալով, թե ումից սովորեցիր, և որ մանկությունից սուրբ գրքերը գիտես...» (Հմ. 14-15):

**Կարդա՛ր**  
**Բ Տիմոթեոս 3. 10-17**

Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է ու օգտակար՝ սովորեցնելու և հանդիմանություն, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար: Բ Տիմ. 3.16

Պողոսի կյանքը ապացուցում է մեր կյանքը Աստծո խոսքի հաստատ վեմի վրա ամրապնդելու անհրաժեշտությունը: Նա հիշեցնում է Տիմոթեոսին, որ Աստվածաշունչը գորեղ է ու Աստծուց տրված, և պետք է սովորեցնել ու գործնական կերպով ներկայացնել ուրիշներին, որոնք փափագում են Հիսուսին հետևել: Մինչ շնորհակալություն ենք հայտնում Տիրոջը այն մարդկանց համար, որոնք օգնել են մեր հավատքի մեջ աճելու, մենք մարտահրավեր ունենք նրանց օրինակին հետևելու և ճշմարտությունը ապրելու, ինչպես սովորեցնում ու քաջալերում ենք ուրիշներին: Այդ է գորությունը ապացուցելու:

**Աղոթք** - Տեր, ինչպես ուրիշներն են Քո ճշմարտությունն ապացուցել, մենք մեր հերթին ուրիշներին ցույց տանք այն: Ամեն:

**Մենք հրավիրված ենք Աստծո խոսքը գործնական կերպով ապրելու, մինչ սովորեցնում ենք ու քաջալերում ուրիշներին:**

## Ո՞վ է սա

**Ե**րևակայիր, որ կանգնած ես ուրիշ հանդիսատեսների հետ հողե ճանապարհի եզրին: Կանայք քո թիկունքում իրենց մատներին ծայրին են բարձրանում՝ փորձելով տեսնել նրան, որ դալիս է: Հեռվում տեսնում ես մի մարդ՝ էջի վրա նստած, ու մինչ նա մոտենում է, ժողովուրդը իր զգեստներն է փռում ճանապարհին: Ու հանկարծ լսում ես ետևում ծառի կտրվելու ձայնը: Մի մարդ արմավենու ճյուղեր է կտրում, ու մարդիկ դրանք դնում են ճանապարհի վրա՝ նրա առջև:

Հիսուսի հետևորդները նախանձելի կերպով պատվեցին Նրան, երբ մտավ Երուսաղեմ խաչելությունից մի քանի օր առաջ: Բազմությունը ուրախացավ ու Աստծուն փառավորեց «այն բոլոր հրաշքների համար, որ տեսել էր» (Ղուկ. 19.37): Հիսուսի հավատարիմ հետևորդները Նրան շրջապատեցին՝ գոչելով. «Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկող թագավորը...» (Հմ. 38): Նրանց խանդավառ պատիվ տալը ազդեց Երուսաղեմի բնակիչների վրա: Ու երբ Հիսուսը վերջապես հասավ, ամբողջ քաղաքը շարժվեց և ասաց. «Սա ո՞վ է» (Մատթ. 21.10):

Այսօր մարդիկ դեռ հետաքրքրված են Հիսուսով: Թեև մենք չենք կարող արմավենու ճյուղերով զարդարել Իր ճանապարհը կամ էլ անձնապես փառաբանության ձայներ բարձրացնել, սակայն կարող ենք Նրան պատվել: Մենք կարող ենք Նրա սքանչելի գործերի մասին խոսել, օգնել կարիք ունեցող մարդկանց, համբերությամբ նախատինք կրել ու իրար սիրել: Այն ժամանակ պատրաստ կլինենք պատասխան տալու նրանց, որոնք հարցնում են. «Ո՞վ է սա»:

**Աղոթք** - Տեր, իմ կյանքը ու իմ խոսքերը թող արտահայտեն, ինչ որ գիտեմ Քո մասին: Ուզում եմ, որ ուրիշները Քեզ տեսնեն ու ճանաչեն: Ամեն:

**Մենք Աստծո անունը պատվում ենք, երբ ապրում ենք իր զավակների նման:**

Կարդա՛

Ղուկաս 19. 28-40

Օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկող թագավորը: Ղուկ. 19.38

## Ողջ լինելու պարագան

**Վ**երջերս երբ կարդացի տնտեսություն մասին խորհուրդ տվող գրքեր, ուշադրությունս գրավեց հետաքրքրական մի բան: Տրված լավ խորհուրդների կողքին գրքերը նաև ակնարկում են, թե հիմնական պատճառը մեր առօրյա ծախսերը պակասեցնելու՝ վերջում միլիոնատերերի պես ապրելն է: Սակայն մի գիրք առաջարկում է թարմացնող նոր տեսակետ՝ մատնանշելով, թե ապրելը պարզապես հարուստ կյանք ունենալու համար է: Եթե ավելիի կարիք ունես կամ ավելի գրավիչ բաներով ես ցանկանում ուրախ լինել, գիրքը առաջարկում է, թե «Դու ողջ լինելու պարագան բոլորովին մոռանում ես»:

Այդ ներշնչող խոսքերը ինձ հիշեցրին Տեր Հիսուսի տված պատասխանը, երբ մի մարդ խնդրեց Հիսուսին ասել իր եղբորը, որ իր հետ բաժանի իրենց բաժին ժառանգությունը: Փոխանակ նրա հետ համակարծիք լինելու՝ Հիսուսը ճանապարհում է նրան սաստիկ հանդիմանելով, ու ազահություն մասին խոսելով՝ ավելացնում. «որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ...» (Դուկ. 12.15): Ապա նկարագրում է մի հարուստ մարդու ծրագրերը՝ իր բերքը հավաքելու, ուրախ լինելու և շույլ կյանքով ապրելու: Սակայն նրա կյանքը ունենում է ցավալի ավարտ, որովհետև ունեցած հարստությունը օգուտ չի տալիս, ու այդ գիշեր մահանում է (Հմ. 16-20): Թեև մեծ պատասխանատվություն ունենք մեր ունեցածները իմաստությունք գործածելու, Հիսուսի խոսքերը մեզ հուշում են նաև քննել մեր դրդապատճառները: Մեր սրտերը կենտրոնացած պիտի լինեն Աստծո թագավորությունը հետամուտ լինելու ջանքի վրա՝ նրան լավ ճանաչելու և ուրիշներին ծառայելու ու ոչ թե միայն մեր ապագան ապահովելու:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմք, որ ամեն բան առատ կերպով ես մեզ տալիս: Սովորեցրու մեզ ուրախանալ Քո տվածներով ու բաժանել ուրիշների հետ: Ամեն:

**Կարիք չունեք սպասելու հարուստ կյանք վայելելու Աստծո թագավորության մեջ:**

### Կարդա՛ր Դուկաս 12. 22-34

Տեսե՛ք և զգուշացե՛ք ազահությունից. որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ: Դուկ. 12.15

## Փառք անեցնողին

**Մ**ի օր մեր տան խճուղու աջ կողմում անակնկալ նկատեցի դեղին գույն ունեցող մի խուրձ: Վեց գեղեցիկ նարգիզների ցողուններ, երկու մեծ քարերի միջև բանտարկված, երկարել ու պայծառությամբ ծաղկել էին: Որովհետև ես ո՛չ ցանել, ո՛չ խնամել, ո՛չ էլ ջուր էի տվել նրանց, չկարողացա հասկանալ, թե ինչպես և ինչու էին այդ նարգիզները բուսանել մեր տան հողամասի վրա:

Աճող սերմի առակում Հիսուսը նկարագրում է հոգևոր աճման գեղեցիկ մի խորհուրդ: Նա համեմատում է Աստծո թագավորությունը հողագործի հետ, որ սերմ է ցանում (Մարկ. 4:26): Նա, ով սերմանում է այն, ինչ որ հարկավոր էր հողը մշակելու համար: Սակայն Հիսուսն ասում է, թե սերմերը ծիլ են տալիս, հոգ չէ թե մարդը քնում է կամ արթնանում, և կամ լավ է հասկանում սերմի աճելու ընթացքը (Հմ. 27-28): Հողի տերը վայելում է բերքի արդյունքը (Հմ. 29), թեև նրա զարգացումը, և թե ինչ է պատահում հողի տակ, կախված չէ իր արած գործից կամ էլ իր հասկացողությունից:

Տեր Հիսուսի պատմած առակում սերմերի աճը, բողբոջող նարգիզների նման, պատահում է Աստծո ժամանակի մեջ և Աստծո՝ աճում տվող զորություն պատճառով: Մենք պիտի նկատի ունենանք անձնական հոգևոր աճում և կամ Աստծո եկեղեցին ընդլայնելու ծրագիրը ու տարածելը մինչև Հիսուսի վերստին գալուստը: Տիրոջ խորհրդավոր միջոցները կախված չեն մեր կարողությունից կամ իր գործի մասին մեր ունեցած հասկացողությունից: Տակավին Աստված մեզ հրավիրում է հոգևոր աճման արդյունքները հավաքելով գիտենալ, ծառայել ու փառավորել Աճեցնողին, որ միակ մշակն է մեր մեջ ու մեր միջոցով:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմք, որ մեզ հոգևոր առունով անեցնում ես ու գործածում Քո ժողովրդին ծառայելու, մինչ Դու ընդարձակում ես Քո թագավորությունը: Ամեն:

**Աստված արժանի է փառաբանության՝ Իր ժողովրդի ու թագավորության աճման համար:**

Կարդա՛

Մարկոս 4. 26-29

Ուրեմն ո՛չ տնկողն է մի բան, ո՛չ էլ ջրողը. այլ Աստված, որ անեցնում է: Ա Կորնթ. 3.7

## Տե՛ս և լռի՛ր

**Մ**եքսիկացի երգահան Ռուբեն Սոթելոն իր գրած «Նրան նայիր» երգում նկարագրում է Հիսուսին խաչի վրա: Նա մեզ հրավիրում է Նրան նայելու և լուռ մնալու, որովհետև Նրա ցույց տված մեծ սերը խաչի վրա ասելիք չի թողնում: Հավատաքով մենք կարող ենք երևակայել Ավետարաններում նկարագրված տեսարանը՝ խաչը, արյունը, գամերը և Նրա կրած ցավը:

Երբ Հիսուսը իր վերջին շունչն առավ, «տեսարանը դիտելու համար էր եկել. եղած բաները տեսնելով, կուրծք էր ծեծում և հետ դառնում» (Ղուկ. 23.48): Ուրիշներն էլ «հեռվում կանգնած էին..., տեսնում էին այս բաները» (Հմ. 49): Նրանք դիտեցին ու լուռ մնացին: Միայն մեկը խոսեց, մի հարյուրապետ, որ ասաց. «Այս մարդը հիրավի՛ արդար էր» (Հմ. 47): Երգեր ու բանաստեղծություններ են գրվել՝ նկարագրելու այս մեծ սերը: Տարիներ առաջ Երեմիա մարգարեն գրեց Երուսաղեմի ցավի մասին նրա ավերումից հետո: «Զե՛ղ եմ ասում, ձե՛զ, ո՛վ անցորդներ» (Ողբ Եր. 1.12): Նա խնդրում էր մարդկանց, որ նայեն ու տեսնեն. նա մտածում էր, որ Երուսաղեմի ցավերից ավելի մեծը չկա: Սակայն արդյոք ավելի մեծ տառապանք կա՞, քան Տեր Հիսուսի կրածը: Բոլորս էլ խաչի ճանապարհով ենք անցնում: Պիտի նայե՞նք ու տեսնե՞նք իր սերը: Այս Հարուխյան տոնի առիթով, երբ խոսքերն ու բանաստեղծությունները բավարար չեն արտահայտելու մեր շնորհակալությունը ու նկարագրելու Աստծո սերը, մի պահ կանգ առնենք ու խոկանք Հիսուսի մահվան մասին ու մեր սրտի և հոգու այդ լուռության մեջ փսփսանք ու հայտնենք մեր նվիրումը Նրան:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, մինչ նայում եմ Քո խաչին, չունեմ արտասանելիք բառեր՝ շնորհակալությունս հայտնելու Քո արած կատարյալ զոհաբերության համար: Սակայն շնորհակալ եմ Քո սիրո համար: Ամեն:

**Նայիր խաչին ու պաշտիր խաչյալին:**

Կարդա՛

Ղուկաս 23. 44-49

...նայեցե՛ք, տեսե՛ք՝ ինձ հասած ցավերի ցման ցավեր եղե՞լ են արդյոք: Ողբ Եր. 1.12



## Սիրո կոնքը

**Տարիներ առաջ, մի օր, բնագիտություն դասաժամին մեր ուսուցիչը խնդրեց, որ առանց ետ դառնալու ասենք, թե ինչ գույն ունի դասարանի ետևի պատը: Մեզնից ոչ ոք չկարողացավ պատասխանել, որովհետև ուշադրություն չէինք դարձրել դրան:**

Երբեմն կյանքի որոշ պարագաներ անտեսում ենք պարզապես նրա համար, որ չենք յուրացնում ամեն ինչ: Ու երբեմն էլ չենք նկատում այն բաները, որոնք միշտ մեր շուրջ են եղել: Ես էլ ճիշտ այդպես էի, երբ վերջերս դարձյալ կարդացի Հիսուսի՝ Իր աշակերտների ոտքերը լվալու դեպքը: Պատմությունը ծանոթ է, որովհետև հաճախ է կարդացվում Հարություն Տոնի նախօրյակին՝ Տառապանքի շաբաթվա ընթացքում:

Մեր Փրկչի ու Թագավորի ծոելը Իր աշակերտների ոտքերը մաքրելու համար՝ մեզ զարմացնում է: Հիսուսի ժամանակ նույնիսկ հրեա սպասավորներն էին ազատ այս պարտականություննից, որովհետև իրենցից ցածր պարտականություն էր: Սակայն ինչ որ նախապես նկատի չէի ունեցել, այն էր, թե Հիսուսը, որպես կատարյալ մարդ ու Աստված, Հուդայի ոտքերը լվաց: Հակառակ նրան, որ Նա շատ լավ գիտեր, թե Հուդան Իրեն պիտի մատներ, ինչպես կարգում ենք Հովհաննու 13:11-ի մեջ, Նա տակավին ինքն է խոնարհվում և լվանում Հուդայի ոտքերը:

Կոնքի մեջ թափված սերը սեր է, որ Հիսուսը բաժանում է նույնիսկ նրա հետ, որ Իրեն պիտի դավաճաներ: Երբ մտածում ենք այս շաբաթվա մեջ պատահած դեպքերի մասին, որոնք տանում են մեզ մինչև Հիսուսի հրաշափառ հարությունը, թող մեզ էլ տրվի խոնարհության պարզևը, որպեսզի կարողանանք Հիսուսի սերը ցույց տալ մեր բարեկամներին, ինչպես նաև թշնամիներին:

**Աղոթք** - Տեր Հիսուս Քրիստոս, լցրու իմ սիրտը սիրով, որպեսզի Քո փառքի համար կարողանամ թևերս վեր քաշել և ուրիշների ոտքերը լվանալ: Ամեն:

**Հիսուսը սիրով խոնարհվեց և լվաց Իր աշակերտների ոտքերը:**

**Կարդա՛ր  
Յովհաննես 13. 1-17**

Յետո կոնքի մեջ ջուր լցրեց ու սկսեց աշակերտների ոտքերը լվանալ: Յովհ. 13.5

## Տառապանքի ճանապարհը

**Մ**ԻՐԲԸ շաբաթվա ընթացքում մենք հիշում ենք Հիսուսի վերջին օրերը՝ Իր խաչելությունից առաջ: Երուսաղեմի այն ճանապարհը, որ Հիսուսը քայլեց դեպի խաչ, մեզ ծանոթ է որպես Տառապանքի ճանապարհ:

Սակայն եբրայեցիս նամակի հեղինակը տեսավ, թե Հիսուսի բռնած ճանապարհը տառապանքի ճանապարհից ավելին է: Տառապանքի այդ ուղին, որ Հիսուսը հանձն առավ ու քայլեց դեպի Գողգոթա, վերածեց «նոր ու կենդանի ճանապարհի», որ տանում է մեզ դեպի Աստծո ներկայություն (Եբր. 10.20):

Դարեր շարունակ հրեա ժողովրդի համար Աստծո ներկայության միջոցը կենդանիներ զոհելն ու օրենքը պահելն էր: Սակայն օրենքը լուրջ «գալիք բարիքների շուքն է», որովհետև «անկարելի է, որ նոխազների և ցուլերի արյունը մեղքեր վերցնի» (Հմ. 1, 4):

Հիսուսի ուղևորությունը Տառապանքի ճանապարհի վրա առաջնորդեց Իրեն մահվան և ապա հարություն: Իր մատուցած զոհողությունով մենք կարող ենք սուրբ լինել, երբ Իրեն վստահենք մեր մեղքերի թողության համար: Թեև մենք չենք կարող օրենքը պահել կատարելապես, սակայն կարող ենք անվախ Աստծուն մոտենալ՝ ամբողջովին վստահելով, որ մենք ընդունված ու սիրված ենք (Հմ. 10, 22):

Քրիստոսի տառապանքի ճանապարհը մեզ համար բացված կյանքի նոր ուղի է դեպի Աստված:

**Աղոթք** - Տեր Զիսուս, շնորհակալ եմ, որ Դու քայլեցիր տառապանքի ճանապարհով ու մեզ համար Աստծո հետ հաշտության ճանապարհ բացեցիր: Ամեն:

**Քրիստոսի զոհաբերությունը Աստծո փափագն էր ու մեր մեղքերի համար եղած անհրաժեշտությունը:**

Կարդա՛ր  
Եբր. 10. 1-10

Որովհետև այն կամքով մենք սրբվեցինք Զիսուս Քրիստոսի մարմնի մեկ անգամ զոհվելով: Եբր. 10.10

## Թագավորի պսակը

**Մ**իզանի շուրջ նստեցինք՝ յուրաքանչյուրս մի ատամնափորիչ խրելով մեր առջև դրված շրջանաձև սպունգի մեջ: Մեծ պահքի օրերի մեր երեկոյան ընթրիքի ժամանակ մենք շինեցինք մի փշե պսակ: Յուրաքանչյուր ատամնափորիչ ներկայացնում էր այդ օրվա ընթացքում մեր արած սխալներից մեկը, որի համար մենք զղջում էինք ու հավատում, թե Հիսուսը Ինքը դրա հատուցումն արեց մեր փոխարեն: Ամեն երեկո մեր արած այս փորձը պարզում է, թե ինչու ենք մեր սխալ արարքներով հանցավոր, թե ինչու Փրկչի կարիքն ունենք: Եվ թե ինչպես է Հիսուսը մեզ ազատում Իր մահով խաչի վրա:

Փշե պսակը, որ Հիսուսի գլխին դրեցին, հոռմեացի զինվորների արած խաղի մի մասն էր Հիսուսի խաչելու թյունից առաջ: Նրանք նաև Նրան հագցրին որդան կարմիրից արքունական մի վերարկու և ձեռքը եղեգ տվեցին՝ որպես թագավորի գավազան, ծաղրեցին Նրան ու ասացին. «Ողջ՝ւյն, հրեաների՛ թագավոր» (Մատթ. 27.29): Նրանք արեցին այս բոլորը՝ առանց անդրադառնալու, թե իրենց արածները պիտի հիշվեն դարեր շարունակ: Նա սովորական թագավոր չէր: Նա Թագավորների Թագավորն էր, որի մահը և հարուժյունը մեզ հավիտենական կյանք են շնորհում:

Հարուժյան առավոտը մենք տոնում ենք ներումի և նոր կյանք ունենալու պարգևը, երբ ատամնափորիչների փոխարեն ծաղիկներ դնելով՝ այդ փշե պսակը փառաց պսակի ենք վերածում: Մենք ուրախանում ենք՝ գիտենալով, թե Աստված մեր մեղքերը մաքրել է, ազատութուն տվել ու Տեր Հիսուսի միջոցով՝ հավիտենական կյանք:

**Աղոթք** - Տեր Հիսուս, սիրտս ճնշվում է, երբ հիշում եմ Քո կրած ցավերը ու տառապանքը ինձ համար: Ծնորհակալ եմ Քո սիրո պարգևի համար, որ ինձ ազատ է արձակում: Ամեն:

**Փշե պսակը հիմա դարձել է կենաց պսակ:**

Կարդա՛

Մատթեոս 27. 27-31

Եվ փշերից մի պսակ ոլորեցին, նրա գլխին դրեցին: Մատթ. 27. 29

## Նյութերի ցանկ

- Աղոթք .....Հուն. 16, փետր. 22, մարտ 2,14  
Ապրել ուրիշ հավատացյալների հետ.....Փետր. 11, մարտ 13  
Աստվածաշնչի հեղինակութունը.....Փետր. 5, մարտի 9, 24  
Աստվածաշնչի սերտողութուն.....Մարտ 18  
Աստծու հոգածութունը..Հուն. 9,30, փետր. 12,21, մարտ 16  
Աստծու սերը.....Հուն. 13, 14, 20, փետր. 7, 14, 23, մարտ  
3, 18, 28, 29  
Աստծուն սպասել.....Հուն. 18  
Աստծու վարդապետութունը.....Հուն. 2, 21, փետ. 4  
Աստծուն վստահել....Հուն. 4, 9, 21, փետր. 12, 27, մարտ 10,  
12, 20, 21, 23  
Ավետարանչութուն.....Հուն. 17, մարտ 22  
Դրախտ.....Փետ. 9, 14, մարտ 7  
Երջանկութուն.....Հուն. 28  
Խորհրդատվութուն.....Մարտ 8  
Ծառայել.....Հուն. 10, 20, փետր. 2, 15, մարտ 15  
Կարեկցութուն.....Հուն. 23, փետր. 2, 9  
Կյանքի պայքարներ...Հուն. 19, 20, 22, փետ. 6, 22, մարտ 10  
Հալածանք.....Փետր. 18  
Համբերութուն.....Հուն. 18  
Հավատացյալների միութուն.....Հուն. 15, փետր. 11  
Հավատացյալների հարությունը.....Մարտ 7  
Հավատք.....Հուն. 29, փետր. 25, մարտ 6  
Հարաբերութուն.....Փետր. 9  
Հույս.....Հուն. 25, Փետր. 20  
Հեզութուն.....Հուն. 27, փետր. 8, մարտ 6, 29  
Հիվանդութուն դիմադրել.....Մարտ 23  
Հնազանդութուն.....Փետր. 17, 24, մարտ 9  
Հոգեկան այլափոխութուն.....Հուն. 5

Հոգևոր աճում.....	Հուն. 2, 22, մարտ 15, 27
Հպարտութիւն.....	Փետր. 8
Մահ.....	Մարտ 7
Մեղքերի թողութիւն.....	Հուն. 1, 8, 31, մարտ 31
Մեղք.....	Մարտ 7
Մենակութիւն.....	Մարտ 4
Մտահոգութիւն.....	Մարտ 1
Շնորհակալութիւն.....	Հուն. 11, 22
Պաշտամունք.....	Հուն. 3, 6, 24, 26, փետր. 6, մարտ 11
Սեր ուրիշների հանդեպ.....	Փետր. 7, 16, 23, մարտ 3, 26
Սուրբ Հոգի.....	Հուն. 19, մարտ 7
Ստեղծագործութիւն.....	Հուն. 3, 24
Վախ.....	Փետ. 18, 27, մարտ 21
Վիշտ.....	Փետր. 10
Տալ.....	Փետ. 19, 26, մարտ 5
Տանջանք.....	Հուն. 30, փետր. 10, մարտ 12, 16
Ցեղապաշտութիւն.....	Հուն. 15
Փորձութիւն.....	Փետր. 17
Փրկութիւն.....	Հուն. 29, փետ. 28
Քաջալերութիւն.....	Փետր. 13, մարտ 13, 17
Քրիստոս՝ անուն.....	Հուն. 7
Քրիստոս՝ ծնունդ.....	Հուն. 6
Քրիստոս՝ կյանք և ուսուցում.....	Մարտ 25
Քրիստոս՝ մահ.....	Փետր. 14, մարտ 28, 30
Քրիստոս՝ Հարութիւն.....	Մարտ 30
Քրիստոս՝ Փրկիչ(Մեսիա)....	Հուն. 4, 7, փետր. 1, 25, մարտ 31
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 12, փետր.15, 24
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 17, 27, փետր. 3, 20

## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անուանները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. (374) 94 52 75, 95 02 95

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

Հեռախոս.....

---